



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4783

4784

4785

9(47925)

9-73

1957 9

100

Printed in Turkey



ԳԱՍՏԳԻՒՔ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

967.385 Ա. Հ. Պ. Պ.

2 - 72 W —

Մասնակ և Հազար

ԿՐՈՒՇՆԱ և ԲՈՒԿԱՆՆ ՔՐԻՍՏՈՆԻ

1879


—ԹՀԶ—

ՀՐԱՄԱՆԱԿ

ՀՅՈՒՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՃԱՂՈՎՈՑ

ՄԿՐՏԻՉ Յ. ԶՈԼԱԳԵԱՆ

Գ. ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈԼԻՍ

ԴՈՐԾԱՐԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

4879

19340

Ա. Զ. Գ.

Աղդային Պատմութեան Դասադրքիս և բորդ
ապագըստթեանն առթիւ հարկ եղած կարեւու
փոփոխութիւններն ու վերջին յաւելուածներ
մտած ըլլալով լիայօյս ենք որ սոյն Դասադրք
Հայ մանկացին մեծապէս սկիտի օդտի իւր Աղդ.
ու Հայրենեաց նկատմամբ հարկ անհրաժեշտ
զած նախնական ծանօթութիւններն ու դադ
փարներն ստանալով և հետեւարդոր իւր Աղդ
Հայրենիքը սիրել ու յարդել և նոցու օդտին ու
հուցն իրապէս ծառայել սորվելով որով և ապա
դրութեանս հոգն ու աշխատութիւնն ստանձնու
իւր վարձքը լիովին ընդունած սկիտի համարի:



3075

390

ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ
ԲՆԱՀԱՆՈՒԽԻՐ ԳԻՏԵԼԻՔ

Հայոց Աղդը հրու հաղար երկու հարիսր քսան
միու տարուան Աղդ մ'է, և տառը դիմաւոր
ախոխութիւններ կը ելուն համար, նորա պատ.
ոթիւնն ալ տառը մասի կը բաժնուի. որք են
Մասն տառջին Հայկազունիք.
Մասն երկրորդ՝ Կուսակալը.
Մասն երրորդ՝ Արշակունիք.
Մասն չորրորդ՝ Մարզպանը և Կիւրապաղսաք:
Մասն Հինգերորդ՝ Պատրիկը և Ռատիկանը.
Մասն Շիսերորդ՝ Բաղրատունիք.
Մասն ետքերորդ՝ Ռուբինեանը.
Մասն ոթերորդ՝ Յունակալը.
Մասն իններորդ՝ Պատրիկը.
Մասն տասներորդ՝ Սահմանադրական վարչու-

ՄԱՄՆ Ա.

ՀԱՅԿՈԶՈՒՆԻՔ

Կիւրանց իշխանութիւնը՝ Մրիստուէ 2350

տարի առաջ սկսեց և 2020 տարի դիմանալով,
մեծն Աղեքսանդր Մակեդոնացւոյն ձեռքով վեր-
ջացաւ . Քրիստոսէ 330 տարի առաջ :

ՄԱՍՆ Բ.

ԿՈՒՑԱԿԱԾԱՔ

Աղեքսանդր Մակեդոնացի Հայաստանի տիրե-
լով, երբեմն Մակեդոնացի և Սելյուկիացի և եր-
բեմն ալ Հայ կուսականերով 180 տարի կառա-
վարելէն ետքը՝ Պարթեւաց Վաղարշակ թագա-
ւորին ձեռքով վերջացաւ . Քրիստոսէ 450 տարի
առաջ :

ՄԱՍՆ Գ.

ԱՐԵԱԿՈՒՆԻՔ

Վաղարշակ՝ Պարթեւաց թագաւորը Հայա-
տանէն կուսակաները վանտելով, Արշուկ՝ ի
եղբայրը թագաւոր դրաւ, որուն անուամբ Ա-
շակունեաց թագաւորութիւն կոչուեցաւ և 5
տարի դիմանալէն յեաոյ՝ Պարսից վաւամ թագ-
որին ձեռքով վերջացաւ . Քրիստոսի 433 թ
կանին :

Printed in Turkey

ՄԱՍՆ Գ.

ՄԱՐԶՊԱՆՔ ԵԽ ԿԻՒՐԱՊԱԼԱՏՔ

Վաւամ թագաւորը Հայաստանը նուաճելով, իր
կողմէն մարզպան մը դրաւ, երբեմն ալ Յոյնք
իրենց կողմէն Կիւրապաղատ անուամբ մէկը կը
խրկէին . այսպէս կառավարեցն վայսատան 250
տարի, մինչեւ որ Հագարացիք Հայաստան ար-
շաւելով, ամենքն ալ վանտեցին . Քրիստոսի 623
թուականին :

ՄԱՍՆ Ե.

ՈՍՏԻԿԱՆՔ ԵԽ ՊՈՏՐԻԿՔ

Հագարացիք Հայաստանը նուաճելով, իրենց
կողմէն Ուսիկան կը խաւրէին . երբեմն ալ Յոյնք
Հայոց հաւանութեամբը՝ Հայ իշխաններէն Պատ-
րիկ մը կը դնէին Հայաստանը կառավարելու .
ասանկով Պարսիկը և Յոյնք 166 տարի իշխեցին,
մինչեւ Աշոտ Բագրատունիին իշխանութիւնը .
Քրիստոսի 869 թուականին :

ՄԱՍՆ Զ.

ԲԱԴՐԱՏՈՒԽԵՔ

Աշուա Ա. Բաղրատունի նախարարաց ցեղէն ըլլալուն, ասոնց իշխանութիւնը Բաղրատունեաց թագաւորութիւն կոչուեցաւ և 222 տարի դիմանալէն յետոյ, Յաւաց ձեռքով կործանեցաւ. Թրիստոնի 1080 թուականին:

ՄԱՍՆ Է.

ԱՌԻԲԻՆԵԱԾՆՔ

Բաղրատունեանց թագաւորութիւնը դադրեւն տարի մը ետքը, Առուբէն անունով Բաղրատունի իշխանէ մը, Կիլիկիոյ մէջ Առուբէնան իշխանութիւնն սկսաւ և 295 տարի դիմանալով՝ Մէլք-էլ-էշրէֆ Շապան Լոդիզտոսի Սոլյմանին ձեռօք վերջացաւ. Թրիստոնի 1373 թուականին:

ՄԱՍՆ Ը.

ԲԻՆԱԿԱԼԵ

Առուբէնանք կործանիլին ետքը, Հայաստան

բանաւորներու տակ կը հեծէր 86 տարի, մէնչեւ որ Օսմանցիք, Կ. Պօլիսի առնելով, Հայոց Պատրիկաւթիւնը հաստատեցին. Թրիստոնի 1461 թուականին:

ՄԱՍՆ Թ.

ՊԱՏՐԻԿ

Թաթիկ; Առւլյան Մէհէմմէտ, Կ. Պօլսոյ տիրէլին եօթը տարի ետքը, Յովակիմ անուամբ եալիսկոպոս մը՝ Հայոց վրայ Պատրիկ դրաւ, և ալմուը հաստատեց ՚ի Կ. Պօլիս, իրեն վերապահելով՝ միայն Հայաստանի վիճուորական պահպանութիւնն ու տրոց հաւաքումը. այսպէս սկսաւ Պատրիկութիւնն և այս ընթացքով կը կառավարուէր Հայոց ազգը:

Բայց վերջերը Ամիրայք՝ զՊատրիկն, իրենց դործիք ընելով, ըստ կամաց ժողովուրդը հարբատահարել սկսան, և այն աստիճան ճնշեցին զայն, որ ալ չկրնալով համբերել, Բ. Գոնէն Ամիրայք՝ ազգային գործոց չմիջամտելու և աղդային իրաւանց անթերի պահպանութեանը համար, խմբադրեալ կանոնադրի մը վաւերացումը խնդրեց, և ընդունեցաւ, որով՝ վերջացաւ Պատ-

ըրիաց և Ամերոյից 499 տարի միապետաբար վա-
րած իշխանութիւննին, Քրիստոսի 1860 թուա-
կանին :

ՀՅԱՅԹ

ՄԱՍՆ Ժ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Բ. Դուռը՝ Սահմանադրութիւնը վաւերացնե-
լով, ժողովուրդն իսր իրաւանց տէրն ըրաւ ընդ-
հանուր և վարչական ժողովներ կազմելով, Ամե-
րայից բռնութիւններն ալ ջնջուեցան և սկսաւ
ժողովրդային վեհապետութիւնը, որուն գոր-
ծադրութիւնը 19 տարի եղաւ. Քրիստոսի 1879
թուականին :

~~~~~

ԱԶԳԱՅԻՆ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԴԱՍԱԳԻՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՅԿԱԳՈՒԽՉ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՅԿԱՆ ՄԻՆՉԵԿ ԱՐԱՄ

2350 — 1300

- Հ. ՀԱՅՈՅ տէրութիւնն ե՞րբ կը սկսի,
- Պ. Զրհեղեղին քիչ մը վերջը :
- Հ. Ինչո՞ւ համար Հայ կ'ըսուինք,
- Պ. Մեր տէրութիւնը կանգնող գիւցաղնին ա-  
նունը Հայկ ըլլալուն համար :
- Հ. Ով եր Հայկ,
- Պ. Նոյ նահապեախն Յաբէթ որդիէն սերած  
կտրին մը. Յաբէթին տղան Գամեր, Գամէրին

աղման թուրքամ, Թորդովին աղման Հայկ, որ Բէ-  
լին հետ պատերազմնեցաւ :

Հ. Բէլ եր Բէլ.

Պ. Աշտարակը շինողներուն մէջն՝ հսկայ մը,  
որ մարդոցմէ իրբե Աստուած պաշտուիլկ'ուզէր:

Հ. Աշտարակն ինչո՞ւ կը շինելին :

Պ. Նոյայ որդիքը շատնալով մեծ բաղմութիւն  
մալլենաար ըստած դաշնն եկան, ու հոն երկ-  
րորդ ջրհեղեղէ մ' աղատ ըլլալու համար՝ Աս-  
տուածոյ գիմ ամբարտաւանութեամբ աշտարակ  
մը սկսան կառուցանել :

Հ. Կրցան ՚ի ոլուխ հանել աշտարակաշինու-  
թիւնց :

Պ. Աստուած՝ փոթորկով մ' աշտարակը կոր-  
ծանեց և շինողներ մն լեզուն խառնակեց. այս  
խառնակութեան ատեն, Բէլ ուզեց ամենուն վրայ  
բռնանալ, բայց Հայկ չուզելով անոր հնազան-  
դիլ, առաւ իւր որդիքը, թոռունքը և ծառա-  
ները, որոնք 300 ի չափ էին, ու իւր հայրենի  
երկիրը դարձաւ :

Հ. Բէլ երբոր Հայկայ ոյս ըրածը լսեց, ի՞նչ  
ըրաւ :

Պ. Մարդ դրկեց որ դայ իրեն հնազանդի.  
ապա թէ ոչ զինքն իւր որդիներով կը մեռցը-  
նեմ ըստաւ :

Հ. Հայկ ի՞նչ պատահիան տուաւ :

Պ. Բէլայ դրկած մարդը ետ դառձուց, և նո-  
յայ ճշմարիտ Աստուածոյն վրայ վստահացած՝ պա-  
տերազմի պատրաստուեցաւ վանայ ծովուն եւ  
դերքը :

Հ. Ի՞նչ կերպով պատերազմնեցան Հայկ ու Բէլ:

Պ. Բէլ յանդդնութեամբ իւր անթիւ զօրքերէն  
մաս մ' առնելով եկաւ Հայկայ վրայ, և երբ յաղ-  
թուելով ետ կը դառնար բանսկէն օդնութիւն  
առնելու. Հայկ մէկէն քաշեց իր աղեղը, դար-  
կաւ և սպաննեց այն ամբարտաւան հսկայն :

Հ. Հայկ ի՞նչ ըրաւ Բէլին դիսկը :

Պ. Զմռսել տալով՝ տարաւ իւր բնակած եր-  
կիրը, և ՚ի յիշտատակ իւր յաղթութեան և ՚ի տես  
ամննեցուն՝ բարձր բրի մը վրայ թաղեց :

Հ. Հայկ՝ Բէլն սպաննելէն յետոյ ի՞նչ ըրաւ :

Պ. Ետա քաղաքներ շինեց, անոնց մէջ բարե-  
կարդութիւններ և կանոններ հաստատեց, և 400  
տարիի շոփ իւր սերունդը խաղաղութեամբ կա-  
ռավարելէն յետոյ մեռաւ. իշխանութիւնն իւր  
Արմենակ որդւոյն յանձննելով :

Հ. Այս միջոցիս ի՞նչ դէպք պատահեցաւ :

Պ. Նոյ նահապետ, Բէլ ամբարտաւան հսկո-  
յին աշխարհիս երեսէն վերնալը տեսնելով բո-  
հութեամբ մեռաւ 950 տարուան, և թաղուե-  
ցաւ նպատ լեռան վրայ. Նոյնովէս Նոյեմզարա  
Նոյաց կինն ալ, Մարանդ դուառը :

Հ. Արմենակի ի՞նչպէս կառավարեց :

Պ. Հայրենի երկրին մէջ թողուց իր Խոռ. և Մանաւազ եղբարքը, որոնց ցեղը շատնալով Խոր-խոռունիկ և Մանաւազեանք ըսուեցան : Ինքն Ա-րեւելեան կողմերն երթալով հոն տեղուանքը շեն-ցուց : Իրեն յաջորդեց Արտմայիս :

Հ. Արամայիս ի՞նչ ըրաւ :

Պ. Արմասիր քաղաքը շինեց Երասխ գետին քով : Սոոր Բաղ եղբօքը ցեղը Ետքները շատնալով իր անուամբը Բանունիք կոչուեցան :

Հ. Արամայիսի ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Ամասիա, իւր անուամբը Մասիս անուանեց Արարատ լեռը, և իւր եղբայրներէն մին Շարան Հայաստանի բարեթեր մէկ կողմը դրկեց, և այն տեղ Շարայի անուամբը Շիրակ կոչուեցաւ :

Հ. Շարայի վրայ ի՞նչ դիտելիք կայ :

Պ. Շարայի խիստ շատակեր ըլլալուն՝ մինչեւ մօտ ատեններս առակ եղած էր երրոր շատակեր մէկը տեսնէին՝ կըսէին . «Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակսց ամբարքն չեն» :

Հ. Ամասիային ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Գեղամ, որ Սեւան կղզւոյն քով Բնակելով այն տեղուանքը Գեղարքունիք կամ Գեղամայ ծով ըսուեցաւ, և որուն եղբարքը Փառուիս և Ցոլակ իրենց անուամբը Փառախոտ և Ցոլակերտ քաղաքները հիմնեցին, և Միսակ Գեղ-

ղամայ որդին՝ իր քաղցր նայուաճքին համար Ա-ղու կոչուեցաւ, և իւր բնակած տեղին ալ Սի-սական կամ Ախնիք անունը կուտային :

Հ. Գեղամայ ո՞վ յաջորդեց :

Պ. Հարմայ իր որդին . ասոր օրովը Հայոց մեր ձակայ աղդերը զօրանալով սկսած էին Հայաստանի վրայ արշաւել. վասն զի Հայկայ և անող որդւոցը քաջութիւնները մոռցուեր էին. ուստի Հայաստան Հայկի նման քաջի մը կը կարօտէլ թշնամինները վոնտելու և հայրենիքն ազատելու համար . և ահա այն կտրիճը, այն քաջը՝ Արամ եղաւ :

## ԳԼՈՒԽ Բ.

ԱՐԱՄԻՆ ՄԻՆՉԵԿ ՊԱՐՈՅ

1300 — 640

Հ. Ո՞վ Էր Արամ:

Պ. Հարմայի որդին, որ խիստ քաջ ըլլալուն Հայաստանն ապառեց թշնամեաց ձեռքէն :

Հ. Որո՞նք էին Հայաստանի թշնամինները :

Պ. Նիւքար՝ Մարաց իշխանը. Բարձամ՝ Բարե-յացւոց իշխոնդ՝ և Պայտաղիո՛ Կապտժոմիկիոյ իշխանը :

Հ. Արամի ինչպէս յաղթեց իր թշնամիներուն:

Պ. Նիւքեարը նախ բռնեց և աշտարակի մը ծայրէն գամել տուաւ . Բարշամն ալ սպաննեց . իսկ Պայտադիս՝ յաղթուելով փախու . Միջերկրական ծովուն կղզիներէն մէկը: Արամ անոր երկիրներուն տիրելով փոքր Հայկ անուանեց , և Մշակ անունով իշխան մը կուսակալ դրաւ հոնու ապսպրեց որ Հայերէն խօսին: Մշակայ բնակած տեղը Մաժակ կոչուեցաւ , որ է Գայսէրի:

Հ. Արամ ուբիշ ինչե՞ր ըրտաւ :

Պ. Իր քաջութեամին ու խոհեմութեամբը բուլը աղգաց սիրտը վախ ձգեց և ամենուն պատշաճուելի եղաւ : Ասորեստոնի թագաւորն Նինո՛ Խմանալով պատմաւթենէն որ Հայկ զբէլ խր նաւիահայրը՝ սպաններ է , կուզեր վրէժ առնել . բայց վախնալով Մքանայ քաջութիւններէն՝ բարեկամութիւնը ստոնալու . համար՝ մարդարտազարդ պահի մը խաւրեց և իրեն երկրորդն անուաննեց Արամը :

Հ. Արամ որչափ առեն իշխաց :

Պ. Յիսուն և ութ տարի իշխանով ընդարձակեց Հայաստանը , և իր համբաւն այնքան տարածուեցաւ որ օտար աղգերն սկսմ մեր աղգը Արմէն կամ իրմէնի կոչել :

Հ. Արամին ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Արայ , որոյ ոեղեցկութեանը հա-

մար Ասորեստանի թագուհին՝ Շամիրամ ուղեց հետք կարգուիլ . բայց Արայ յանձն չառնելուն թշնամացաւ Շամիրամ և պատերազմի ելաւ :

Հ. Պատերազմի վերջն ի՞նչպէս եղաւ :

Պ. Արայ քաջութեամբ պատերազմելով պատերազմին տաքցած միջոցին մեռաւ , և հաւնելով Շամիրամ մեր երկրին պիրքին և օդին մաքրութեանը՝ քաղաք մը շինել տուաւ . ումառը բնակելու համար և անունը Շամիրամակերտ դրաւ , և որ վերջերը վան ըստեցաւ . ոյս քաղաքը մինչեւ հիմայ կայ և իր պարիսխները կանգուն կեցած են :

Հ. Արայի ո՞վ յաջորդեց :

Պ. Արայի մահուանին ետքը , Շամիրամայ ձեռոք , Հայաստանի իշխան դրուեցաւ Արայի կարգոս որդին , որ Շամիրամայ հետ Նինուասայ դէմ պատերազմած առեննին երկուոյն ալ մեռան :

Հ. Կարդոսին ո՞վ յաջորդեց :

Պ. Անուշտաւն որդին . ասի թէպէտ գերի եր Նինուասայ քով , բայց իր քաղցրաբարոյութեամին ալատելով եկաւ տիրեց իր հոյրենեացը , և երկար ատեն Ազդը կառավարելէն և շատ բարեկարդութիւն ընելէն յետոյ , մեռաւ առանց զաւակի ունենալու : Իրեն յաջորդեց Պարետ մատուցի Հայկազուն իշխանը :

Հ. Ով իր Պարետ :

Պ. Հայկայ միւս որդւոց ցեղերէն լված անւանի ու կորովի անձ մը, որ Անուշաւանին տեղը Նահապետ դրուեցաւ, և շատ քաջութիւններ ընելով և իշխանութիւնն Աբբակին յանձնելով մեռաւ:

Հ. Ա՞վ յաջորդեց Աբբակին:

Պ. Զաւան, Զաւանին՝ Փառնակ, և Փառնակին՝ Սուլ:

Հ. Սուրայ ատեն ի՞նչ երեւելի դէպք պատահեց աւ:

Պ. Սուր՝ թշնամեայ դէմ երեւելի յաղթութիւններ ընելուն համար այս անունն ստացաւ: Ասոր օրով Քանանացիք Յէսուէն յաղթուելով, ոմանք Հայաստան եկան, որոնցմէ Գնդունեաց նախարարութիւնը ձեւացաւ:

Հ. Սուրայ ո՞վ յաջորդեց:

Պ. Հաւանակ, Հաւանակին՝ Վաշտակ, և Վաշտակին՝ Հայկակ Ա. որ Ասորւոց Ամինէթէս թագաւորին յաղթեց, բայց անոր յոջորդէն յաղթուելով մեռաւ: Իրեն յաջորդեց Ամրակ Ա:

Հ. Ամրակին որո՞նք յաջորդեցին:

Պ. Ամրակին յաջորդեցին հետզհետէ Առնակ, Շաւարչ Ա. Նորայր, Վաստամ, Կար, Գոռնակ, Հրանտ, Ընձակ, Գուսակ և Հօրոյ, որոց վրայ գիտելիք մը չունինք:

Հ. Հըմոյի ո՞վ յաջորդեց:

Պ. Զարմայր քաջ և հզօր իշխանը, որ Ցրոյացւոց օղնութեան դնաց, և պատերազմի մէջ շատ քաջութիւններ ընելէն յետոյ՝ զարնուեցաւ մեռաւ: Իրեն յաջորդեց Պերճ Ա:

Հ. Ի՞նչ դործ կը պատմուի Պերճի վրայ:

Պ. Խիստ քաջ և հզօր անձ մ'էր, բոլոր Հայաստանի տիրեց, շատ զօրք գումարելով նոր զինուորական կարգեր դրաւ, և շատ աղդեր նուածելէն ետքը մեռաւ: Իրեն յաջորդ թողլով Աբրուն իշխանը:

Հ. Արբունի վրայ գիտելիք մը կա՞յ:

Պ. Պատմութիւնն Աբբունի վրայ բան մը շաւանդեր: Ասոր կը յաջորդէն Պերճ Բ. Բաղուկ, Հոյ, Յուսակ, Ամրակ Բ, Կայազակ, Փառնաւաղ Ա. Փառնակ Բ. Սկայորդի:

Հ. Սկայորդին օրովն ի՞նչ պատահած է:

Պ. Ասորեստանի Սինեքերիմ թագաւորին որդէրը՝ Աղբամելէք և Սանասար իրենց հայրն սպաննելով Հայաստան փախան: ասոնցմէ ձեւացան Աղծրունեաց և Գնունեաց նախարարութիւնները:

ԳԼՈՒԽ Գ.

ՊԱՐԱՅԻՆ

ՄԻՆՉԵԿ ՀԱՅԿԱԾԱՆՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ  
ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

640—330

Հ. Սկայորդին ո՞վ յաջորդեց :

Պ. Պարոյր իր որդին, որ Մարաց Վարբակէս Եշխանին հետ միացած՝ Ասորւց Մարդանալազ թագաւորին յաջթեցին. Վարբակէս Ասորեստանի Եշխան, և Պարոյրն ալ թագաւոր պատկեց Հայաստանի :

Հ. Պարոյրին օրո՞նք յաջորդեցին :

Պ. Պարոյրին յաջորդեցին Հետպհետէ՛ Հրաչեայ, Փառնաւաղ Բ. Պաճոյճ, Կոռնակ, Փաւոս :

Հ. Փաւոսին ո՞վ յաջորդեց :

Պ. Հայկակ Բ. որ Նարուգողաննոսոր թագաւորին հետ միացած՝ Երուսաղէմն առին, և վերադարձին Հայկակ՝ Շամբաւառ անունով Հըեռյ Եշխան մը Հայաստան բերաւ, յորմէ սերեցաւ Բագրատունաց նախարարութիւնը :

Հ. Հայկակին ո՞վ յաջորդեց :

Պ. Իւր որդին Երուանդ Ա. որ չորս տարի թագաւորէին եւարք մեռաւ՝ իրին յաջորդ ձդիլով

Տիգրան Ա. ը, որ Հայկաղանց ամենէն երեւելի և ամենէն զօրաւոր թագաւորն եղաւ :

Հ. Տիգրան ի՞նչ քաջադործութիւններ ըրաւ :

Պ. Տիգրան Հայաստանի առաջին սահմանները նորոգեց, և իր թշնամիները ջնջեց Երկրիս երեսէն, որոնց գլխաւորն և ամենէն զօրաւորն էր Աժդահակ :

Հ. Ո՞վ էր Աժդահակ :

Պ Մարաց թագաւորն և Տիգրանայ բարեկամը, ասի լսելով որ Տիգրան, կիւրո՞ Պարսից թագաւորին հետ բարեկամութիւն կրնէ, հետը թշնամոցաւ, և որովհետեւ դէմ առ դէմ պատերազմելու կերկնչէր, ուստի մտածեց խարդախութեամբ Տիգրանը բռնել և սպաննել :

Հ. Աժդահակ կըցաւ իւր խորհուրդն յառաջտանիլ :

Պ. Տիգրանայ Տիգրանուհի քոյրն իրեն կին առաւ, և անոր յայտնեց իւր նպատակը. Տիգրանուհի Աժդահակայ խորհրդին հաւանիլ կեղծելով դազտ ամէն բան իր եղրօնն խմացուց :

Հ. Տիգրան ի՞նչ խոհեմութիւն բանեցուց այս դործին մէջ :

Պ. Տիգրան այս լուրն առնելուն պէս թէպէտեւ անսիջապէս պատերազմի պատրաստուեցաւ, բայց իւր Տիգրանուհի քոյրն աղատելու համար պատերազմն աշացուց, որով Տիգրանուհի յարիսը

ատեն դանելով փախաւ, և կիւրոս ալ Տիգրա-  
նին օգնութեան հասաւ:

Հ. Պատերազմն ի՞նչպէս եղաւ:

Պ. Երբ կիւրոս իւր զօրքովը հասաւ՝ Տիգրան  
Աժդահակայ դէմն ելաւ, և պատերազմին տաք-  
ցած միջոցին՝ Տիգրան Աժդահակին հանդիսելով  
զարկաւ սպաննեց, և պատերազմը լմացաւ:

Հ. Տիգրան Աժդահակայ ընտանիքը ի՞նչ ըրաւ:

Պ. Ամենքն ալ գերի ընելով՝ առաւ հետը Հա-  
յաստան բերաւ. որոնցմէ սերեցան Վիշապաղունք  
կամ Մուրացան ըսուած ցեղը, և Տիգրանուհի  
քոյրն ալ, Տիգրանակերտի մէջ ընակեցաւց, յորմէ  
սերեցան Ռստանիկ ըսուած աղաս ցեղը:

Հ. Տիգրան ո՞րչափ ատեն թաղաւորեց:

Պ. Քառասուն եւ հինգ տարի, քաջութեամբ  
խոհեմութեամբ, արդարութեամբ եւ խաղաղու-  
թեամբ թաղաւորելէն յետոյ՝ մեռաւ. թողով  
թաղաւորութիւնը իւր Վահագն որդւոյն:

Հ. Վահագնի վրայ ի՞նչ դիտելիք կայ:

Պ. Խիատ քաջ ըլլալուն համար՝ շատ առասպել-  
ներ զրուցեցին վրան, եւ Վրացիք ալ զինքը եր-  
կար ատեն սպատեցին: Վահագնի ցեղը Վահա-  
նիք ըսուեցան:

Հ. Վահագնի ո՞վ յաջորդեց:

Պ. Հետզիետէ յաջորդեցին Առաւան, Ներսէն,  
Շահում, Արշամ եւ վան, որ Շամիրամա-

կերտ քաղաքը նորոգելով՝ վան կոչեց իր անուամբը:  
Հ. Վանայ յաջորդն ո՞վ եղաւ:

Պ. Վահէ. ասի Դարեհ. Պարսից թաղաւորին  
օդնութեան գնաց, որ Աղէքսանդր Մակեդոնացի  
թաղաւորին դէմ կը պատերազմէր. Վահէ խր  
Հայկաղուն կարիճ բանակովը շատ քաջութիւններ  
ընելէն յետոյ՝ պատերազմին մէջ զարնուեցաւ  
մեռաւ, եւ Թրիստոնէ 330 տարի առաջ՝ որով  
վերջացաւ. Հայկաղանց հարստութիւնը 2020 տարի  
դիմանալէն ետքը:

Պ. ԵԲԶ Ա.Ա.ԶԻՒՆ ՄԱՍԻՆ



## ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ

### ԿՈՒՍԱԿԱԼ Է

ԳԼՈՒԽ Ա.

Վ.Ա.ՀԵՒՆ ՄԱ.ՀՈՒԱՆԻՆ

ՄԻԱՉԵԼ ԱՐԵԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԿԻԶԲԸ

330—150

Հ. Վահէին մահուանէն վերջը՝ Հայաստանի վի-  
ճակն ի նշ եղաւ:

Պ. Վահէի մեռնելէն յետոյ Հայաստան Մակե-  
դոնացւոց իշխանութեան տակն ինկաւ, եւ երգ

բեմն Մակեդոնացի ու երբեմն Հայ իշխաններով  
կը կառավարուէր :

Հ. Ո՞վ եղաւ առաջին Մակեդոնացի իշխանը :

Պ. Միհրան՝ որ հինգ տարի կառավարելով ետ  
կանչուեցաւ, ասոր յաջորդեց Նէոպտղոմէոս չար  
և Հայատեաց իշխանը, որ Հայոց հետ աղէկ չը  
վարուելուն համար, Ազուարդ՝ Հայկալուն քաջ  
իշխանը վրնտեց զայն և ինքն սկսու կառավա-  
րել. ասի 33 տարի խաղաղութեամբ իշխելն  
յետոյ մեռաւ :

Հ. Ո՞վ յաջորդեց Ազուարդին :

Պ. Հետզհետէ իշխեցին Հրամատ, Արտաւազ,  
Զահրատ և Սրտաշիան՝ որն որ իր անուամբը  
Արտաշատ քաղաքը շինեց. ասոնցմէ վերջը քանի  
մը թաղաւորներ ալնստան՝ Քրիստոսէ 130 տարի  
տուած որոնց պատմութիւնը շփոթ է, և վերջա-  
ցաւ կուսակալաց իշխանութիւնը 180 տարի գի-  
մանալէն ետքը :

ԱԵԲԶ ԵՐԻԹՈՒԹԻ ՄԱՍԻՆ

## ՄԱՍԻ ԵՐԻԹՈՒԹԻ ԱՐՑԱԿՈՒՆԻՒՔ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՅԱՐՁԱԿԵՆ ՄԻՆՉԵԽ ԱԲԳԱՐ

130 — 3

Հ. Ո՞վ էին Արշակունիք :

Պ. Պարթևեաց աղդէն Արշակ անունով կտրիձ  
մ' իր աղդին վրայ թաղաւոր եղաւ. նորա թոռը  
խիստ քաջ և զօրաւոր ըլլալուն՝ թագաւորութիւնն  
ընդարձակեց, Հայատունն ալ նուածեց իր եղ-  
բայրը՝ Վաղարշակը՝ թաղաւոր գրաւ և աթուը  
Մծրին հստատեց :

Հ. Վաղարշակայ առաջին գործն ի՞նչ եղաւ :

Պ. Վաղարշակ արդարասէր, խոհեմ և խմա-  
տուն անձ մ' ըլլալուն և Հայերը շատ սիրելուն,  
նախ ուզեց իմանսալ թէ Հայոց աղդն ու Հայա-  
տան գտնուող նախարարներն ուսկից յառաջ  
եկած են, և անոնց պատմութիւնն ի՞նչ է :

Հ. Վաղարշակ Հայոց պատմութիւնը գտա՞ւ :

Պ. Մար - Աքաս Վկատինա անունով Ասորի մը  
նինուէ առաքեց, որ հոն գրատան մէջէն Հայոց  
պատմութիւնը գտնելով բերաւ Հայատան :

Հ. Վաղարշակ ուզիչ ի՞նչ ըրաւ :

Պ. Վաղարշակ, Հայոց գլխաւոր թշնամին՝ Մոր-  
քիւղիկէսը բռնելով սպաննեց. և արքունեաց մէջ  
նորանոր օրէնքներ և բարեկարգութիւններ հաս-  
տատելէն յետոյ՝ 22 տարի թագաւորելով մեռաւ:

Հ. Վաղարշակին ովլ յաջորդեց:

Պ. Արշակ Ա. իւր որդին, որ իւր հօրը նման  
քաջութեամբ երեւելի եղաւ. Պօնտացիները նուա-  
ճեց, և 'ի նշան յաղթութեան կոթող մը տնկեց  
ծովուն եզերքը ու նիզակով զարկաւ ծակեց քա-  
րը. Բագրատունիներուն աղ բաւական նեղութիւն-  
ներ տուաւ որ հրէական կրօնքը թողուն, և 43  
տարի թագաւորելով մեռաւ:

Հ. Արշակ Ա. ին ովլ յաջորդեց:

Պ. Արտաշէս Ա., որ Յունաստանի և վոքք Ա-  
սիոյ տիրեց. և Պարսից թագաւորն՝ որ ինչուան  
այն տաեն պատուով առաջին էր, իրեն երկ-  
րորդն ըրաւ. և իր անուամբն ստակ կոխեց.  
Իւր Արտաշամա աղջիկը Միհրդատին տուաւ որ  
զբաց բդեշին էր:

Հ. Արտաշիսի զօրացը վրայ ինչ կը պատմուի:

Պ. Երբոր ամենքը միտրան նետ ձգեխն արեւը  
կը խարանէր, և եթէ մէկ մէկ քար նետէին՝  
ըլուր մը կը ձեւանար: Արտաշէս երբ կը պատ-  
րաստուէր Երոպա անցնել անհամար զօրքով.  
ինքն ալ սպաննուեցաւ իւր զօրքերէն՝ 25 տարի  
թագաւորելէ ետքը:

Հ. Ո՞վ յաջորդեց Արտաշիսի:

Պ. Որդին Տիգրան Բ. որ արդէն հօրը կեն-  
դանութեան ատեն 2 տարի թագաւորած էր.  
սա՝ նախ Յոյները նուաճեց որ ապստամբած էին,  
և իւր Միհրդաս քեռայրը իրեն փոխանորդ դրաւ.  
յետոյ Ասորւոց երկրին տիրելով Պաղեստինի վրայ  
դնաց, բայց Հրէից՝ Աղէքսանդր դժխոյն շատ ըն-  
ծաներ տալով Տիգրանին սիրտն առաւ և խա-  
ղաղութեամբ ետ դարձուց:

Հ. Տիգրանայ վրայ ուրիշ ինչ դիտելիք կայ:

Պ. Եատ մեհեաններ շինել տուաւ և Յունա-  
տանէն բերած կուռքերն անոնց մէջ դնելով  
քուրմեր հաստատեց, և իւր անզուդական քա-  
ջութեամբը նոյն իսկ Հռովմայեցւոց մէջ մեծ  
համբաւ ստացաւ:

Հ. Ի՞նչ պատճառաւ թշնամացան Հայք Հռով-  
մայեցւոց հետ:

Պ. Միհրդատ՝ Տիգրանայ քնուայրը՝ Կապաթով  
կիոյ իշխելով իր Արիարաթ որդին անոնց վրայ  
թագաւոր դրաւ. Հռովմայեցիք ալ Կապաթով  
կիացւոց օդնութեան զրկեցին Սիլլա քաջ զօրա-  
սպետը՝ որ եկաւ Արիարաթը վճնտեց և Արիա-  
րաթը կապաթովկացին թագաւոր դրաւ. Միհր-  
դատ Տիգրանէն օդնութիւն առնելով Հռովմա-  
յեցիները վընտեց և նորէն Արէարաթը թագա-  
ւոր դրաւ:

Հ. Հոռվիմայեցիք այս բնելով ի նշ ըրբն :

Պ. Այլ և այլ զօրապետներ խաւրեցին, որոնց շատ անդամ յաղթեց Մէհրդատ, և Ակիւզաս զօրապետն ըերնէն վար հայած ոսկի լիցնելով սպաննեց . բայց երբ տեսաւ իւր Փառնակէս որդույն անսնց կողմն անցնիլը՝ յուսահատելով ինքինքն սպաննեց :

Հ. Տիգրան Մէհրդատայ մահը լոելով ի նշ ըրբաւ :

Պ. Ցնսնելով Հոռվիմայեցւոց յարձակումներն առաջնութիւնը Պարսից Արշակ թագաւորին տուաւ որ իրեն օդնէ . և որովհետեւ ինքը բաւական ծերացած էր՝ Հայ և Պարսիկ բանակին ընդհանուր սպարապետ կարգեց Բարզափրան քաջ Հայ նախարարը :

Հ. Բարզափրան ի նշ քաջութիւններ ըրաւ ,

Պ. Բոլոր Ասորւոց երկրին տիրեց, վարպետութեամբ Երուսաղման ալ առաւ Հոռվիմայեցւոց ձեռքէն . Տիգրան այս փառաւոր յաղթութիւնները տեսնելով ուրախութեամբ մեռաւ 85 տարի ապրելէն և Յետ տարի թագաւորելէն յետոյ :

Հ. Ով յաջորդեց Տիգրանն :

Պ. Իր Արտաւազդ որդին, որ ինքինքը բոլորին կերուխումի տուաւ, որով Անառնիսու Հոռվիմայեցւոց զօրավարը բոլոր Ասորւոց երկրին տիրեց և Արաւարդին ալ խարէութեամբ բռնելով Եղիսպոտ տարաւ՝ խօստմանը հակառակ, Պար-

սից թաղաւորին օգնելուն համար որ հաղիւ 3 տարի թաղաւորած էր :

Հ. Արտաւազդին ո՞վ յաջորդեց :

Պ. Հայաստան և տարւոյ չափ Հոռվիմայեցւոց իշխանութեան տակ մնալէն ետքը, Տիգրանին եղբարօր որդին՝ Արշամ թաղաւորեց Հայոց . և աւելի խաղաղասէր ըլլալուն Հոռվիմայեցւոց հարկատու եղաւ, և 29 տարի թաղաւորելէն յետոյ մեռաւ :

### Ն Ե Շ Թ Ե Տ Ա

#### Գ Լ Ո Ւ Խ Բ .

ԱՐԴԱՐԵԿՆ ՄԻՆՉԵԽ ՏՐԴԱԾ Ա.

3 — 286

Հ. Արշամայ յաջորդն ո՞վ եղաւ :

Պ. Արգար իր որդին . ասի խաղաղասէր անձ մ' ըլլալուն իր թաղաւորութեամնը երրորդ տարին՝ Հայաստան բոլորովին Հոռվիմայեցւոց հարկատու եղաւ, և Օգոստոս կայսեր պատկերը Հայոց մեհեաններուն մէջ կախուիլ սկսաւ թէպէտ Հերովդէս՝ Հրէից թագաւորին ալ ամբարտաւանութեամբ ուղեց որ իր պատկերն ալ Հայոց մեհեաններուն մէջ կախուի, բայց Արգար յանձն չառնելով պատերազմի ելաւ և յաղթեց Հերովդէսին :

Հ. Արդար ինչո՞ւ ապստամբիլ ուզեց Հռով-  
մայեցողմէ :

Պ. Վասնզի խնդակցութեան համար գայած  
Հայ դեսպանները անարդուեր էին . ուստի ա-  
թոռը Եղեսիա փոխադրեց և սկսաւ ամրացնել  
զայն . բայց նոյն օրերը Արտաշիր Պարսից թա-  
դաւորը մեռնելով անոր որդւոցը մէջ ծագած  
խռովութիւնը խաղաղեցնելու համար Պարսկաս-  
տան դնաց , և վերադարձաւ սաստիկ բորոտու-  
թենէ մը բոնուած :

Հ. Արդար ի՞նչպէս բժշկուեցաւ :

Պ. Բժիշկներուն ճարտարութիւնը ովնչ օդտեց,  
և որովհետեւ Պարսկաստան երթալուն պատճառն  
իմացնելու համար Պաղեստին դեսպան դրկեր էր ,  
նոքա հոն Քրիստոսի հրաշագործութիւնները տես-  
նելով եկան պատմեցին Արդարու . ասի ալ նա-  
մակ գընց Քրիստոսի , աղաչելով որ դայ Հայտս-  
տան և զինքը բժշկէ , և եթէ ինքն անձամբ չը  
կընայ գալ , դոնէ իւր ոլատկերը դրկէ :

Հ. Արդար ի՞նչպէս նամակ դընց Քրիստոսի :

Պ. «Արդար Արշամին որդին , աշխարհի իշխան ,  
Փրկիչ ու բարերար Յիսուսիդ՝ որ Երուսաղէմի  
մէջ երեցար .

Ո՞չոյն .

«Թու անունդ , և քու առանց դեղի ըրած

բժշկութիւններդ լսեցի . վասնզի , ինչպէս որ կ'ը-  
սեն , դուն կոյրերուն աչքը կը բանաս , կաղերը  
կը քալեցնես , բորոտները կը սրբես , սատանա-  
ները կը հանես և Երկայն ատեն հիւանդութիւն  
ունեցողները կ'առողջացնես , նաև մեռեալներն  
ալ կը յարուցանես : Երբոր այս ամեն բան լսեցի ,  
միտքս դրի որ դուն՝ կամ Սաստած ես երկին-  
քէն իջած այս բաները կընես , և կամ Սաստուծոյ  
որդի ես . ուստի քեզի զրեցի և աղաչեցի որ  
դաս և իմ հիւանդութիւնս բժշկես : Լսեցի որ  
Հրեայները քու վրադ տրառնջ կ'ընեն ու կու-  
զեն զքեղ չարչարել և մեռցնել . եկու իմ քովս ,  
ես պղտիկ ու դեղեցիկ քաղաք մ' ունիմ , որնոր  
երկու քնուս ալ բաւական է» :

Հ. Քրիստոս կատարեց Արդարու ինդիրքը :

Պ. Յիսուս Քրիստոս իւր պատկերն և նամակ  
մ' Անանէ սուրհամդակին տալով կը դովի՛ Ար-  
դարին հաւատքը և կը խօստանայ իւր աշակերտ-  
ներէն մին առաքել , իւր համբարձմանէն յետոյ  
ինչպէս որ Թաղեսս առաքեալն եկաւ , բժշկեց  
զիւրդար , քարոզեց Քրիստոնէութիւնը և հաս-  
տաեց սուրբ Եկեղեցին : Արդար 38 տարի թա-  
դաւորելէն ետքը սրբութեամբ մեռաւ Քրիս-  
տոսի 35 թուականին :

Հ. Քրիստոսի նամակը ի՞նչպէս էր :

Պ. «Երանի անոր՝ որ դեռ չէ տեսած և ինձի

կը հաւատայ , վասն զի ինծի համար դրամած է թէ ով որ զիս կը տեսնէ , ինծի չպիտի հաւատայ և որոնք որ չեն տեսած՝ անոնք պիտի հաւատան ու փրկուին . իսկ այն բանին համար որ գրած ես թէ քեզի գամ , պէտք է որ ես ինչ գործքի համար որ հոս առաջեալ եմ , զայն կատարեմ . և երբ որ կատարեմ , զիս զրկազին քով պիտի համբառնամ . համբառնալէս յետոյ քեզի աշակերտներէս մէկը կը զրկեմ , որ քու ցաւերդ քժշկէ , ու քեզի և քու հպատակներուդ կեանք պարզեւէ :

#### Հ. Արագրու ո՞վ յաջորդեց :

Պ. Արգարու մեռնելէն ետքը Հայոց թաղաւորութիւնն երկուքի բաժնուեցաւ . Սիանէ իր որդին՝ Եղեսիոյ մէջ թաղաւորեց , և կուապաշտութիւնը նորէն սկսաւ . Սանաւորուկ քեռորդին ալ Հայաստանի մէջ թաղաւորեց , բայց Անանէ և տարի թաղաւորելէն յետոյ՝ նորողել տուած պալատին մէջ վրան սիւն մ' եյնալով մեռաւ , ուստի Եղեսացիք Սանաւորուկն իրենց թաղաւորը ընդունեցին երդմաննելով որ Քրիստոնէութիւնն ազատ պաշտուի :

#### Հ. Սանաւորուկ երդմանը վրայ հաստատ կեցաւ :

Պ. Ոչ . հապա՞ շատ քրիստոնեաններ նահատակեց , որոնց մէջն եխն Ազգէ անունով ոուրբ Հայրապետն իւր Սանդուխտ աղջիկը . և Ազուհի կամ

թաղուհի քոյրը : Մծրին քաղաքն ալ նորողել տալով մէջտեղն իւր արձանը կանդնեց ձեռքը դրամ մը տաւած , իմայնել ուղելով որ բոլոր ունեցածը ծափեր է ոյն քաղաքը շնորհու համար : Սանաւորուկ Յէ տարի թաղաւորն լին ետքը մեռաւ որսի ատեն դիպուածով նետէ մը դամնուելով :

#### Հ. Սանաւորուկին ո՞վ յաջորդեց :

Պ. Երուանդ , թէպէտե Արշակունի էր՝ բայց ոչ թաղաւորական ցեղէ . իւր քաջութեամբն ու քաղցրաբարոյութեամբը բոլորնախարարաց սիրոն երեն զբաւելով թաղաւոր եւսու , և թագաւորութիւնն ապահովիցնելու համար Սանաւորիոյ բոլոր ցեղը թրէ անցուց , միայն Արտաշէս անուանի պղտի տղայ մը փախտ Պարակաստան Սմբատ Բաղրատունին ձեռօք :

#### Հ. Երուանդ իւր գահը կրցա՞ւ ապահովիցնել :

Պ. Արտաշիսի Պարսկաստան փախչիլը զինքն անհանդիստ կընէր . ուստի փոքր Հայքը Հռովմայեցւոց տուաւ , ու ինքն Երուանդաշատ քաղաքը շնորհով աթառը հնմ փոխադրեց . ասմցմէ զատ երբ իմացաւ որ Սմբատ Պարսից Դաքէն թագաւորին օդնութեամբն Արտաշէսը Հայաստան կը բերէ թաղաւորեցնելու համար , սրատերազմի պատրաստութիւններ բրաւ :

#### Հ. Երուանդ ուր պատրաստեցաւ պատերազմի :

Պ. Ախուրեան գետին քով՝ վարձւոր զօրքերէ  
բազմաթիւ բանակ մը պատրաստեց, և երկու  
կողմն ալ սկսան սաստիկ պատերազմիւ, բայց  
մարտին տաքցած միջոցին նախարարներէն շա-  
տերն Արտաշիսի կողմն անցան. անոնց մէջ գլխա-  
ւորն էր Արդամ քաջ նախարարը : Երուանդ-  
ստիպուեցաւ փախչիւ երուանդաշատ . հոն հա-  
սան Հայոց զօրքերը երուանդաշատն առին և  
երուանդն ալ սպաննեցին 20 տարի թագաւորելէն  
ետքը : Արտաշէս փառաւոր շիրիմ մը կանդնել  
տուաւ երուանդայ գերեզմանին վրայ՝ մօր կող-  
մանէ Արշակունի ըլլալուն համար :

Հ. Արտաշէս Բ. իր բարերարացը հետ ի՞նչպէս  
վարուեցաւ :

Պ. Արտաշէս թագաւորելուն պէս իր աղատիչ  
Սմբատը Հայոց զօրքերուն ընդհանուր սրբարա-  
պետ դրաւ, Արդամն ալ իրեն երկրորդն ըրաւ,  
և Գիսակ իշխանին Ներսէս որդին ալ նախարա-  
բաց կարող գտնելով Դիմաքսեան անուանեց անոր  
ցեղն՝ ի յիշատակ Գիսակայ զԱրտաշէս աղատելու  
համար դէմքին կէսը կորսնցնելով մեռնելուն :

Հ. Արտաշէս որո՞նց հետ պատերազմ ունեցաւ :

Պ. Ալանաց թագաւորին հետ՝ որոյ տղան գերի  
բռնուեցաւ սպատերազմին մէջ . բայց Ալանաց  
թագաւորին Սաթինիկ անուամի աղջկանն աղա-  
չանացը զիջանելով Արտաշէս աղատեց անոր եղ-

բայցը, և Սաթինիկը իրեն կին առաւ: որոյ հա-  
մար հետեւեալ երգը կ'երգէին :

Հեծաւ արի արքայն 'ի սեան գեղեցիկ  
Եւ հանեալ զօսկէող շիկափոկ պարանն .  
Եւ անցեալ որպէս արծուի տրաթև ընդ գէտն,  
Եւ ձգեալ զոսկէող շիկաբոկ պարանն  
Ընկեց 'ի մէջք օրիորդին Ալանաց .  
Եւ շատ ցաւեցուց զմէջք փափուկ օրիորդին  
Ալանաց հասուցաննելով 'ի բանակն իւր :

Հարսանեաց հանդիսին երգը .

Տեղ ուսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի  
Տեղայր մարդբիս 'ի հարմանութեանն Սաթինիկան

Հ. Արտաշէս Հոռվիմայեցւոց հետ ի՞նչպէս վար-  
ւեցաւ :

Պ. Արտաշէս Հոռվիմայեցւոց հարկ տան ալ  
դադրեցուց և մի քանի անդամ վաճառեց զանոնք  
Հայաստանէն . բայց վերջը երբ Ցըայիանոս կայ-  
սեր անթիւ բարձրութեամբ գալը լսեց՝ վախնալով  
շատ ընծաներ առած դիմացն ելաւ և պարաքնը  
վճարելով հաշտութիւն ըրաւ :

Հ. Արտաշէս ի՞նչ բարեկարգութիւններ ըրաւ  
Հայաստանի մէջ :

Պ. Թէ ուսմամբ, թէ արուեստիւ և թէ մշա-  
կութեամբ Հայաստանը ծաղկեցնելու հոդ տա-  
րաւ, գետերուն և լճերուն վրոյ նաւադնացու-  
թիւններ հաստատեց . այնպէս որ օր ըստ օրէ

նար եղելիներէ անհամար դավթականութիւններ  
կուզային Հայաստանի մէջ բնակելու համար . Ար-  
տաշէս և տարի իւր ժողովուրդը խաղաղու-  
թեամբ կառավարելէն ետքը մեռաւ Մարանդ  
գաւառը , և իւր մահուանը վրայ այնպէս սղա-  
ցին Հայեր՝ որ շատերն ինքինքնին ողջ ողջ  
սպաննեցին Արտաշիսի գերեզմանին վրայ :

Հ. Արտաշէս Բ. ին ո՞վ յաջորդեց :

Պ. Իւր որդին Արտաւազդ Բ. որ դրօստաէր և  
անկարդ կեանք մ' ունենալուն օր մ' որսի ելած  
տաեն խորունկ փոսի մը մէջ ինինալով կորսուե-  
ցաւ Զ տարի թաղաւորելէն ետքը :

Հ. Արտաւազդայ վրայ ի՞նչ առասպելներ կը  
պատմուի :

Պ. Արտաւազդայ վրայ առասպելով կը պատ-  
մեն թէ , այրի մը մէջ շղթայով կապուած է և  
երկու որսի չներ միշտ կը կրծեն այն շղթան ,  
որպէս զի բրդի և Արտաւազդ ենէ աշխարհս  
կործանէ . բայց գարբիններուն երկաթ ծեծելու  
ձայնէն նորէն կը զօրանան շղթաները : Ասկէց  
զոտ հետեւեալ երգը է երդէն :

Եթէ զու յորս հեծցես  
Յաղատն ՚ի վեր ՚ի Մասկա  
Զքեղ կալցեն քաջը  
Տարցեն յազատն ՚ի վեր ՚ի Մասկա  
Անդ կացցես և զը՞րս մի՛ առաջես :

Հ. Արտաւազդայ ո՞վ յոջորդեց :

Պ. Իւր եղբայրը Տիրան Ա. որ եղբօրը նման ան-  
կարդ կեանք մը վարեց և 24 տարի թաղաւորե-  
լէն ետքը՝ օր մը ճամբան ձիւնի բռնուելով մեռ-  
ուաւ , և իրեն յաջորդեց իւր եղբայրը Տիգրան Գ. :

Հ. Տիգրանայ վրայ ի՞նչ դիտելիք կայ :

Պ. Տիգրան քաջ և արիասիրտ ըլլալով միաբա-  
նեցաւ Պարսից Պերով թաղաւորին հետ յաղթեց  
Հռովմայեցւոց Սկերիանոս զօրապետին և իր բա-  
նակին գլուխն անցած փոքր Ասիոյ կողմերն ար-  
շաւեց , բայց հմտ իշխող թաղուհիէ մը խարուե-  
լով գերի բանուեցաւ : Նոյն միջոցին Դուկիոս ,  
Վերոս , Աւրեղիոս կայսեր գահակիցը Հայոց վրայ  
գալով երբ իմացաւ Տիգրանայ գերութիւնը՝ ազա-  
տեց վանի և Հայաստան զրկեց . Տիգրան և 2 տարի  
թաղաւորելէն ետքը մեռաւ : Հռովմայեցւոց Ա-  
պէքսանդր քրմապետը հետեւեալ պատղամը  
տուած էր Սկերիանոսի :

ԶՊարթես և զնայս վաշ հարցես նիզակաւ  
դարձցես ՚ի Հռով և ՚ի Տիգրերեայ ջուրն պաղպաջուն  
Պատկ ընկալցի բոցաճաճանչ քո ճակատ :

Բայց երբոր Հռովմայեցիք չարաչար յաղթուե-  
ցան , ջնից զայն և հետեւեալ պատղամը տուաւ :

Վի՛ հարէր զօրս ՚ի Հայաստան բանզի չէ բարւոք  
Մի՛ քեղ որի կանացահանդերձ ՚ի տիսուր նետէ  
Մահ արձակեալ աշաւցէ վախճան կնն սցդ :

Հ. Անակ իր չարութեան խորհուրդը կատարեց։  
Պ. Անակ քիչ ժամանակէն յաջողեցաւ. օր մը  
որսի ելած ժամանակնին զարկաւ սպաննեց զիսու-  
րով, որ հօ տարի թագաւորած էր և ինքն ալ  
փախչելու ատեն գետն ինկաւ ու խեղդուեցաւ։  
Հ. Խոսրովու մեռնելէն ետքը Հայոց վիճակն  
ի՞նչ եղաւ։

Պ. Սրտաշիր եկաւ Հայաստան, բոլոր Հայերը  
նուաճեց. Խոսրովու ցեղը ջնջել տուաւ՝ որոնցմէ  
Ցրդատ անունով մանչ մ' ու անոր Խոսրովիդուխա  
քոյրն աղատեցան Սրտաւազդ. Մանդակունիին և  
Օսու Ամատունիին ձեռօք որոնք առաջինը Հռովմ  
և երկրորդը կեսարիա փախուցին։

Հ. Ցրդատ Հռովմայեցւոց հետ ի՞նչպէս վար-  
եցաւ։

Պ. Շատ քաջութիւններ ընելով մեծ համբաւ  
ստացաւ Հռովմայ մէջ. անգամ մը մէկ ձեռքով  
երկու վայրենի ցուլերու եղջիւրներէն բռնեց և  
երկուքն ալ սպաննեց. օր մ' ալ ձիւնթացի մէջ  
հակառակորդին ճարտարութեամբը կառքէն վար  
ինկաւ. ասոր վրայ Ցրդատ սաստիկ բարկանալով  
կարդին ետևէն այնպէս ուժով բռնեց օր ձիւրը  
չկրցան յառաջ երթալ. ուրիշ օր մ' ալ Գոթացւոց  
Հռչէ թագաւորին հետ մենամարտելով բռնեց  
զայն և Հռովմայեցիները մեծ նախատինքէ մը  
աղատեց։

Հ. Ցիդրան Գ. ին ո՞վ յաջորդեց։

Պ. Իւր որդին Վազարչ, ասի Վազարչապատ  
քաղաքը լինեց. Ասոր ատենները հիւսիսյին աղ-  
դերը Հայաստան արշաւեցին. Վաղարչ անոնց  
դէմ քաջութեամբ պատերազմելով մեռաւ 20  
տարի թագաւորելէն ետքը. իրեն յաջորդեց որ-  
դին Խոսրով Ա. որ Խոսրով մեծ կոչուեցաւ.

Հ. Մեծն Խոսրովու վրայ ի՞նչ կը պատմուի։

Պ. Խոսրով իր հօրը աեղն անցնելուն պէս Հիւ-  
սիսյին աղդաց վրայ պատերազմի ելաւ, յաղթեց  
անոնց, զարկաւ փախուց Հռովմայեցիներն ալ,  
որոնք Հայաստանը բոլորովին նուաճելու համար  
Հայոց վրայ եկեր էին, Պարսից հետ ալ պատե-  
րազմ աւնեցաւ, որովհետև Սրտաշիր անունով իշ-  
խան մը Պարսից Սրշակունի Սրտաւան թագաւորը  
մեռցնելով ինքը թագաւորեր էր, ասոր համար  
Խոսրով անոր դէմն ելաւ և միշտ յաղթելով մին-  
չեւ Հնոյկաստան փախուց։

Հ. Սրտաշիր ի՞նչ հնարք մտածեց Խոսրովը  
յաղթելու։

Պ. Մեծամեծ ողարդեներ խոստացաւ Խոսրովը  
մեռցնողին. այս բանը յանձն առաւ Անակ Պահ-  
լաւունի նախարարը, և ձեւայնելով որ Սրտաշի  
բռնութիւններէն փախեր է, եկաւ Հայաստան.  
Տամբան դալու ատեն որդի մը աւնեցաւ, որ է  
մեր սուրբն Գրիգոր Լուսաւորիչ։

Հ. Հոռվմայեցիք ի՞նչպէս վարձատրեցին ըդ  
Տրդատ :

Պ. Դիսկղետիամնոս կայսրն ուրախամալով ուղեց  
զջրդատ վարձատրել . և երբ իմացաւ որ Հայոց  
թագաւորին որդին է , թագաւորական զգեստներ  
հաղցուց , դլուխը թադ գրաւ և շատ զօրքով  
զրկեց Հայաստան . այս միջոցին Հայաստանի վրայ  
իշխողն Արտաշերի որդին Շապուհն էր . երբ  
Տրդատ Կեսարիա հասաւ , բոլոր նախարարները  
դիմացը ելան և զինքը թագաւոր դրին ընդհա-  
նուր Հայաստանի :



ԳԼՈՒԽ Պ.

ԱՐԴԱՐ ԷՆ

ՄԻՒԶԵՒ ԱՐԺԱԿՈՒՆԵԱԾ ԹԱՅԱԿՈՐՈՒԹԵԱՆ  
ԱՈՐԾԱՆՈՒՄԸ

286—433

Հ. Ի՞նչպէս վանտեց Տրդատ Շապուհը Հա-  
յաստանէն :

Պ. Տրդատ Հայ և Հոռվմայեցի զօրքերուն դը-  
լուխն անցած Շապուհի դէմն ելաւ յաղթեց . և  
զատերալմեցան մինչեւ որ բոլորովին վանտեց

Հայաստանէն զՊարսիկս , որոնք 26 տարի բռնա-  
բար իշխած էին . և մօտակայ ազդերուն սիրով  
վախ ձգեց . Եկեղեցաց գաւառէն անցնելու ատեն  
Երիշաւանին մէջ Անահտայ չնորհակալութեան  
դոհ մատոյց , և խստիւ հրաման հանեց որ ամեն  
տեղ կուոյ յարդանք մատուցանեն :

Հ. Եկեղեցայ դաւարին մէջ ի՞նչ պատահեցաւ :

Պ. Տրդատ իմանալով որ նոյն դաւարին մէջ  
Քրիստոնեաներ կան և իր հրամանին հակառակ  
Քրիստոնէութիւնը կը պաշտեն , խստիւ հրաման  
հանեց որ ամեն միջոց՝ ի դործ դրուի Քրիստոնէ-  
ութիւնը չնջելու . ուստի շատերը նահատակեցան ,  
ասոնց մէջն էր նաև սաւրըն Գրիգոր՝ որ Անակայ  
որդին ըլլալն իմանալով շատ մը չարչարելէն ետքը  
Արտաշատ քաղքին խոր վիրապին մէջ նետել  
առուաւ :

Հ. Տրդատայ ի՞նչ դէպք պատահեցաւ :

Պ. Նոյն օրերը Հոռվմի մէջ ալ Քրիստոնէու-  
թեան դէմ սաստիկ հալածանք ենելուն՝ Հռիփի  
սիմեանց կուսանք վախեր Հայաստան եկեր էին .  
Տրդատ Հոռվմի մէխն գեղեցկութեանը հաւնելով  
ուզեց իրեն կին առնուլ . սուրբ Կոյսը մերժեց ,  
ուստի Տրդատ ալ բարկանալով թրէ անցնել առուաւ  
զամէնքն ալ , բայց ինքն ալ Աստուծմէ պատժուե-  
լով օր մ' որսի ատեն խողի կերպարանք մտաւ  
իր մէկ քանի իշխաններով :

Հ. Ավագ բժշկեց զջրդատ :

Պ. Սուրբն Գրիգոր՝ որ ԱԿ տարի վիրապին մէջ աստուածային զօրութեամբ ողջ մնացած էր, Ցըրդատայ Խոսրովիդուխտ քրոջը նրազին մէջ Առառութոյ հրեշտակն իմացուց, թէ մինչեւ որ Անակայ որդին՝ Գրիգորը վիրապէն չենէ՝ անկարնիք է Ցըրդատայ բժշկութիւնը. այն ալ Օտա նախարարը դրկեց որ դնաց Գրիգորը վիրապէն դուրս հանեց :

Հ. Սուրբ Գրիգոր ի՞նչ ըրաւ :

Պ. Սուրբն Գրիգոր բժշկեց զջրդատ և միւս հարուածեալները, Հոփիսիմեանց ոսկերաց վկայարաններ շինեց, հաւատացեալները միրտեց և ինքն ալ կեսարիա դնաց ու հոն Արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ Վեւոնդ Արքեպիսկոպոսէն Քրիստոսի 302 թուականին :

Հ. Քրիստոնէութիւնն ի՞նչպէս տարածուեցաւ ՚ի Հայաստան :

Պ. Ցըրդատ Քրիստոնեայ ըլլալէն վերջը՝ սրբոյն Գրիգորի հետ միացած՝ կռատունները կործանեց, քուրմերն և անոնց պաշտամունքը չնվեց, եկեղեցիներ շինեց, որոնց մէջ ամենէն նշանաւորն ու փառաւորն եղաւ Ս. Եջմիածին :

Հ. Սուրբ Գրիգոր ի՞նչպէս լուսաւորիչ ըստեցաւ :

Պ. Ասկէ ետքը սուրբն Գրիգոր Հայաստանի

ամեն կողմերը կը պարանէր, Քրիստոնէութիւնը կը քարոզէր և հաւատացեալները կը մկրտէր, և այսպէս անդուլ քարոզւթեամբը լուսաւորեց բոլոր Հայաստանը, որոյ համար Լուսաւորիչ ըստեցաւ :

Հ. Ցըրդատ Գրիստոնեայ ըլլալէն յետոյ որո՞ւ հետ պատերազմ ունեցաւ :

Պ. Ցըրդատ՝ ներքին բարեկարդութեան զրազած միջոցին Հիւսիսային ազգերը Շապուհի հետ միացած սկսան Հայաստան արշաւել, որոնց գէմն ելնելով ամենքն ալ հալածեց : Այս միջոցին Մամդուն Զինացի իշխանը Հայաստան եկաւ, յորմէ սկըրեցաւ Մամիկոնեան նախարարութիւնը :

Հ. Այս միջոցիս ուրիշ ի՞նչ երեւելի դիպուած պատահեցաւ :

Պ. Այս միջոցիս Նիկիոյ սուրբ Ժողովքն եղաւ՝ ուր ներկայ էր Հայոց կողմէն սուրբն Արքիստակէս՝ սուրբ Լուսաւորչի պատի որդին, որնոր Հանդանակը Հայաստան բերաւ : Ս. Լուսաւորիչ հոգևորական կառավարութիւնը յանձնելով որդւոյն՝ ինքը Մամիկոնաց այրը քաշուեցաւ, ուր ճկնութեամբ և աղօթքով անցուց մինչեւ իւր վախճանը :

Հ. Ո՞րքափ ատեն թագաւորեց Ցըրդատ :

Պ. Տեսնելով նախարարաց անկարգութիւնները՝ թողուց թագաւորութիւնն ու Լուսաւորչաց ճգնաւ

բանը քաշուեցաւ . նախարարները շատ աղաջեցին  
որ գայ թագաւորութիւնը ձեռք առնե , բայց  
երբ ծրդատ յանձն չառաւ՝ թունաւորեցին դիմքը՝  
և ասանկով այն Քըիստոնեայ և քաջ թագաւորին  
կեանքը կարճեցին 85 տարեկան հասակին մէջ .  
Տ4 տարի թագաւորելէն ետքը : ծրդատայ վրայ  
հետեւեալ առածը կըսէին :

Խըրեւ զօէզն Տբդատ՝ որ սիդալովն  
Աւերեաց զթումբս գետոց , և ցամաքեցոյց  
իսկ ՚ի սիդալ իւրում զյորձանս ծովուց :

Հ. ծրդատայ մեռնելէն յետոյ ի՞նչ եղաւ Հա-  
յաստանի միհճակը :

Պ. Տակնուիրայ եղաւ Հայաստան . Բայսանեանց,  
Մանաւազեանց և Որթունեանց ցեղերն՝ իրարու հետ  
պատերազմելով ջնջուեցան . Աղուանք ապստամ-  
բեցան . և Սանատորուկ անունով մէկը թագաւոր  
դրին իրենց վրայ , նոյնպէս Բակուր՝ Աղձնեաց  
իշխանն՝ ապստամբեցաւ :

Հ. Հայոց խելացի նախարարներն այս գէշու-  
թիւններուն ճար մը չդատան :

Պ. Հայոց խելացի նախարարներն ասոնց առաջին  
տանելու համար ուրբ Վրթանէս կաթուղիկոսին  
հետ միացած՝ ծրդատայ որդին Խոսրով Բ. թա-  
գաւոր դրին . Հռովմայ Կոստանդ կայսրն ալ թագ-  
ու ծիրանի խաւրեց Խոսրովին :

Հ. Խոսրով Բ. ին վրայ ի նշ գիտելիք կայ :

Պ. Իր հօրը քաջութիւններէն բոլորովին զուրկ  
մեղկ և զբօսասէր կեանք մ' անցուց . ասոր օրով  
Շապուհ և Հիւսիսային աղդերը մեծ պատրաս-  
տութեամբ Հայաստան արշաւելով մինչև Վաղար-  
շապատ հասեր էին . ասոնց դէֆն երաւ Վահան  
Ամատունի քաջ զօրավարը . և Հայերը հոն այն-  
պիսի կատաղութեամբ պատերազմեցան , որ թըշ-  
նամեաց նետ ձգելու ատեն թող չը տալով սաստ-  
կապէս հաղածեցին զամենքն ալ . Խոսրով 10 տարի  
թագաւորելէն յետոյ մեռաւ :

Հ. Խոսրով Բ. ին ո՞վ յաջորդեց :

Պ. Իւր որդին Տիրան Բ. որ Սուրբ Վրթանեսին  
հետ կոստանդնուպօլիս երթալով թագաւոր պը-  
սակուեցաւ կոստանդ կայսրէն : Շապուհ Տիրանին  
կոստանդնուպօլիս երթալն իմանալով անհամար  
զօրքով Հայաստան զրկեց իր Ներսէն եղբայրը՝  
բայց Արշաւիր Կամսարական՝ որուն յանձնուած  
էր Հայաստանը , միացնելով նախարարները՝ յաղ-  
թեց թշնամոյն և վրանտեց վներսէն :

Հ. Տիրան ի՞նչպէս կառավարեց երբոր Հայաս-  
տան վերագարձաւ :

Պ. Բոլորովին անկարգութեամբ . Շապուհին  
հետ ալ հաշտութիւն խօսելով սկսաւ տուրք տալ  
անոր՝ ինչպէս Յունաց կուտար . բայց դիչ մը վերջը  
թշնամացան , Յուլիանոս՝ Յունաց կայսեր օդնե-

նելուն համար : Տիրանի անդթութեան ամենէն  
մեծն եղաւ Յուսիկ սուրբ հայրապետը ծեծելով  
սպաննել տալը , Յուլիանոս ուրացող կայսեր  
պատկերը եկեղեցւոյ մէջ կախել չտալուն համար ,  
բայց ինքն ալ պատիժը շուտով առաւ :

Հ. ի՞նչ պատիժ ընդունեցաւ Տիրան :

Յ. Յուլիանոս Պարսից գէմ ըրած պատերազ-  
մին մէջ զարնուելով մեռաւ . և Նապուհ Տիրա-  
նէն վրէժը լուծելու համար բարեկամութիւն կեղ-  
ծելով իրեն կանչեց զինքը և աչքերը կուրցնել  
տուաւ . այսպէս Տիրան թշուառութեամբ Դ տարի  
թագաւորելէն յետոյ՝ իր արշակ որդին սպան-  
նուեցաւ :

Հ. Տիրան Բ. ին ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Արշակ՝ որ Արշակունի թաղաւո-  
րաց մէջ ամենէն մոլի , անկարգ և վատաբարոյն  
եղաւ և Յունաց ու Պարսից ալ խաղալիք . վասն  
զի Յոյնք և Պարսիկը իրենց մէջ ունեցած ատե-  
լութենէն , Յոյնք ստիպեցին զինքը՝ որ Պարսից  
չծառայէ , Արշակ մտիկ չըրաւ . վասն զի Տիր-  
բոնի Քահանայից ներկայութեամբ երդուած էր  
Ս. Աւետարանի վրայ Պարսից հաւատարիմ մնա-  
լու , ուստի թէոթոս Յոյն զօրապետն ահաղին  
քաղմութեամբ սկսաւ Հայաստան դալ . այն ատեն  
Մեծն ներսէն՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի թոռան  
թոռը՝ կոստանդնուպօլիս դնաց և Վաղենթիանոս  
կայսեր բարկութիւնն իջեցուց :

Նապուհ ալ Տիրան քաղքին քահանաներն ու  
սարկաւագները 70 հոդի սպաննել տուաւ , և  
սկսաւ Գրիստոնէից գէմ սոսկալի հալածանք հա-  
նել , որով բիւրաւոր հոդի մեռան որոնց թիւը  
200,000 կ'ելնէ :

Հ. Արշակ որքիշ ի՞նչ անիրաւութիւններ ըրաւ :

Պ. Իր Տրդատ Եղիորը Գնել որդւոյն հարսաւու-  
թեանն և ամուսնոյն վրայ նախանձելով սպաննել  
տուաւ զանի , և անոր Փառանձեմ կինն ալ իրեն  
կին առաւ . Փառանձեմ ալ Արշակայ Ողբմաղիադայ  
կինը թունաւորեց Մըջիւնիկ անոռամք անար-  
ժան քահանայի մը ձեռօք : Ասկից զատ Արշակ  
Արշակաւան անունով քաղաք մ' ալ շնել տուաւ-  
աւանց նախարարուց խորհրդին անսալու :

Հ. Արշակ ի՞նչպէս շենցուց Արշակաւանը :

Պ. Հրաման հանեց որ հօն դիմող յանցաւոր-  
նելն ապատ են դատապատանէ . այս ըելով չարա-  
գործ մարդիկ անմիջապէս հօն դիմեցին , թէսկետ  
և նախապարք այս անկարգութեան դէմ բողոքե-  
ցին . վասն զի շատերուն ծառաներն իրենց ախրու-  
ինչքերը յափշտակելով կամ գունալով Արշակա-  
ւան վախած էին , բայց Արշակ մտիկ չըրաւ .  
ուստի նախարարներն օդնութեան կանչեցին զնա-  
պուհ , Արշակաւանը կործանեցին . Արշակ ալ  
նեղը մնարով վրայ ապաւինեցաւ օդնութիւն  
գտնելու համար :

Հ. Արշակ Վրացոցմէ օդնութիւն դտա՞ւ :

Պ. Շատ զօրք առնելով եկաւ Հայաստան և սկսաւ պատերազմիլ նախարարաց դէմ. նոյն միջոցին Յունաց Վաղէս կայսրն ալ Արշակայ դէմ զօրք զրկեց, լսելով որ Արշակ Պարսից օդներ եր Յունաց դէմ դալու ատեն. սոսկալի եղաւ արիւն հեղութիւնը. Արշակ նեղը մնալով սուրբ Ներսիսի դիմեց՝ որ մեծ գժուարաւթեամբ նախարարները հաշտեցուց, և Յոյներն ալ Արշակայ Պատ որդին պատանդ առնելով դարձան կոստանդնուպօլիս սուրբ Ներսիսին հետ :

Հ. Սուրբ Ներսիսին ի՞նչ պատահեցաւ կոստանդնուպօլսոյ մէջ :

Պ. Վաղէս կայսրն առանց սրբոյն Ներսիսի երեսը աեմնելու աքսորել հրամայեց, և սուրբ Ներսէս երթալու ատեն նաւն անմարդաբնակ կղզիի մը քով ցամաքը զարնուելով ջախջախեցաւ. սուրբ Ներսէս ութն ամլա հոն մնաց, ու Աստուծոյ խնամքովը ծովուն ալիքներուն ամեն օր դուրս նետած ձկներովը կը կերակրուէր :

Հ. Արշակ ի՞նչպէս վարուեցաւ նախարարներուն հետ :

Պ. Սուրբ Ներսիսի Հայաստանէն հեռացած ատեն, Արշակ իր ոխը նախարարներէն սկսաւ հանել, որոնցմէ շատերն սպաննել տուաւ, Ներսէս կամսարականին ցեղն ալ բոլորովին ջնջեց. այս

միջոցին Շապուհ՝ Ալանողան Պարթև Եշևանը շատ զօրքով Հայաստան զրկեց. նախարարներէն շատերն Արշակին բարկացած բլբալուն՝ ամենը մէյտէկ կողմ քաշուեցան. Արշակ ալ մինակ մնալուն՝ ճարը հատած ելաւ Շապուհին դնաց, որ քիչ մը առեն պատուով պահելին յետոյ շղթայով կապած Անյուշ բերդը զրկեց :

Հ. Արշակ ինչո՞ւ ինքզինքն սպաննեց :

Պ. Շապուհ՝ Մերուժան Արծրունի և վահան Մամիկոննան ուրացեալ նախարարներն իր կողմը շահելով, բազմաթիւ զօրք տուաւ ձեռուընին և Հայաստան զրկեց որ երթան Հայերը կրակապաշտընին, անոնք ալ ամեն չարիք հասուցին թշուառ Հայաստանին. Արշակ աս ամենը լսելով յուսահատարար ինքզինքն Անյուշ բերդին մէջ սպաննեց 18 տարի թշուառութեամբ թաղաւորելին յետոյ :

Հ. Արշակայ ո՞վ յաջորդեց :

Պ. Արշակայ մեռնելին յետոյ Հայաստան բոլորովին տակին ու վրայ եղաւ. և մեծն Ներսէս՝ որ կոստանդնուպօլիս կը դանուէր՝ աղաչեց թէոդոս կայսեր՝ որ Արշակայ որդին Պատը Հայոց թագաւոր դնէ. ուստի թէոդոս Ցերենտիանոսի հրամայեց որ շատ զօրքով Հայաստան երթայ՝ Պատը թագաւորեցնէ. և երբ Զիրաւ ըսուած դաշտը հասան՝ Պարսիկներէն մեծ ընդդիմութիւն տեսան՝ և քիչ մնաց որ պիսի յաղթուէին բայց Ա.

Ներսէս նպատ լեռանը վրայ բազկատարած աղօս  
թելով յաջողակ քամի մ' ելաւ որ Պարսից ներ-  
տերը ետ կը դարձներ և ամոլ մ' ալ արեը խա-  
րանեց . ասանկով Հայերը գիւրութեամբ վանտե-  
ցին Պարսիկները , և Սմբատ Բագրատունին՝ Մե-  
րուժան ուրացեալ նախարարը բռնելով հրաշէկ  
շամբուր մը դլուխը դրաւ և սպաննեց դայն :

Հ. Պատերազմին վերջն ի՞նչ եղաւ :

Պ. Պատ թագաւորն և նախարարները միանա-  
լով երդում ըրին սուրբ ներսիսի առջև , որ անկից  
վերջը հաւատարմութեամբ ծառայեն Աստուծոյ :  
բայց քիչ մը վերջը Պատ դրժեց իւր երդմանը և  
սրբոյն Ներսիսի դաշտնի դոյն տալով մեռժնել  
տուաւ , վերջն ալ ապստամբեցաւ Թէոդոս կայս-  
րէն և Ցեղենտիանոս գօրավարը վռնտելով՝ Շա-  
պուհէն օգնութիւն առած՝ Յունաց դէմ պատե-  
րազմի ելաւ և յաղթուելով բռնուեցաւ . Թէոդոս  
կայսրն ալ դլսատել տուաւ . Օ տարի թագաւո-  
րելէն Ետքը :

Հ. Պատ թագաւորին ո՞վ յաջորդեցին :

Պ. Վարազդատ՝ Արշակունի կարիք երկուա-  
սարդը՝ որ իւր քաջութիւններովը խիստ երևելի  
եղած էր Յունաց քով , և պատմեն թէ օր մը Յ  
Հոմարաւացիի դէմ ելնելով՝ Յն ալ հտեւէ ետև  
սպաննեց . օր մ' ալ բերդի մը վրայ յարձակելով՝  
17 հոգի մէկ մէկու ետևէ զարկաւ սպաննեց աւ

ուանց զնասուելու և երբ Հայաստան կուդար՝ դո-  
ղերու հանդիպելով ցատկեց Եփրատ դետին վրա-  
յէն , որուն լայնութիւնը 22 կանգուն էր , և  
դողերը բունեց :

Հ. Վարազդատ ո՞րչափ թագաւորեց :

Պ. Հազիւ երկու տարի . վասն զի Յոյն զօրա-  
պետաց ամբարտաւանութեանը չկրնալով հան-  
գուրդել ուղեց ապստամբիլ և հարկատու ըլլալ  
Պարսից . բայց այս խորհուրդը Թէոդոս կայսրն  
իմացած ըլլալով՝ Պոլիս կանչեց զինքը՝ Վարազ-  
դատ յուսալով որ եթէ անձամբ երթայ կընայ  
ինքինքն արդարացնել , ելաւ գնաց . բայց կայսրն  
առանց երեսը տեսնել ուղելու՝ Թէոդոս կզին  
աքսորել տուաւ զինքը :

Հ. Վարազդատին որո՞նք յաջորդեցին :

Պ. Թէոդոս՝ Պատին երկու որդիքն՝ Սրշակը  
Դումի մէջ . և Վազարշակը՝ Երիզայի մէջ թա-  
գաւոր դրաւ , որպէս զի եթէ մին ապստամբի  
միւսը հաւատարիմ մնայ . բայց Վազարշակ և ոչ  
տարի մը թագաւորելով մնաւաւ . այս միջոցին՝  
Թէոդոս Յունաց կայսրը մեռնելով Յոյնք և Պար-  
սիկը սրոշեցին որ Հայաստանի արեւելեան մասը  
Պարսից Եշխանութեան տակ՝ և արևմտեան մասը  
Յունաց Եշխանութեան տակ մնան . այս պատճա-  
ռաւ Արշակ Գ. չուղելով Պարսիկաց ծառայել Յո-  
նաց մասն անցաւ և ամժար Երիզա փոխադրեց :

Հ. Պարսիկը իրենց մասին թագաւոր դրէ՞ն :

Պ. Արշակունեաց ցեղէն Խոսրով անունով մէկն իրենց մասին թագաւոր դրին . և սրովհետեւ նախարարներէն շատերը Յունաց մասն անցած էին՝ Խոսրով նամակ գրեց անոնց որ դառնան դան , խոստանալով նաև իւրաքանչիւրին կալուածներն իրենց դարձնել . ուստի սկսան նախարարներն անոր երթալ , և կողոպտելով նաև Արշակայ դան . ձերն ալ հետերնին տարին . Արշակ դեսպան դրկեց որ դահճերն ետ դարձնէ . բայց Խոսրով յանձն չառնելով պատերազմ բացուեցաւ մէջերնին . Արշակ յազմուեցաւ և Երիշա դառնալով մեռաւ Յ տարի թագաւորելէն յետոյ , և Խոսրով Գ. Յունաց կայսեր հարկ առ խոստանալով թագաւոր եղաւ բոլոր Հայաստանի :

Հ. Խոսրով Գ. խաղաղութեամբ իշխե՞ց :

Պ. Նախարարներէն սմանք հետը թշնամութիւն ունենանալով դացին ամբաստանեցին Շապոհի՛ թէ Խոսրով կուղէ ապստամբիլ , Շապոհ ալ իր որդին՝ Արտաշերը շատ զօրբով Հայաստան դրկեց , և Խոսրով առանձին ու անօդնական մնալով գնաց Արտաշերի քով , որ անմիջապէս շվթայի ըաբնելով Անյուշ բերդը դրկեց Յ տարի թագաւորելէն ետքը , և Վահամշապոհ Խոսրովի եղբայրը Հայոց վրայ թագաւորեցնելով Հայաստան դրկեց :

Հ. Վահամշապոհ ի՞նչպէս կառավարեց դՀայտան :

Պ. Ուսումնասէր , հանդարտարարոյ և խոհեմ անձ մ' ըլլալուն՝ ամեննեին ապստամբութիւն չը խորհեցվ սիբերի եղաւ Պարսից Վահամշապան թագաւորին : Ա.յս խաղաղ միջոցին Հայաստանի մէջ սուրբն Սահակ Պարթեւ Հայրապետն և սուրբն Մեսրովակ՝ Վահամշապուհի ուսումնասիրական եռուանդը տեսնելով ետեւէ եղան Հայերէն գրեր գտնել՝ դպրոցները բանալ՝ և ազդին ուսումնականն որ կենդանութիւն տալու , որոնց հետ միաբանեցան Մովսէս Խորենացի , Եղիշիկ , Կորիւն , Եղիշէ , Աղան Արծրունի , Ղազար և Մամբրէ . ասոնք դիշեր ցորեկ անդուլ աշխատութիւնով , դպրոցներ բանալով և թարդմանութիւններ ընելով Ազդին վերակենդանութեանը պատճառ եղան . ահա այս ժամանակնէ որ Հայ դրագիտութեան ոսկեդարը կըսուի Քրիստոսի հօն թուականին : Վահամշապուհ 21 տարի թագաւորելէն յետոյ մեռաւ :

Հ. Վահամշապուհին ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Արտաշէս դեռ պղափիկ ըլլալուն՝ Խոսրով Գ. իր եղբայրը՝ որ բանտէն ելած էր , երկրորդ անդամ թագաւոր եղաւ : Բայց հազիւտարի մ' իշխելով մեռաւ , և Յազկերտ՝ Պարսից թագաւորն իր Շապուհ որդին Հայոց թագաւոր դրսու , որ շւտառվ կրակապաշտ ընէ Հայերը :

Հ. Հայերը Շապուհին հետ ի՞նչպէս վարուեցան :

Պ. Հայրը իմանալով Յաղկերտի միտքը՝ սկսան արհամարհանոք վարուիլ Շապուհին հետ, այնպէս որ եզր օր մ' որսի ատեն Ատովմ Մոկացի քաջ իշխանին հետ վայրենի էշեր որսալու համար ժայռ ռերէն վեր կ'արշաւէին՝ Շապուհ զՄոկացի Հայերը սատանորդի կոչեց . այս նախատինքը ծանր եկաւ իշխանին . ուստի օր մ' ալ վայրենի կինք որսալու ատեն՝ Հայերը եղեգնուուտին կրակ տուին, Շապուհ դանդաղելով չկրցաւ. եղեգնուուտին դուրս ենել, և սկսաւ աղաչել, Ատովմ դայն աղատելն յետոյ՝ ծազքելով Շապուհին ըստ, եթէ դու Մոկացիները սատանորդի կը կոչես՝ ես ալ Պարսիկները ինամարդի և վատ կը կոչեմ, վերջոտէս այնչափ բարկացուցին զՇապուհ՝ որ յարսար առիթ մը կը վնասուէր Պարսկաստան վախելու :

Հ. Շապուհ կրցաւ այդ առիթը ձեռք ձգել:

Պ. Շամուհ իմանալով իր Յաղկերտ հօրը հիւ ւանդութիւնը՝ ճամբայ ելաւ Պարսկաստան երթալու և դադտնի հրամայեց իր զօրոտակետին՝ որ Հայ նախարարները բոնէ ու Պարսկաստան դրկէ բայց հարիւ ինքը Պարսկաստան հասած էր՝ իր մարտիկներէն սպաննուեցաւ. Յ առի Հայաստանի թագաւորելէն յետոյ . նախարարներն իմանալով այս բան՝ Շապուհին թողարկած զօրացը վրայ յարձակելով բա ջարդ՝ մը տուին . ըսց Պարսից վրամ թագաւորէն վախնալով ամենն ալ իրենց

բերդը քաշուեցան . յետոյ վրամ իր սովորական հարկը ժողվելու համար վառամշապուհի որդին Արտաշէսը թագաւոր դրաւ որ 48 տարեկան էր :

Հ. Արտաշէս ի նչպէս կառավարեց ազգը:

Պ. Անկարդ, մոլի և վաստարարոյ ըլլալով ամենուն առելի եղաւ . Հայոց նախարարներն Արտաշէսին ձանձրացած՝ կուղէին թագաւորութիւնը Պարսից ձգել, թէև սուրբն Սահակ Հայրապետը շատ թախանձեց, շատ աղաջնց և շատ արտասուեց որ նախարարներն այս չար խորհրդէն հեռացնէ, բայց անոնք յամառեալ աւելի լաւ համարեցան Պարսիկ իշխանով կառավարուիլ քան Հայ թագաւորով մը, և Վուամէն ինողեցին որ Պարսիկ իշխան մը դնէ իրենց վրայ, վուամ ալ կանչելով զԱրտաշէս՝ աքսորել տուաւ Յ տարի թագաւորելէն ետքը և զսուրբն Սահակն ալ որ՝ կը պաշտպանէր Արտաշէսը՝ բանտը դնել տուաւ. այսպէս վերջացաւ Արշակունիաց թագաւորութիւնը մը իստաւափ և Յ թուակսնին ՖԲ տաղի զիմանալէն ետքը :

ՄԱՍՆ ԶՈՐՈՐԴԻ  
ՄԱՐԶՊԱՆՔ  
—  
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ  
ՎԵՀՄԻՀՐՇԱՊՈՒՀ Ա. ՄՅՈՒՋՊԱՆՔՆ  
ՄԻՆՉԵԿ  
ԴԱՒԻԹ ՍՍՀԱՌՈՂԻՆԻԻՆ ԿԻՒՐՑՊԱԼԱՏ ԲԱԼԱԾ  
433 — 625

Հ. Արշակունեաց թագաւորութեան վերջանաւէն ետքը ի՞նչպէս կը կառավարուէր Հայաստան։

Պ. Պարսից թագաւորին կողմէն իշխան մը կուդար և հոն նստելով հարկը կը ժողուէր և միանդամայն կը հսկէր Հայոց աշխարհին։ այս իշխանը Մարզպան կ'ըսուէր, և առաջին Մարզպանն եղաւ վէեհմիհրշաղուհ։ որ բնութեամբ իսաղաղասէր և աղնիւ մարդ մ' ըլլալուն՝ և տարի կառավարելէն յետոյ մեռաւ։ Ասոր յաջորդեց վասակ Հայ Մարզպանը, որ Հայ ըլլալով փոխանակ աղգը միխմարելու չարիք չմնաց հասուց աղգին։

Հ. Ինչո՞ւ Յաղկերտ Հայ Մարզպան դրաւ։

Պ. Պարսիկները Հայոց թագաւորութիւնը ձեռք անցունելէ յետոյ՝ ուղեցին անոնց կրօնքն ալ յըն-

Հ. Հայ նախարարներէն ոմանք Պարսկաստան գտնուած ատեննին Հայաստան ի՞նչ վիճակի մէջ էր։

Պ. Շատ հնարքներ մտածեց Յաղկերտ՝ բայց նախարարները չկրցաւ շահիլ. Ատովմ Դնունի և Մանաճիհը Ռշատունի իրենց զօրքերովն երր կը փախէին՝ իմանալով Յաղկերտ, զօրք զրկեց ետեւնուն և զամենքն ալ թբէ անցնել տուաւ. յետոյ Դենշապուհ անունով քննիչ մ' առաքեց որ Հայ յերը շատ նեղեց. թուղթ մ' ալ գրելով հրամայեց որ կամ անոր պատասխանը տան և կամ Պարսից կրօնքն ընդունին, Յովսէփի կաթողիկոս

աղդին միաբան հաւանութեամբը թղթին պատասխանը դրեց :

Հ. Հայոց գրած պատասխանին վրայ ի՞նչ ըրաւ Յագկերտ :

Պ. Սաստիկ բարկանալով հրամայեց որ աղդին բոլոր մեծամեծները Պարսկաստան դան . ուստի նախարարներն ալ ճարերնին հատած Պարսկաստան դացին . Յագկերտ զամենքն ալ բանտ դնել տուաւ և ստիպեց որ հաւատքնին ուրանան և իրեն հետ երկրպագութիւն ընեն Արեգական . բայց նախարարները տեսնելով որ եթէ իրենք Յագկերտին կամքը չկատարեն՝ պիտի նահատակուին և Հայաստան ալ ոսնակու պիտի ըլլայ , ուստի առ երեսս հածութիւն տուին Յագկերտի կամացը , որով մեծամեծ պարդեւներով , մոդերով և զօրքով վերադարձան՝ ի Հայաստան՝ Հայերն ամբողջ կրակապաշտ ընելու համար :

Հ. Մոդերն ի՞նչ ընդունելութիւն գտան Հայերէն :

Պ. Սուրբ Ղեւինդ և ուրիշ աստուածընտիր քահանաներ ժողովրեան հետ միայած լաւ ջարդմէ տալով լրջապատռու փախուցին մոգմեան իր մոդերով . իսկ ուրացեալ նախարարներն Յովսէփ Կաթողիկոսին ուաքն իշխարով իրենց ակամայ ուրոցութեանը վրայ թողութիւն ինդրեցին . բայց վասակ սրտանց ուրացած ըլլաւուն՝ ամեն հնարք

՚ի դորձ կը դնէր քահանաներն ու ժողովուրդը համոզելու՝ որ Յաղկերտի առջեւ յանցաւոր չի դանուին , միւս կողմէն ալ գաղտնի և յայտնի կը ջանար կրակապաշտութիւնը մուծանել Հայոց մէջ , վասն զի Յաղկերտ անոր խոստացած էր Հայոց թագաւորութիւնը . և երբ բունուէր՝ սուտ երդումներով և սուտ զղմամբ կաղատուէր բարեպաշտ Հայոց ձեռքէն :

Հ. Վասակ կրցաւ իր խորհուրդն առաջ տանիլ :

Պ. Այն միջոցին Յաղկերտ Աղուանից երկիրն ալ շատ մոգեր զրկեր էր արեւապաշտութիւնը հոն ալ հաստատելու , բայց Աղուանք չկրնալով դէմ կենալ օգնութիւն ուղեցին Հայերէն . ասոր համար հարկ եղաւ որ Հայ զօրքերն երեքի բաժնուին . առաջին մասը Ներշապուհ Արծրունին տուին Պարսից դէմ պատերազմելու , երկրորդը Պատակայ՝ Հայաստանը պահպանելու , և երրորդը Վարդանայ՝ Աղուանից օգնելու համար , որ երաթալու ատեն Պարսկաց հանդիպելով լաւ ջարդմը տուաւ և փախուց զամենքն ալ . նոյնպէս Աղուանից երկիրն ալ մոգերը ջարդեցին , կրակատունները կործանեցին և Պարսից զօրքերն ալ հալածեցին . և մինչդեռ Վարդան Աղուանից երկիրն այսպէս քաջութիւններ կընէր , ասդին անդգամ Վասակ իրեն յանձնուած զօրքովը Պարսից Միհր .

ներսեհ հաղարապետին կողմն անցաւ , որ նոյն միջոցին Հայաստան եկած էր բաղմաթիւ դօքով և փիզերով :

Հ. Վասակայ այս ընթացքն ի՞նչ աղղեցութիւն բրաւ Հայոց վրայ :

Պ. Իրենց այն դառն վիճակին մէջ աւելի հոգի առած և զօրանալով ամեն կողմէն սկսան ժողովուիլ Սւարայր գիւղին քով իրը 66,000 հոգւոյ չափ որոնց մէջ քահանաներ , վարդապետներ և եպիսկոպոսներ ալ դանուեցաւ . և իրենց սպարապետ ընտրեցին զքաջն վարդան : Հոն ամենքը միաբերան ուխտեցին որ մինչև իրենց արեան վերջին կաթիլը թափելով պաշտպանեն իրենց սուրբ հաւատքը , և չողեղաբանան վեցերորդ երեկոյն որուն երկրորդ օրը պատերազմ պիտի ըլլար , բոլոր վարդանեանք հաղորդուեցան Քրիստոսի սուրբ մարտիրոյ և արեամբը , և ամենքն ալ մահուան պատրաստուեցան . հոն քաջն վարդան և սուրբն Աւանդ մէկ մէկ աղլու յորդորներ կարդացին զօրաց՝ որով ամենքն ալ քաջալերուելով միաբերան , կեցցէ՛ Քրիստոնէութիւն և Հայրենիք , դոչեցին :

Հ. Վարդանանց պատերազմն ի՞նչպէս եղաւ :

Պ. Քրիստոսի եօն թուոյն Յունիսի 2ին , առաջոտուն սկսաւ պատերազմն խիստ կատարութեամբ՝ Սւարայրի դաշտին մէջ ջղմուտ գետին եղերը . քաջն վարդան և ընկերներն այսպիսի

ուժգին զօրութեամբ յարձակեցան Պարսից զօրաց վրայ , որ անոնց կարգն ու կարգագրութիւնները բոլորովին խառնակեցան և մեծ շփոթութիւն մտաւ մէջերնէն . անհնարին էր նկարագրելը կ'ըսէ մեր Եղիշէ տկանատես պատմմոդիրը Վարդանանց քաջութիւնները , մանաւանդ Վարդան՝ կայծակինման ամեն կողմ կը հաւնէր և Պարսիկները անհինայ կը ջարդէր . բայց վերջապէս թշնամեացնեսերէն պաշրուելով զարնուեցաւ մեռաւ . և իրեն հետնահաւակուեցան նոյն օրը ուրիշ քանի մը մանր մունք պատերազմներու մէջ 1036 հոգի . խակ Պարսից կողմէն միայն նոյն օրը 3,500 հողիէն աւելի մեռան . օրն իրիկուն ըլլալով Հայերը ճեղքեցին դարձեալ Պարսից բանակը և իրենց բերդերը քաշուեցան :

Հ. Վասակ ուրիշ ի՞նչ չարիք հասուց Հայոց :

Պ. Խարէութեամբ մարդ կը բռնէր կամ հաւատքնին ուրացնել կուտար և կամ կ'ըսպաննէր . շատ տեղեր կործանեց , թէպէտն շատ աշխատեցաւ որ Հայոց ձեռքն եղած բերդերն առնուեցայց չյաջողեցաւ . Ս. Յովհէփ կաթողիկոսն և Ա. Կուռնդ քահանայն և ուրիշ շատ մը քահանաներ բանելով Պարսկաստան զրկեց . ուստի Հայ նախարարներն ալ Պարսից բերդերուն վրայ յարձակելով մեծամեծ զսամներ հացնել սկսան . Յագիերտ իմանալով բոլոր այս եղածները Ստրորմիզդ անունով Պարսիկ մը Մարզպան դրաւ Հայոց վրայ .

ասի առ երեսս հրաման ըրաւ՝ որ ամեն մարդ ազատ պաշտէ Քրիստոնէական կրօնքը, և ինքը մէկ կողմէն նախարարները բոնելով Պարսկաստան դրկեց Ս. Ղեւօնդեանց հետ :

Հ. Յաղկերտ իրեն դացող քահամաներն ու նա խարարներն ի՞նչ ըրաւ :

Պ. Ղեւօնդեամները սոսկայի տաճանքներովնահատկել տռւաւ, նախարարներուն ալ ստիպեց որ հաւատքնին ուրանան. բայց անոնք յանձն չառնելով՝ երկար առեն բանտը մնալին յետոյ Եղոքակուհ իշխանին աղաջանքովը աղատեցան և Պարսկաստան կը բնակելին :

Հ. Անօրէն Վաստկ ի՞նչ փախճան ունեցաւ :

Պ. Վաստկ որ անձամբ Յաղկերտի դայած եր իր հաւատարիմ ծառայութեան փոխարէնն ընդունելով յանցաւոր դատուելով մահապարտից բանտը նետուեցաւ, ուր որդնոտելով մեւստ Քրիստոսի հ52 թուականին :

Հ. Ո՞րչափ առեն Պարսկաստան կեցան նախարարները :

Պ. Յաղկերտ մեռնելով՝ իրեն յաջորդեց Պերող իր որդին, որն որ նախարարներն ութը տարի իր դործերուն ծառայեցնելով՝ երբ Աստրիշնասպ Մարդպանը Հայաստան կուգար, զանոնք ալ դրկեց իրենց հայրենիքը, որոնք եկան և սկսան աշխատիկ Քրիստոնէութիւնը պայծառացնելու և աղջը

խաղաղութեամբ կառավարերու : Այս միջոցներուն մեծին վարդանայ Հմայեակ եղբօրը մեծ որդին վահան իր քաջութեամբ ու խելացիութեամբը շատ սիրելի եղաւ. Պերող թագաւորին, Պարսկե նախարարաց. և Աստրիշնասպայ որ 20 տարի Հայաստանի Մարդպանութիւնն ըրաւ. ուստի ուրացեալ նախարարները նախամեծելով՝ ամբաստանցին Պերողի գլահան. նա ալ Պերողի աշքն չինալու համար հաւատքն ուրացաւ :

Հ. Վահան նորէն Քրիստոնէութեան դարձա՞ւ :

Պ. Խմանալով Վրաց Վախթմանկ թագաւորին Պարսկայի ապստամբիլը՝ յարմար առելի սեպելով Հայերն ալ յորդորեց որ իրենք ու ապստամբելով Քրիստոնէութեան համար պատերազմին. այս առաջարիութիւնը ունանք բնդումնելով վահանը Սպարապետ և Սահակ Բագրատունին ալ Մարդպան վրին. Խոկ մէկ քանի նախարարները վոխանակ օդնելու՝ դացողներուն ալ արդերք եղան բայց քանի մը նախարարներ ալ առելի Հասարակոց օդուար մասնելով հաստատուն կեցան Վահանայ հետ. Երբ Պերող լսեց Վահանայ ապստամբութիւնը, Աստրիշներուհին ձեռքով շատ զօրք դրկեց, ապստամբութիւնը ողջ բոնել զիտհան :

Հ. Աստրիշներուհ կրցաւ բանել զլահան :

Պ. Վահան թէպէտե շատ ջանաց որ բոլոր նախարարները միաբանէ, բայց չկրցաւ. վան ով

Կախարակներէն ոմանք շահու և փառասիրութեան  
համար Պարսից կողմն անցած էին . ուստի վահան  
ալ Յովհան Մանդակունին հետն առած , թէ ակտե.  
Քիւրո՞ բայց յաղթեց և փախոց բոլոր Պարսիները :

Հ. Պարսիկը ուրիշ զո՞վ զրկեցին վահանայ վրայ :

Պ. Պարսիկը Միհրանն առաքեցին վահանայ վրայ . յետոյ Զարմիհը Հաղպարաւուխար , յետոյ  
Շապուհ Միհրանեանը . ասոնց ամենուն ալ յաղ-  
թեց , միայն անգամ մը Միհրանին դէմ պատե-  
րազմած ժամանակ՝ յաղթուեցաւ՝ վախթանկ վրաց  
թագաւորին խարդախութեամբը , որ Հայոցմէ-  
օդնութիւն ուղեր էր . վահան գնաց և հոն յան-  
կարծակի գալով յաղթուեցաւ , և այս պատե-  
րազմին մէջ Սահակ Բաղրատունին , որ Ա տարի  
Մարզպանութիւն ըրաւ , և վահանին եղբայրը՝  
Վասակ՝ նահատակուեցան :

Հ. Պարսիկը ի՞նչ կերպով հաշուեցան վահա-  
նայ հետ :

Պ. Վահան անգամ մը 30 հոդւալ Շապուհին  
դէմ յաղթութիւն մ'ալ ըրաւ , վասն զի միշտ Առ-  
տուծոյ ապաւնած էր : Այս միջոցին Պերող մեռ-  
նելով իր վաղարշ եղբայրը թագաւորեց Պարսից .  
սա ըստ ԲԱՀԱՆԻ վահանայ անպարտելի քաջու-  
թիւններն ու անոր արդար պահանջմանը՝ նի-  
խոր անոն խաղաղուկը մարդը զրկեց որ եկաւ  
վահանայ դաշնիքն ընդունեց , որոնց գիսաւորն և

առաջինն էր՝ Քրիստոնէութիւնն աղաս պաշտուի  
Հայաստանի մէջ . Նիխոր յանձն առաւ , ուստի  
վահան ալ Պարսից դուռն երթալով երդում ա-  
ռաւ թագաւորէն , և Հայոց ընդհանուր Սպա-  
րապետ դրուելով դարձաւ Հայաստան . Մնդեկան  
Պարսից իշխանն ալ Մարզպան եկաւ :

Հ. Վահան ի՞նչպէս Մարզպան եղաւ :

Պ. Մնդեկան 2 տարի մարզպանութիւն ընելէն  
յետոյ Պարսկաստան երթալով այնքան դումեց զիա-  
հան , որ Վաղարշ Պարսից թագաւորը մարզպանու-  
թիւնը վահանին և առաջապետութիւնը վահանայ  
Վարդ եղբօրը տուաւ . մեծ միջիմարութիւն դտան  
Հայք՝ տեսնելով որ քաջ , քրիստոնեայ , իմաստուն  
և սրելի Հայ իշխան մը Մարզպան դրուեցաւ :

Հ. Վահան կըցաւ Հայաստանը խաղաղութեամբ  
կառավարել :

Պ. Ոչ . Վասն զի Վաղարշ մեռնելով յաջորդեց  
կառաւտ . սա ուղելով Հայերը կրակապաշտ ընել ,  
Պարսիկ Մարզպան մը դրաւ . բայց վահան վրեսեց  
զայն և 26 տարի Հայաստանը կառավարելէ յետոյ  
մեռաւ Քրիստոնի 510 թուականին : Ասոր օրովը  
Հայաստանի մէջ Յովհաննէս Մանդակունի կաթո-  
ղիկոսը կը ծաղկէր , որ Հոդուվ որրով լցուած  
ներհուն անձ մ' էր :

Հ. Վահանին տեղ ով Մարզպան դրուեցաւ :

Պ. Վարդ իւր եղբայրը , որ հարվա 4-5 տարի

մարդպանութիւն ըրաւ . վասն դի մէկ քանչի հոգի  
նախանձելով անոր պատոյն վրայ , ամբաստանու  
թիւն դրեցին . ուստի կաւատ ալ Բուրզան անու-  
նով Պարսիկ մը Մարզպան դրաւ , որ զշայերն Յ  
տարի շատ նեղեց : Այս միջոցին Հոնք Հայաստանի  
վրայ վաղելով շատ աւերմունք կ'ընէին . ասոնց  
դէմն ելաւ Մժէժ Գնունի իշխանը , և աղէկ ջարդ  
մը աալով փախուց . կաւատ Մժէժին այս քաջու-  
թիւնն իմանալով Բուրզանին տեղ Մարզպան դրաւ ,  
որ Յ տարի խաղաղութեամբ աղդը կառավա-  
րելէն ետքը մեռաւ :

**Հ.** Մժէժին տեղ ո՞վ Մարզպան դրուեցաւ :

**Պ.** Ետեւէ ետեւ չորս Մարզպան դրուեցան ,  
Դնչապուհ , վշնասպ Վահրամ , Վարադրատ , Սու-  
քէն . որոնք 40 տարի իշխեցին , ասոնցմէ ոմանք  
աղդը նեղեցին և ոմանք խաղաղութեամբ կառա-  
վարեցին . ասոնց մէջ ամենէն անօրէնը Սուրէնն  
եղաւ . որ շատ չարիք հասուց Հայոց , և Մանուէլ  
Մամիկոնեան իշխանն սպաննեց . ուստի Մանուէլի  
եղբայրը՝ Վարդան՝ բարկանալով զօրք ժողվեց ,  
վաղեց Դուին քաջօնն վրայ , Սուրէնն սպաննեց և  
մոդերն ալ ջարդեց . Խոսրով Պարսից թաղաւորը  
Սուրէնի մահը լսելով շատ զօրք զրկեց Վարդա-  
նոյ վրայ . Վարդան թէտէտ քիչ զօրք ունէր ,  
բայց վարպետութեամբ սլատերազմելով յաղթեց  
թշնամոյն :

**Է.** Սուրէնին տեղ ո՞վ Մարզպան դրուեցաւ :

**Պ.** Խոսրով աւելի մեծ բանակ մ' ալ ճամփեց  
Վարդանայ վրայ . ասի առանձին մնալով Կ . Պօ-  
լիս գնաց , և երբ Յաւատիանոս կայսեր օդնու-  
թեամբը Հայաստան կուղար : Խոսրով ինքն ան-  
ձամբ 140,000 զօրքով վարդանայ վրայ եկաւ , և  
երկու կողմէն սոսկալի ջարդ մ' ըլլալէն ետքը  
վերջապէս Պարսկաց ձեռքը մնաց Հայաստան .  
Խոսրով Հայոց սիրտը շահել ուղելով Ճիհր-Վզոն  
խաղաղասէր Պարսիկը Մարզպան դրաւ՝ որ 14  
տարի կառավարեց , ասի վերջին Պարսիկ Մարզ-  
պանն եղաւ : Այս միջոցին Մովսէս Կաթողիկոս  
Հայոց տօմարը նորոգելով , նոր թուական հաս-  
տատեց որ Քրիստոսի Յօն թուականին կ'սկսի :

**Հ.** Ճիհր-Վզոնին տեղ ո՞վ Մարզպան դրուեցաւ :

**Պ.** Սմբատ բաղմայաղթ կոչուած Հայը՝ իր քա-  
ջութիւններուն համար . ասի 8 տարի մարզպանու-  
թիւն ընելւվ մեռաւ . իրեն յաջորդեց Դասիմթ Սա-  
հառունի՝ որն որ 23 տարի մարզպանութիւն ընե-  
լէն ետքը՝ վախնալով Պարսիկներէն՝ թողուց իշ-  
խանութիւնը Կ . Պօլիս փախաւաւ . այս միջոցին Խոս-  
րով պատճառաւ մը թշնամանալով Մուշեղ Մամի-  
կոնեանի հետ՝ 40,000 զօրքով իր Ճիհրան քեռոր-  
դէն Մուշեղայ դէմ զրկեց , Մուշեղ ալ իր Վահան  
աղդականը օգնութեան կանչեց , որ հնարագիտու-  
թեանը համար Գայլ Վահան կոչուեցաւ . ասի յաղ-

թեց Պարսից և Միհրանն ալ բռնելով պահնեց ,  
և անընդհատ Պարսից դէմ պատերազմելով մեռաւ ,  
իրեն յաջորդեց Սմբատ քաջ և հայրենասէր որ  
դին՝ որ միշտ պատերազմեցաւ Պարսից հետ , յաղ-  
թեց և չորս երեւելի զօրավարնին ալ պահնեց :

### ԳԼՈՒԽ Բ.

ԴԱԻԻԹ ՍԱՀԱՌՈՒՆԻԵՒՆ ԿԻՒՐՊԱՐԱՌԱՏՈՒԹԵՆՔՆ

ՄԻՆՉԵՒ ՀԱՄԱՉԱՍՊ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻՆ

ՊԱՏՐԻԿ Ը.Լ.ՊԱԼ.

634 — 653

Հ. Գաւիթ Սահառունի Մարզպանին ովլ յա-  
ջորդեց :

Պ. Սմբատ քաղմայակիմն որդին՝ Վարավոհրոց  
Մարզպան զբուեցաւ , որ 8 տարիէն Կ. Պօքս փա-  
փառ իր ընտանիքովը : Այս միջոցին Պարսից մէջ  
խռովութիւն ինալով Հայք Յունաց անպատճեցան  
և իշխան մ' ուզեցին , սնոնք ալ Գաւիթ Սա-  
հառունին առաքեցին Կիւրապաղատ գրուեցաւ . Յունաց  
կողմանէ՝ որ տարիէմը մեռնելով իրեն յաջորդեց  
Սմբատ իւր որդին :

Թուականին . բայց և տարիէն վանտեցին Հայերն  
զԴաւիթ , և իրենք սկսան մէկզմէկու հետ կռուիլ  
ու Հայաստանը տակնուվրայ ընել . նոյն միջոցին  
Հադարացիք Հայաստան արշաւելով չարիք շ-  
մնաց որ Հասցնէին Հայոց :

Հ. Հադարացւոց արշաւանացը դէմ դնող չե-  
ղաւ :

Պ. Թէոդորոս Ռշտունի և Վահան Կամսարա-  
կան քաջ իշխանները թէպէտև սկիզբները լաւ  
ջարդ մը տուին , բայց Սահուռ Սնձեւացի և ու-  
րիշներ Հադարացւոց կողմն անցնելով սկսան թըշ-  
նամեռյն հետ Հայերը ջարդել . այսպիսով ցրուե-  
ցան Վահանայ զօրքերը . Հադարացիք մինչեւ  
Դուին առաջ քալեցին , քաղաքը պաշարմամբ  
առին և շատ մարդ ջարդելէն ետքը 35,000 հոգի  
ալ գերի տարին : Հադարացւոց երթագէն ետքը  
Վարազակիրոց՝ Կիւրապաղատ գրուեցաւ . Յունաց  
կողմանէ՝ որ տարիէմը մեռնելով իրեն յաջորդեց  
Սմբատ իւր որդին :

ՎԵՐՋ ԶՈՐՅՈՐԴԻ ՄԱՍԻՆ

ԴՐԱՅՈՒՅՆ

## ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐԲՈՐԴ.

ՊԱՏՐԻԿԵ

ԳԼՈՒԽ ԱՐԴՅՈՒՆ

ՀԱՄԱՁԱՎՊ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻՆ ՊԱՏՐԻԿՈՒԹԵՆՔՆ  
ՄԻՆՉԵՒ ԱՐՑԲԱՅԻՈՅ ԿՈՂՄԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՅ Ա.

Հայութեար ԱՍՏԻԿԱՆԻՆ ԶԱԼՈՒԿԱԾ

655—693

Հ. Սմբատին կիւրապաղատոթեան ատեն՝ Հայք  
Հանդստաղացն :

Պ. Ամբարտին Կիւրապաղասութեան երրորդ առաջին Հազարացիք վերստին Հայաստան դալով մեծամեծ կոստրածներ բրին . ուստի նախնարարը աշխարհ զրկեցին Ամիրապետին՝ որ իրեն կը հնարդանիին . այս լսելով Յայնիք սկսան Հայաստան արշաւել, բայց Ներսէս Գ. Կաթողիկոսին ինդրանօք, Համազասպ Մամիկոնեանը Պատրիկ դրսեցաւ . ասոր օրովն էր որ Դաւիթ ճգնաւորին հայցմամբը Վարագայ սուրբ խաչին դիւնճն եղաւ :

Հ. Համագուստվայ Պատրիկուլթիւնը որչուի տես  
ւեց և իրեն ով յաջորդեց :

Պ. Ամիրապետն իմասնալով որ չայերը դարձեալ Յունաց հպատակեր են, իր քովն եղած պատանդ ներն ամենքն ալ թէրէ անցուց, և երբ կը պատ-

բաստուէր վերստին Հայաստան դալու , ինքն ալ  
եր զօրքերէն սպաննուեցաւ : Ասոր յաջորդին նո-  
րէն հպատակիցն Հայը և քիչ ատենէն Համա-  
դասպ ալ մեռնելով իր եղբայրը Պատրիկ դրուե-  
ցաւ , որ 24 տարի խաղաղութեամբ ազգը կառա-  
վարելէն ետքը՝ Խազրաց պատերազմին մէջ զար-  
նուելով մասաւ : Այս միջոցին երեւելի էին Անանիա  
Եփակացին և Մովսէս Սիսնեցին . Երկու տարինի  
շափ Հայաստան տակն ու վրայ ըլլալէն ետքը՝ Ա-  
շոտ Բագրատունի Բիւրատեան իշխանն ուսաւ Հա-  
յաստանի տիրել , և Հաղարացնց ալ հարկ տալ :

9-Lok P. A.

ԽԱՏՎԱՆՔ

693 - 883

Հ. Աշոտ ո՞րքամի ատեն Պատրիկութիւնը ըրտ ։  
Պ. Յոյնք՝ խմանալով որ Հայերը Հագարացոց  
Հարկատու եղեր են, շատ զօրք դրկելով մե-  
ծամեծ աւերմունքներ ըրին 'ի Հայաստան. Հա-

դարացիք ալ ընդհակառակը կազմելով որ Հայք  
Յունաց հնագանդեր են՝ անոնք ալ շատ հաս հա-  
սուցին Հայոց, թէպէտ Աշոտ ասոնց դէմ դրաւ-  
քանութեամբ՝ բայց ինչն ալ դարնուելով մեռաւ.  
3 տարի Պատրիկութիւն ընելէն ետքը, Քրիստոսի  
693 թուականին, և Հայաստան բոլորովին Հա-  
գարացւոց ձեռքը մնաց, որոնք Ռատիկան անու-  
նով մէկը կը ղըկէին Հայաստանը հսկելու համար :

Հ. Ո՞վ եղաւ առաջին Ռատիկանը :

Պ. Աբգըլլայ Ա., որ շատ չար բլլալուն՝ Սահակ  
կաթուղիկոսն ու նախարարները Դամասկոս դրկեց,  
բայց Սմբատ Բիւրատեան Յունաց օդնութեամբ  
վլնտեց զանի Հայաստանէն. և երբ Մոհմատ զօրա-  
վլորին անհամար զօրքով Հայաստան դալը լուռե-  
ցաւ՝ Սահակ կաթուղիկոս, որ Մոհմատի հետ բա-  
րեկամութիւն ունէր, իսկոյն Դամասկոսէն ճամ-  
բայ ելաւ որ Մոհմատին բարկութիւնը իջեցնէ .  
բայց ճամբան հիւանդանալով աղաչանաց թուրթ-  
մը գրեց ու ինքը վախճանեցաւ. և երբ Մոհմատ  
Մրբոյն մարմնին քովս եկաւ, Կաթուղիկոսն ողջ  
մարդու պէս նամակը Մոհմատին տուաւ և Հա-  
յոց հետ հաշտեցուց ղայն :

Հ. Աբգըլլայ Ռատիկանին ո՞վ յաջորդեց :

Պ. Կոչմ 13 տարի, որ բոլոր ազգին մեծերը և  
նախարարները Նախջեւանի եկեղեցւոյն մէջ ժող-  
վելով ազնել տուաւ : Եսկէ ետքը ետեւէ ետեւ

նստեցան Վիլթ 40 տարի և Մուհամմէտ և տարի  
դաժան մարդիկը, և Աբգըլլային 11 տարի որ բարի  
մարդ մ' էր, ասոր ալ յաջորդեց Մբաւան՝ որ 1  
տարիէն Աշոտ Բագրատունին իշխան դնելով ինքն  
ամիրատիտ եղաւ. որով 15 տարիի չափ խաղա-  
ղացաւ Հայաստան բայց երբ Մբաւան մեռաւ՝ Եէ-  
զմակ անունով չարաճընի մարդ մ' ոստիկան Դըր-  
ուեցաւ՝ 2 տարի որ Հայերը շատ նեղեց . ասոր  
օրով Հայք վզերնին կապարեայ կնիք կը կախէին  
՚ի նշան սարկութեան , ասոր ալ յաջորդեց Սա-  
հակ Բագրատունի բարեղաշտ մարդը՝ որուն վե-  
ցերորդ տարին Սիւլէյման ոստիկան դրկուցաւ ,  
9 տարի և վերջն ալ Պէտքիր անողորմ և անդութ-  
մարդը 7 տարի . ասոր ալ յաջորդեց Հասան՝ 3  
տարի որ ամենէն աւելի նեղեց զՀայերը :

Հ. Հասանին ո՞վ յաջորդեց :

Պ. Մուշեղ Մամիկոնեան Հայ իշխանը՝ որ Հա-  
սանին զօրքերը լաւ մը ջարդելով զինքը վախուց  
Դուլինէն . նոյնպէս Աշոտ մսակեր՝ քանի մ' ան-  
դամ յաղթեց Հագարացւոց, մինչեւ որ եէղիտ Բ.  
շատ զօրքով նուաճեց Հայերը շատ չարիք հաս-  
ցլնելով, բայց վերջը Խուզիմա 11 տարի, Հոլ 13  
տարի և Բագրատ Բագրատունի 32 տարի, այս  
ոստիկաններուն բարութեամբը քիչ մը հանդար-  
տեցան . Բագարատին յաջորդեց Ապուսեթ, 11  
տարի Հայք սաղաննեցին ղայն, ուստի Բուղա

տիկանը դրկուեցաւ, որ Հայաստանն արինլուայ  
ըրաւ և Աշոտ Արծրունին տնով տեղով Գամաս-  
կոս գերի վարեց, նոյնովէս շատ նախարարներ և  
իշխաններ բռնած Պաղտառ գերի տարաւ. առոնց  
մէջն էր Սմբատ սպարապետը, որ թէպէտ Բու-  
զայի առաջնորդեց որ պատռոյ հանի, բայց զայն  
ալ շղթայեալ բանտարկեց՝ ուր զղալով եր ըրա-  
ծին վրայ, Սմբատ խոստովանով ըսուեցաւ. Առկից  
վերջը Սմբատ Բագրատունիին Աշոտ որդին սկսաւ  
խաղղութեամբ կառավարել զՀայաստան :

ՎԵՐ 2

## ՄԱՍՆ ՎԵՅԵՐՈՐԴ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՍՈՍԶԻՆ ԹԱԳԱԽՈՐԾ  
ՄԻՆՉԵՒ ԱՇՈՏ ՈՂՈՐԾԱԾ

885—990

Հ. Ի՞նչպէս սկսաւ Բագրատունեաց թագաւո-  
րութիւնը :

Պ. Սմբատ խոստովանովին Աշոտ՝ հաւա-  
տարմութեամբ Հայաստան ծառուց ծառայելով՝

ժողովրդեամ ալ սիրելի եղաւ, և համբաւը մինչև  
Սմբատապետին ականջը հասաւ՝ որն որ իշխանաց իշ-  
խանի պատիւը տուաւ Աշոտին և անոր յանձնեց  
Հայաստանի հարկը ժողուելը. նախարարներն այս  
բանիս վրայ ուրախանալով Գէորգ Կաթուղիկոսին  
հետ միաբանած խնդրեցին Սմբատապետին՝ որ Ա-  
շոտն իրենց վրայ թագաւոր դնէ, խոստանալով  
որ հաւատարիմ կը մնան. Սմբատապետը խնդրեցին  
կատարեց և Աշոտը թագաւոր դրաւ. Հայաստանի,  
որն որ ամեն կողմիազգեցնելէն ետքը՝ կոստանդ-  
նուպոլիս գնաց Լեռոն կայսեր՝ ուր մեծամեծ պա-  
տիւներ դսուաւ, և վերագարձին Շիրակ համնելով  
հիւանդացաւ և մեռաւ 26 տարի իշխանութիւն  
և 3 տարի թագաւորութիւն ընելէն ետքը :

Հ. Աշոտին ո՞վ յաջորդեց :

Պ. Սմբատ խոր որդին. բայց Սմբատ՝ իր հօրեղ-  
բայրը՝ որ Աշոտին սպարապետն էր, շատ զօրք  
ժողուած պատերազմի ելաւ. և կուզէր ինք թա-  
գաւորել, և երկու անդամ յանդիւեցաւ, ուստի  
Սմբատ՝ Սմբատին տեղին սպարապետ դրաւ. իր Շա-  
պուհ եղբայրը. Եւ երբ Հայաստան քիչ մը խո-  
շացրութեան երես ովհափ աւեմնէր, Ափշին Պարախ  
ոստիկանը նախանձելով Սմբատայ մեծնալուն վրայ՝  
30,000 զօրքով սպամերազմի ելաւ. և յաղթուեցաւ.  
Կոյնովէս Ահմատ Միջազէտի սատիկանը՝ Գաղիկ

Արծրունին (Սմբատայ աղջ ականներէն մին) օդէու-  
թեան առած յանկարծ պատերազմի ելաւ Սմբա-  
տայ դէմ, բայց Սմբատ քաջութեամբ պատերազ-  
մելով յաղթեց Սհմատին և փախուց իր տեղը։  
Հ. Սմբատ Սհմատին յաղթելէն ետքը կրցաւ  
հանդարտիլ։

Պ. Ափշին նորէն պատերազմի ելաւ . Սմբատ ալ  
անօդնական մնալով պատամու տուաւ իր որդին,  
բայց Ափշին երբ կուղէր ուրիշ չարիքներ ալ հաս-  
ցընել՝ սոսկալի մահուամբ սատկեցաւ և իրեն յա-  
ջորդեց Յուսուփի իր եղբայրը։

Հ. Սմբատ Յուսուփին խարդախութիւններէն  
աղատելու համար ի՞նչ ճար մոտածեց։

Պ. Արովհետեւ Սմբատ Յուսուփայ խարդախ  
ըլլալը քաջ գիտէր, ոստիկանաց նեղութիւններէն  
աղատելու համար աղաչեց Սմբատին՝ որ փո-  
խանակ տուքքերն ոստիկանաց ձեռքով տալու,  
ուղղակի իրեն դրկէ . ասոր վրայ Յուսուփի բարկա-  
ցած շատ զօրքով Սմբատայ վրայ եկաւ, բայց անոր  
զօրութիւնն իմանալով հաշտութիւն խօսեցաւ,  
միտքը դնելով որ յարմար առթով մը վրէժը լուծէ։

Հ. Ինչո՞ւ ապստամբեցան նախարարները Սըմ-  
բատէն։

Պ. Եղերացւոց կոստանդին թադաւորը Սմբա-  
տէն ապստամբեցաւ . Սմբատ ալ վրաց Ատրներ-  
ուկի թադաւորին հետ միանալով յաղթեց, և կոս-

տանդինն ալ դերի բռնելով Անկիմելջ կը տահէր .  
բայց չորս ամսէն վերջը դթալով կոստանդինի  
վրայ աղատ թողուց . այս բանս Վրաց թագա-  
ւորը և նախարարը իրենց անպատռութիւն սե-  
պելով, պատերազմի ելան Սմբատայ դէմ, բայց  
յաղթուելով ամենքն ալ դերի բռնուեցան և Սըմ-  
բատ մէկ քանի նախարարաց աչքը կուրցուց և  
Ատրներսէի վրայ դիմալով տղատեց . այս միջոցին  
Գաղիկ Արծրունի Սմբատայ քեռորդին՝ ապստամ-  
բելով գնաց Յուսուփին գով . Յուսուփի ալ քաջ  
գիտնալով որ Հայոց զօրութիւնը տկարացնելու  
միակ միջոց անոնց մէջ երկպառակութիւն ձգելի-  
է . Գաղիկին շատ պատիւներ ընելով թագաւոր  
գրաւ զանի, յետոյ Գաղիկ և Յուսուփի միացած՝  
պատերազմի ելան Սմբատայ դէմ, նա ալ անօդ-  
նական մնալով, Գուդարացւոց երկիրը փախաւ։

Հ. Սմբատ Գուդարացւոց երկիրն ի՞նչ ըրաւ։

Պ. Երբ իմացաւ որ իր Աշոտ և Մուշեղ որդինքը  
յաղթուեր են Սեւորդիներուն մասնութեամբը՝  
ինքն ալ յուսահատելով կապոյտ բերդը քաշուե-  
ցաւ . Յուսուփ Հայրաստանի շոտ մեղենն աւերակ  
ընելցն յետոյ՝ եկաւ կապոյտ բերդը պաշարնց .  
խորամանկ ոստիկանը միշտ Հայերը կը քշէր բեր-  
դին դէմ պատերազմելու համար . Սմբատ տես-  
նելով որ իրեն համար երկու կողմէ ալ Հայերը կը  
ջարդուին, երդումի տանելով Յուսուփին անձին

պաս մը չը հասցնելու՝ անձնատուր եղաւ . Յու-  
սուփի թէն Սմբատը պատուելով ազատ թողուց ,  
բայց յետոյ շատ տաճանքներով նահատակեց  
Քրիստոսի 949 թուականին . 30 տարի թագա-  
ւորելին ետքը Գաղիկ ալ Վասպուրականի մէջ  
սկսաւ թագաւորել :

Հ. Սմբատի ո՞վ յաջորդեց :

Պ. Յուսուփի Հայաստանի ամեն կողմն արին-  
ցուայ ընելին ետքը պահապաններ թողով Պարս-  
կաստան դարձաւ : Բայց Սմբատայ որդին՝ Աշո-  
ք . որ Աշոա Երկաթ ըսուեցաւ , հօրը մահուան  
լուրն առնելուն պէս՝ անմիջապէս 600 հոգւոյ չափ  
մարդ ժողվեց և վաղեց Յուսուփին թագուցած  
պահապաններուն վրայ և սպատիկ ջարդ մը տա-  
լով փախուց . նախարարք Աշոաի քաջութիւնները  
տեսնելով միաբանեցան և զինքը թագաւոր դրին ,  
բայց ոմանք վերջերը նախանձելով ապստամբեցան  
ու նորէն խոռվեցին աշխարհը :

Հ. Այս նեղ միջոցին Աշոտ ո՞ւսկից օդնութիւն  
դժաւ :

Պ. Կոստանդին Պերինեռուժէն Յունաց կայսրն  
իմանալով խեղճութիւններն , Աշոտը՝ Կ. Պօլիս կան-  
չեց , և շատ պատուելին վերջը Յունաց զօրքով դար-  
ձուց իր թագաւորութեանը . Յուսուփի կայսեր օդ-  
նութենէն վախնալով Աշոաին հօրեղբօրդին՝ Ա-  
շոտ սպարապետը թագաւորեցաց , որ Աշոտ ըրբ-

նաւոր ըսուեցաւ . այս պատճառաւ շատ արիւնայ  
հեղ պատերազմներ ըլլալին յետոյ երկու Աշոտները  
հաշուուեցան Յովհաննէս Կաթուղիկոսի միջոցաւ :

Հ. Աշոտ Երկաթ ուրիշ թշնամի անեցած :

Պ. Անկրթութիւնն այն աստիճան տիրած եր  
Հայոց մէջ որ ամենքն ինքնիշխան թագաւորնել  
կուղէին , ինչպէս նաև Աբաս՝ Աշոտի եղբայրն՝  
ապստամբելով սկսաւ պատեքազմիլ . Աշոտ Երկաթ-  
թէպէտեւ յաղմեց , բայց իր քովի տգէտ , փա-  
ռամով և անձնասէր պաշտօնակալներէն յատա-  
հատած հարիւր հողւով Աւան կղղին քաշուեցաւ :

Հ. Սեւան կղղին մէջ Աշոտ Երկաթին ի՞նչ  
դէպք պատահեցաւ :

Պ. Յուսուփի իմանալով Նրոքը անունով անպի-  
տան սոտիկանը Հայաստան գրիեց որ շատ չարիք  
հասուց . Նըսրրէն ետքը Բըշըր՝ որ Սեւան կղղին  
պաշարեց Աշոաը բռնելու համոր , բայց Աշոտ Եր-  
կաթ՝ իր հարիւր կարիճներովն այն աստիճան քա-  
ջութեամբ ուղարկազմեցաւ որ շատ մարդ սպան-  
նեց . թշնամիք սկսան փախչիլ , ինքն ալ ետենաւն  
իյնալով հալածեց զամենքը և Հայաստան դալով  
թագաւորութիւնը ձեռք առաւ . Աբաս եղբօրը  
հետ ալ հաշտաեցաւ . Զե տարի թշուառութեամբ  
թագաւորելին ետքը մեռաւ . Աշոտ Շահնշահ ալ  
բռուեցաւ , որ թագաւորներու թագաւոր ըսել է :

Հ. Աշոտ Երկաթին ո՞վ յաջորդեց :

Պ. Արաս կող եղբայրը՝ որ բոլոր թշնամիներուն  
յաղթելով աթոռն ալ կարս փոխադրեց . ուստի  
Հայաստան քիչ մը խաղաղութեան երես տեսնելով  
սկսաւ ծաղկիլ : Նոյն միջոցին թեր անոն Վրաց և  
Սփիսաղաց թաղաւորը պատերազմի ելաւ Արասաց  
դէմ , և ծաղելով պատղամ զրկեց որ Կարսի Մայր  
եկեղեցին ինք պիտի օձէ Վրաց ծիսով , Արաս  
դէմն ելաւ յաղթեց և թեր թաղաւորը բռնելով  
կարս բերաւ , ցուցուց այս եկեղեցին որ կուղէր  
ինքն օրհնել , յետոյ աչքերը կուրցուց . Արաս 24  
տարի թաղաւորելին ետքը մոռաւ : Ասոր օգով  
Վասովուրականի մէջ Արծրունեաց թաղաւորու-  
թեանը կիշխէր Աշոտ Գերենիկ՝ որ այլազգեաց  
ձեռքը մատնուեցաւ իր Ապլիսարիկ ղօրավարին  
ձեռ քով , բայց վերջը Ապլիսարիկ իր քաջութեամիլը  
պատեց գարձեւալ Աշոտ Գերենիկը :

Հ. Արասին ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Աշոտ Գ. ովն որ հօրը մեռնելին  
նորը սկսած Հայաստան ապաստակողները վոնաներ  
և ինը տարի հոգբենիքը պաշտպանելին յետոյ նա-  
խարագիները Անիի Մայր Եկեղեցւոյ մէջ թաղա-  
ւոր օծեցին . Աշոտի եղբայրը Մուշեղ ալ Կարսի մէջ  
թաղաւորեց . Աշոտ խոսվութիւն չանելու հա-  
մար ձայն չնմենց , թաղաւորական այս ճիւղը  
աթաղաւորութիւն կարաց բռնեցաւ , որ քիչ մը  
վերջը Յունաց անցաւ : Այս միջոցին Համառւն Հա-

դարացւոց զօրակետը Ամիրապետէն ապստամբէն  
լով Հայաստանի վրայ վաղեց . Աշոտ գէզս ելաւ  
սպաննեց զայն , որով Ամիրապետէն թաղաւորական  
թաղ ընդունեցաւ : Աշոտի օրով ծաղկեցան մէջն  
Խոսրով Անձեւացին , Ա. Գրիգոր Նարեկացին և Դե-  
ւոնդ փիղիսոփիան . Աշոտ 26 տարի խաղաղու-  
թեամբ կառավարելէն ետքը մեռաւ , և իր ազ-  
քատասկրութեամիլ համար « Աշոտ ողորմած »  
ըստեցաւ :



### Գլուխ Բ.

ԱՇՈՏ ՈՂՋՐՄԾԵՆ ՄԻԵԶԵՒ ԲՈՒԺԱՏՈՒՆԵԱՑ  
ԹԱԴԱԿԱՌՈՒԹԵԱՑՆ ԿԱՐՄԱՆՈՒՄԸ

990 — 1080

Հ. Աշոտի ո՞վ յաջորդեց :

Պ. Ամաստ Բ. իր անգրանիկ որդին՝ որ իր հօրը  
որէս քաջութեամբ և իմաստով ետամբ սկսաւ աղոք  
կառավարել . շատ շնորհիւններ ըրաւ . Տրդան  
ճակատարապետին ձեռքով Անիի մայր Եկեղեցին  
շնորհ տուաւ , և Անիի շրջապատը ամուր պարիսալ  
մը քանիւ տուաւ՝ որուն համար կըսեն թէ աթը  
տարի հաղարաւոր հոգի աշխատեցան . իսկ քաղ-  
քին բոլոր եկեղեցնեց թիւ և հաղոր և մէկի իր հա-

նեն, և ուամկաց մէջ սովորութիւն էր որ Անփի հազար և մէկ եկեղեցեաց վրայ երդում կ'ընէին : Սմբատ թ. 13 տարի թագաւորելէն ետքը մեռաւ, Քրիստոսի 990 թուականին. Սմբատ թէպէտե խապութեամբ և խոհեմութեամբ թագաւորեց, բայց վերջերն եկեղեցական արարողութեանց դէմ Արդանչելով՝ իր անունը արատաւորեց :

Հ. Սմբատայ ո՞վ յաջորդեց :

Պ. Իր եղբայրը Գագիկ Ա. որ բարեպաշտութեամբ քաղաքաշինութեամբ երեւելի և Բագրատունեաց թագաւորութեամբ պարծանք եղաւ, 30 տարի խաղաղութեամբ թագաւորելէն յետոյ մեռաւ. Ասոր յաջորդեց Յովհաննէս Սմբատ, որ թէպէտ խելացի էր՝ բայց գործունեայ և աշխոյժ շրլալուն՝ շատ չարիքներ պատահեցան Հայաստանի մէջ. իր Սշոտ եղբայրն ապատամբեցաւ, որ քաջ և տաք գլուխ երխուասարդ մ'ըլլալուն՝ վասպուրականի Սինեքերիմ թագաւորէն օդնութիւն առած եկաւ Անին պաշտրեց. բայց Պետրոս Կաթուղիկոս և գրայ թագաւորը միջնորդելով հաշտեցացին. Աշոտ հաշտութեամբ վրայ պղջալով մարդերեց որ Յովհաննէս Սմբատն աղամնէ. ուստի հիւանդ ձեւանալով Յովհաննէսը հրսուիրեց. հոն Յովհաննէս՝ Սշոտին լարած որոդայթն իյնալով աղալոց որ կենացը ինայէ. բայց՝ Ապիլատ իշխանը՝ որ Յովհաննէսը մեռցնել խոստացած էր՝

վոկսանակ մեռցնելու, Անի տարաւ և հոն թագաւորեցնելով՝ ինքն ալ վախաւ :

Հ. Յովհաննէս Սմբատի օրով ի՞նչ պատահեցաւ :

Պ. Ասոր օրով Սկիւթացիք սկսան Հայաստան արշաւել, Վասպուրականի Սինեքերիմ թագաւորը ձեռութենուն ազատելու համար վասպուրականը Յունաց թողուց և ինքը Սերաստիան առաւ. Սկիւթացիք հեազինեան յառաջանալով՝ սկսան մեծամեծ աւերումներ ընել, թէև Վասակ Պահլաւունի քիչ մ' ատեն դէմ զրաւ, բայց ինքն ալ սպաննուեցաւ առանձին աղօթած միջոցին :

Հ. Յովհաննէս Սկիւթացւոց ձեռքէն աղատելու համար ի՞նչ ճար մոտածեց :

Պ. Յովհաննէս չկինալով Սկիւթացւոց դէմ դնել վասիկ կայսեր օգնութեան դիմեց, խոստանալով որ իրեն մեռնելէն յետոյ Անին Յունաց անցնի. Վասիլին յաջորդ եղբայրը՝ Կոստանդին մեռնելու ատեն կիրակոս անուն վատ չքահանայի մը կը յանձնէ Անիի գաշանց թուղթը. ուստի չքահանան պահելով դայն, երբ 10 ձեկին Միքայէլ կայսր կ'ըլլայ՝ ամոր կը յանձնէ և փոխարէն բազում ոսկի կ'ընդունի. այս սովորի մատնութեան հետեւութիւնն եղաւ Բագրատունեաց թագաւորութեան կործանումը. իսկ Յովհաննէս 20 տարի թագաւորելէն ետքը անորդի մեռաւ :

Հ. Յովհաննէս Սմբատին մեռնելէն ետքն ի՞նչ  
վիճակ ունեցաւ Հայաստան :

Պ. Երկու տարիի շափ անտէր մնաց . ուստի  
Խորիկ անունով Պարսէկը , որ Բերկը ի՞նչն քաղաքաւ  
պետն էր , Հայերուն դէմ ոխ պահած ըլլալուն՝  
Ամիրայից օգնութեամբը շատ տեղեր նուաճեց և  
մարդաշափ փոս մը փորել տալով ձեռքն ինկած  
Հայը մորթել տուառ և անոնց արիւնով լեցուց  
փոսը , ինքն ալ արիւնարբու դաղանի պէս մէջը  
լուացուեցաւ : Այս միջոցին վեստ Սարդիս Սիւն-  
եայ իշխանը զօրանալով՝ կուղէր ամենուն վրայ  
թագաւորել :

Հ. Յոյներն Անին առնելու համար ի՞նչ ըրին :

Պ. Միքայէլ կայսրը՝ վեստ Սարդսի թելադրու-  
թեամբ երեք անդամ զօրք դրկեց որ Անին առնեն .  
այս զօրքերը շատ աւերմունքներ ըրին , բայց իշ-  
քենցմէ ալ բազում մարդ կորոնցուցին . ուստի  
չորրորդ անդամ 100,000 զօրքով եկան և Անին  
պաշարեցին Սարդսի օդնութեամբ . վահրամ Պահ-  
լաւունին Անին մէջ դանուած 30,000 զօրքով  
յանկարծ գուրս յարձակելով սոսկալի ջարդ մը  
տուառ , մնացածներն ալ ցիրուցան ըրաւ , այս յաղ-  
թութենէն ետքը կահրամ և նախարարները միտ-  
րանելով Գաղիկ Բ. ը թագաւոր դրին իրենց վրայ :

Հ. Ով էր Գաղիկ Բ. :

Պ. Յովհաննէս Սմբատին Աշոտ եղբօղը որդին

էր , իմաստուն և չնաշխարհիկ կատարելութիւն .  
ներով զարդարեալ . Գաղիկ թագաւորելուն պէս՝  
վեստ Սարդիսը բռնեց ու կապած Անի բերաւ ,  
բայց մէկ քանի նախարարաց ազաշանօքն աղատեց :  
Այս միջոցին Ակիւթացիք վերստին Հայաստանի  
վրայ յարձակեցան . Գաղիկ 16,000 զօրքով անոնց  
գէմն ելու , յաղթեց և հալածեց զանոնք :

Հ. Վեստ Սարդիս ուրիշ ի՞նչ շարիք հասուց :

Պ. Վեստ Սարդիս շարունակ Յոյները կը դրգուեր  
որ Անին ուղին . ուստի երր Միքայէլ կայսրը մե-  
ռաւ . Մոնումախոս իւր յաջորդը սկսաւ Անին պա-  
հանջել . և երր Գաղիկ յանձն շարաւ . Մոնումախոս  
երկու անդամ պատերազմի ելաւ և յաղթուեցաւ :  
Այս միջոցին Հայաստանի մէջ կը ծաղիկը Գրիգոր  
Մագիստրոս մականուանեան՝ որ ոչ միայն Հայոց  
մէջ այլ և Յունաց մէջ երենիք համբաւ ստացաւ :

Հ. Երբոր վեստ Սարդսի խորհուրդը յառաջ  
ըլնաց ի՞նչ ըրբաւ :

Պ. Իրեն պէս քանի մը աղդատեաց նախարար-  
ներու հետ միանալով խորհուրդ տուառ Մոնումա-  
խոս կայսեր՝ որ բարեկամութիւն ձեւացնելով և .  
Պօլիս կանչէ զնագիկ , ու վերջն իրենք Անին կը  
յանձնեն : Գաղիկ իմանալով խորհուրդնին՝ կայ-  
սեր հրաւերը մերժեց , բայց նախարարները սուտ  
երդում ընելով թէ իրենը Անին կը պաշտպանեն ,  
յորդորեցին զինքը որ երթայ , Գաղիկ ելու զնաց

ահեղ երդումն առնելով նախարարներէն ու կաթուզիկոսէն, բայց աւելի ճարը հատնելով քանի թէ համոզեալ:

Հ. Գաղիկ՝ կայսրէն ի՞նչպէս ընդունուեցաւ:

Պ. Մոնոմախոս թէ և սկիզբէն պատիւ և սէր շըցուց, բայց վերջն սկսաւ Անին ուզել, Գաղիկ յանձն շառաւ, բայց երբ Սարգիս և համախոհները Անիին բանալիները կայսեր դրկեցին, այն առեն Գաղիկ յուսահատութենէն թաղաւորութիւնը ձգեց Յ տարի իշխելէն ետքը. կայսրը Գաղիկին քանի մը քաղաքներ տուաւ, ու ինքը Հայաստանի տիրեց Քրիստոսի 1045 թուականին:

Հ. Գաղիկ Բ. թաղաւորութիւնը ձգելէն ետքը ի՞նչ փիճակ ունեցաւ Հայաստան:

Պ. Ամեն տեսակ թշնամիք Հայաստանի վրայ վազ վելով մտքէ չանցած չարիք հասուցին Հայոց. որոնց մէջ նշանաւոր եղան Ցուղրիլ, Ալիասան և Մելիք Շահ. ասմաք, շատ բերդեր կործանեցին, շատ մարդ չարգեցին: Լաստիվերտցի ականատես պատմագիրը Ալիասայ բերդ ըստած ամուբ բերդին մէջ պատահածները, այսպէս կը նկարագրէ. «Ուիրաւորածներէն ոմանք դեռ կէս մը կինդանի, ոմանց վիդը կէս մը կտրած, ձեռուընին ոսուցնին դեմինը կը զարնէին, ոմանց ալ վարդիկ տպաները դրկերնուն յտիշտակուելով դեմինը զարնուած, և ողջ մասցածներուն ըսլու ձոյնը ինաները կը թնտացնէին»:

Հ. Այս ատեններս Հայոց մէջ երկելի ովկ կար: Պ. Այս թշուառութեանց մէջ թաթուլ երեկոի և քաջ իշխանը՝ քանի մը նախարարաց հետ միաբաննելով թշնամեց դէմն ելաւ և յաղթուեցաւ. կռւոյն մէջ թաթուլ Տուղրիլի իշխաններէն մէկուն աղան վիրաւորելով ինքն ալ գերի բռնուեցաւ, և երբ Տուղրիլին դէմն ելաւ, Տուղրիլը ըստոր եթէ տղան ապրի՝ քեզ ալ կ'աղաւում. թաթուլ պատասխան տուաւ, թէ որ ես զարկի չ'ապրիր. մեռաւ տղան և զինքն ալ սպաննեցին: Տուղրիլին յաջորդեց Ալիասալան:

Հ. Ալիասալան ի՞նչ չարիք հասուց Հայոց:

Պ. Երկար ատեն Անին պաշարելէն ետքն առաւ, սոսկալի ջարդեր ընելով քաղաքն ալ գընեթէ կործանեց. յետոյ Գաղիկ Կարսի թաղաւորին հրաման դրկեց որ գայ իրեն հնազանդի, Գաղիկ ալ սուգի հաղուաս հաղած Ալիասալանին դէմն ելաւ, ըսելով որ Տուղրիլի մահուանը համար սուգի մտեր եմ. Ալիասալան վրան խոճալով սիրով պատուեցաւ և խաղաղութեամբ ետ դառցուց. բայց Գաղիկ այսուհետեւ Կարս մնալն ապահով չեալով իշխաններն հեան առած Յունաց Երկիրը դնաց. Կայսրը Ծամնդաւ բերդը տուաւ՝ որով Կարսի թաղաւորութիւնն ալ վերջացաւ՝ Մուշեղ, Աքաս և Գաղիկ երեք թաղաւոր ունենալէն յէտոյ:

Հ. Գաղիկ Յունաց Երկիրին մէջ ի՞նչ կ'ընէր:

Պ. Յունաց երկրին մէջ թէպէտե Հայ թագու-  
լորի անուամբ կը շրջէր Գագիկ, բայց Յոյները ի-  
րենց սովորութեանց համեմատ չարաշար կը նա-  
խատէին զչայս, ինչպէս Կեսարիոյ Մետրապօլիտը՝  
շանը անունը Արմէն դրած էր, իմացաւ զայն Գա-  
գիկ և օր մ' ելաւ Մետրապօլիտին այցելութեան  
դնաց. կերակուրի ատեն ինդրեց Գագիկ՝ շունը  
կանչել, Մետրապօլիտը նեղը մնալով Արմէն Արմէն  
ըսելով շունը կանչեց. Գագիկ աչք ըրաւ ծառա-  
ներուն որ շունն ու Մետրապօլիտը պարկի մը մէջ  
դրին և այնքան ծեծեցին, որ շունն զլրեարա-  
պօլիտը իսածնելով երկուքն ալ սատկեցան:

Հ. Յոյնք այս վրէժն ինչպէս լուծեցին:

Պ. Գագիկ օր մը Կիղիստռա բեռդն երթալով  
պարտէղին մէջ մինակ կը պտըտէր, բերդին պա-  
հապաններն՝ որ Յոյն էին՝ դարան մանելով բռնե-  
ցին և չարաշար տաճանքներով սպաննելէն ետքը՝  
մարմինն ալ բերդէն վար կախեցին, թէև Հայերը  
բազմութեամբ եկան բերդը պաշարեցին, բայց  
բան մը չկրնալով ընել՝ ետ դարձան. յետոյ թշուառ  
Գագիկայ ուկողները Բանիկ անուամբ Հայ մը գի-  
շերանց դերեղմանէն համելով՝ Պիլու քաղաքը  
Գագիկին շնել տուած վանքին մէջ թաղեց,  
Քիստոսի 1070 թուականին:

Հ. Այս միջոցին Հայաստանի ո՞վ կիշխէր:

Պ. Ալփառլանին որդին՝ Մելքոն Շահ, Պարսից

թաղաւորը ըլլալով՝ Հայաստան արշաւեց և Յոյները  
բոլորովին վանտելով՝ ինքը տիրեց Հայաստանի:  
Յ. յապէս վերջացաւ Կարսու և Արծրունեաց թա-  
ղաւորութիւններն ալ Բագրատունեաց թագաւո-  
րութեան վերնալովը, որով թշնամիք արձակ հա-  
մարձակ անտէր տան մը վրան ուղածնուն պէս յար-  
ձակելով՝ մոքէ չանցած չարութիւններ զործեցին:

Վերջ Վեցերորդ ՄԱՍԻՆ

## ՄԱՍԻՆ ԵՅԹԵՐՈՐԴ

ԽՈՒԲԻՆԵԱՆՔ

ԳԼՈՒԽ Ա.Ռ.Ա.ԶԻՆ

ՈՌԻԲԻՆԵԱՆՑ ԽՇԱՋԱԽԻԹԵԱՆ ՍԿՍԵԼՔՆ

ՄԻՆՉԵՒ ԼԵԽՈՆ Բ.Ի ԹԱԳԱԽՈՐ ՕՇՈՒԽԼԸ

1080—1198

Հ. Ռուբինեանց իշխանութիւնը որո՞ւ ձեռքով  
սկսու:

Պ. Բագրատունեաց թաղաւորութեան կործա-  
նումէն 34 տարի ետքը՝ Քիստոսի 1080 թուա-  
կանին՝ Բուրէն անունով իշխան մը՝ որ Բագրա-

տունեաց վերջի թշուառ թագաւոր Գագիկին աղ-  
դականն և կիզլատըայի մէջ բռնուած ժամանակն  
անոր հետ դանուողներէն մէկն էր, կիլիկիոյ կող-  
մերն երթալով հոն բնակող քաջարի Հայոց սիրաը  
փաստկեցաւ, քանի մը հարիւր կտրին դլուխը  
ժողվեց, և օդնական դտաւ նաեւ Գող վասիլ  
կոչուած քաջ և հայրենասէր իշխանը :

Հ. Ռուբէն ի՞նչպէս հաստատեց իր իշխանու-  
թիւնը, և իրեն ո՞վ յաջորդեց:

Պ. Ռուբէն մէկ քանի քաղաքներու տիրեց, Յու-  
նաց դէմալ քանի մը քաջութիւններ ընելէն ետքը  
մեռաւ 16 տարի իշխանով. իրեն յաջորդեց իր որ-  
դին կոստանդին Ա. որ իր քաջութիւններովն ըն-  
դարձակեց տէրութիւնը. և երբ որ Եւրոպայի աղ-  
դերը Ս. Երուսաղէմն Եղիպտացւոց ձեռքէն աղա-  
տելու կ'երթային, օդնեց անոնց, և իշխան Հա-  
յոց կոչուեցաւ. կոստանդին Ա. հինգ տարի իշ-  
խելէն վերջը մեռաւ :

Հ. Ո՞վ յաջորդեց կոստանդինին :

Պ. Թորոս Ա. ասի նախ Յոյներէն Անարդարա  
քաղաքն առաւ, Սկիւթայինները և Պարսիկները՝  
որ Հայաստանի վրայ կուգային, զարկաւ վախուց,  
կիզաստրա բերդին ալ տիրեց, և Մանտալեան երեք  
իշխաններն, որ Գագիկը մեռցնողներն էին, բռնեց  
սպաննեց. և ինքը 23 տարի իշխելէն ետքը մե-  
ռաւ. իրեն յաջորդեց իր եղբայրը, Լեւոն Ա.,

որ քանի մը անառիկ բերդերու տիրելուն համար  
ամենուն՝ ինչուան նաև Յունաց սիրաը վախ ձգեց.  
բայց Նատիոքի Պէտէվի իշխանէն բռնուելով բան-  
տարկուեցաւ, ուստի քանի մը քաղաք և մէկ որ-  
դին պատանդ տալով աղատելէն յետոյ՝ կիլիկիա  
եկտր, մէկէն զօրք ժողվեց, և տուած քաղաք-  
ներն ետ առնելէն զատ այնշափ նեղը խօթեց Պէ-  
տէվին՝ որ ինքը Լեւոնին պատանդներ տալով հա-  
զիւ աղատեցաւ :

Հ. Յունաց կայսրն ի՞նչո՞ւ համար Լեւոնին դէմ  
սպատերազմի ելաւ :

Պ. Լեւոնի այս աստիճան զօրանալը՝ Յունաց  
Պէրբէութէն կայսեր ականջը համնելով մէծ  
պատրաստութեամբ Լեւոնի վրայ պատերազմի  
ելաւ. Լեւոն վախնալով կայսեր բազում զօրացը  
դէմն ելնելու փախաւ ընտանիքով, ուստի կայսրն  
ալ զիկիկիան անտէր գտնելով շատ քաղաք-  
ներու տիրեց, Անարդարան առաւ, Լեւոնն ալ կ.  
Պօլիս գերի տարաւ, թէպէտ ինքն ալ իր զօրաց  
մէծ մասը կորսնցուց :

Հ. Կայսրը Լեւոնին հետ ի՞նչպէս վարուեցաւ :

Պ. Կայսրն զանի տարի մը բանտը պահելէն յե-  
տոյ, վրան գթալով բանտէն հանեց և իր պալատը  
կը պահէր, բայց քանի մը տարիէն վերստին բանտը  
դնել տուաւ, անոր Թորոս որդւոյն հետ. հան

սրախն ցաւէն մեռաւ ի եւոն հետ տարի իշխելէն և կ տարի բանտը կենալէն ետքը . և երբ կիո Մանուէլ կայսր եղաւ, Թորոս բանտէն ելած էր, փախաւ և կիվիկա գալով՝ յայտնեց իր ո՞վ ըլլալը, իշխաններն ալ միաբանելով իշխան դրին իրենց՝ ո՞ր մէկն սկսաւ քաջութիւններ ընել:

Հ. Յունաց կայսրը երբ Թորոսին վախչիլը լսեց ի՞նչ ըրաւ :

Պ. Անդրոնիկոս զօրավարը դրկեց շատ զօրքով՝ որ երթայ Թորոսը շղթայի զարկած Պօլիս բերէ . բայց Թորոս Բ. միշտ արթուն գանուելով այնպիսի քաջութեամբ պատերազմեցաւ որ Յունաց զօրքերուն մեծ ջարդ տալէն յետոյ՝ շատ իշխաններ ալ դերի բռնեց, զօրոնք կայսրը դնել ուղելով՝ ի պատիւ իշխանաց շատ ստակ տուաւ, և Թորոս բոլոր առած սակին գեսպաններուն առջեւ իր զօրացը բաժնեց, և երբ անոնք զարմացան, ըստ Թորոս . կամաւ ըրի՝ որպէս զի նորէն բռնեն ձեր իշխանները . գարճեալ եկաւ Անդրոնիկոս՝ և արիւնահեղ պատերազմով չարաչար յաղթուեցաւ, կայսրը կոստանդին կալամարոս զօրապետն առաքեց, ան ալ յաղթուեցաւ, ուստի Թորոս բոլորովին վորնաց Յոյները կիմիկոյէն :

Հ. Ուրիշ որու հետ պատերազմ ըրաւ Թորոս :

Պ. Իկոնիոյ Գրլը Ասլան Սուլթանը կայսրէն գրդուուած՝ պատերազմի ելաւ, անոր ալ յաղթեց

Թորոս . բայց երբ Մանուէլ կայսրը վերստին մեծ պատրաստութեամբ կիվիկոյ վրայ կուղար՝ հաշտութիւն խօսեցաւ և քանի մը տարի ալ աղքելով, մեռաւ 24 տարի իշխելէն ետքը :

Հ. Թորոս Բ. ին ո՞վ յաջորդեց :

Պ. Թորոսի որդին անչափահաս ըլլալուն՝ Թովլմաս Պայլ անուամբ Լատինացին, որ Թորոսին աներն էր, խնամակալ գրուեցաւ . բայց Մլեհ՝ Թորոսին եղբայրը՝ Բերիոյ Ամիրայէն օգնութիւն առած, եկաւ և շատ խուլութիւն հանելէն յետոյ ինքն սկսաւ իշխել . Մլեհ սահմանակից թշնամի ազգաց հետ պատերազմելով յաղթեց . Յունաց դէմ ալ քանի մ՝ անդամ յաղթութիւններ ըրաւ, բայց իր ժողովրդեան հետ անդթարար վարուելուն՝ ինքն ալ սպաննուեցաւ իր զօրքերէն Յ տարի իշխելէն ետքը :

Հ. Մլեհի մեռնելէն ետքը՝ Հայոց իշխան ո՞վ եղաւ :

Պ. Մլեհի յաջորդեց Ռուբէն Բ. եղբօլորդին՝ սակիվիկոյ վրայ. մեծ խնամք և սէր ունեցաւ . բայց Լամբրոնի Հեթում իշխանին հետ թշնամանալուն՝ Անտիոքի Պէմունտ կոմիէն նենդութեամբ բանուեցաւ, սակայն իր Լեւոն եղբօրը կարիճութեամբը ազատելով վերստին դարձաւ կիվիկա : Ասոր օրով անուանի էր Ներսէս Լամբրոնացի, Տարսոնի Արք Եպիսկոպոսը : Ռուբէն Ա տարի իշխելէն վերը իշխանութեանը Լեւոն եղբօրը յանձնելով՝ վահի մը քաջուեցաւ :

ԳԼՈՒԽ Բ.

ԼԵԿՈՆ Բ. ՌՈՒԻԲԻՆԵԱՆ ՌՈՒԱԶԻՆ ԹՄՋԱԱՀՈՐԵՆ  
ՄԻՉԵԽ ՌՈՒԻԲԻՆԵԱՆՑ ԹՄԴԱԱՀՈՐՈՒԹԵԱՆ

ԿՈՐԾՍՆՈՒՄԸ

1489—1390

Հ. Լեւոն Բ. ի՞նչպէս կառավարեց իր աղջը։  
 Պ. իւր իմաստութեամբը և այլաղջի իշխանաց  
դէմտարած յաղթութիւններովը տէրութիւնն ա-  
մենայն մաստմբ ծաղկեցուց ու քնդարձակեց, ե-  
րուսաղէմի փրայ գացող խաչակիր զօրաց օդներով  
անունը բոլոր եւրոպա տարածեցաւ, և վերջապէս  
Դերմանացւոց կայսրէն՝ թագաւորական թաղ և  
Պապէն Դրօշ մ' ընդունելով՝ Սոոյ մէջ թագաւոր  
օծուեցաւ Դրիգոր Տղայ կոչուած կաթուղիկոսէն.  
Քրիստոսի 1493 թուականին թաղաւոր ըլլալէն  
վերջն ալ՝ քանի մը մեծ յաղթութիւններ ըլաւ  
հկոնիոյ և թերիոյ Ամէրիաներուն դէմ, և Յէ տարի  
թագաւորելէն ետքը մեռաւ։

Հ. Լեւոն Բ. ի ո՞վ յաջորդեց։

Պ. Լեւոնի յաջորդեց իր Զապել անուամբ աղ-  
ջիկը՝ զոր Փիլիպոս անուն Լատինացի մը հետ կար-  
գեցին. այս Փիլիպոսը՝ միայն մօր կողմանէ Հոյ ըլլալուն երկու տարիէն՝ Սոոյ հարատութիւններն  
սկսաւ Անտիոք կրեն՝ Հայ իշխանք բարկանալով

բանս դրին զինքը՝ ուր մեռաւ Զ տարի իշխելէն  
ետքը, այս միջոցին կը ծաղկէին կիլիկիոյ մէջ Մխի-  
թար. Գօշ առակախօսը և Տարսոնի Խաչատուր  
երաժիշտը։

Հ. Փիլիպոսին ո՞վ յաջորդեց։

Պ. Հեթում Ս. Զապելի հետ կարգուելով թա-  
գաւոր եղաւ. ասի Հայաստանը զարդարեց և տես-  
նելով որ Թաղթարք շատ չարիք կը հասցնէն՝ Թա-  
թարստան զնաց Մանգոյ խանին, սիրով ընդուն-  
ուեցաւ և բարեկամութեան դաշնոք զնելով կիլ-  
իկա դարձաւ։ Յայց իկոնիոյ Առաջանը զրաննա-  
խանձելով պատերազմի ելաւ Հեթումի դէմ և յաղ-  
թուեցաւ. դարձնալ Կոստանդնին Լամբրոնի իշխանը  
միարանելով իկոնիոյ Սուլթանին՝ պատերազմի ելան  
և յաղթուեցան; Նոյն միջոցին Եղիպատոսի Փընտուի-  
տար Սուլթանը զօրանալով պահանջեց որ Հեթում  
եղիպատուցմէ առած քաղաքները ետ դարձնէ։

Հ. Հեթում եգիպտացւոց քաղաքները ետ տուաւ։

Պ. Հեթում յանհն չտռաւ, ու իր երկու որդիքը  
Հայոց բանակին հրամանատար կարգելով պա-  
տերազմի զրկեց՝ բայց յաղթուեցան, որոնցմէ  
Թորոս սպաննուեցաւ և Լեւոն զերի բոնուեցաւ.  
Հեթում շատ առակով դնեց զիւռոն, և թագա-  
ւորութիւնը անոր յանձնելով ինքը Դրազարկ ըս-  
տած վաճառք քաշուեցաւ, ուր մեռաւ բարի մահ-  
ուամի և ծ տարի թագաւորելէն ետքը։

Հ. Լեւոն Գ. ի՞նչպէս կառավարեց աղջը :

Պ. Բարեկամաշտ և միանդամայն ուսումնասէր ըլլալուն՝ մէկէն սկսաւ գպրոցներ բանալ ու գիտութիւնը ծաղկեցնել, բայց քիչ ժամանակէն ներքին երկպառակութիւնը այս բարիքներուն ամենն ալ չնչեց, վտան զի իշխաններէն ոմանք, հետք թշնամնալով փնտուխտարը Լեւոնին դէմ գրգռեցին. ան ալ անթիւ զօրքով կիլիկիա եկաւ. Լեւոն անօդնական մնալով փախաւ պահութեցաւ, և թշնամիք ամեն չարիք հասուցին. Լեւոն՝ կիլիկիոյ այս աստիճան աւերմունքը տեսնելով չկրցաւ հանգուրժել, քիչ մը զօրք ժողվեց և իր ծերունի Սմբատ սպարապետին հետ միացած՝ յաղթեց Եղիպատացւոց և վոնտեց զանոնք՝ ինչպէս նաև Իկոնիոյ Սուլթանը. ինքն ալ 19 տարի թագաւորելն ետքը վախճանեցաւ՝ յաջորդ թողլով իրն զչեթում՝ Բ.

Հ. Հեթում Բ. ի՞նչպէս կառավարեց աղջը :

Պ. Կրօնասէր ըլլալուն վանք մը քաշուեցաւ, և իր տեղը Թորոս Գ. ը թագաւորեցուց. Թորոս ալ 3 տարիէն վանք մը քաշուելով ստիպեց որ գարձեալ Հեթում իր եղբայրը թագաւորէ, բայց Սըմբատ իր միւս եղբայրը յափշտակեց թագաւորութիւնը՝ մնչցեռ Թորոս և Հեթում Պոլիս Մարիամ կայորուհին հրատիրուած էին, որ իրենց քոյրն էր, և երբ վերագարձան՝ Սմբատ բոնելով զա-

նոնք Թորոսն սպաննեց և Հեթումին աչքերը կուրցուց. սակայն կոստանդին միւս եղբայրնին սաստիկ բարկանալով Սմբատայ անդթութեանը վրայ՝ պատերազմի ելաւ, և յաղթելով Սմբատին բռնեց բանտ դրաւ և ինքն անոր տեղ թագաւորեց. Հեթումն ալ բանտէն հանելով քովը կը պահէր. բայց երբ հրաշքով Հեթմայ աչքերը բացուեցան ժողովուրդն ուզեց որ նորէն Հեթում թագաւորէ. Կոստանդին ասոր վրայ խռովութիւն հանել կ'ուզէր, ուստի Հեթում զինքն ու Սմբատը կ. Պոլիս զրկեց:

Հ. Հեթում Բ. ո՞րշափ ատեն թագաւորեց և իրեն ո՞վ յաջորդեց:

Պ. Քանի մ' անգամ Եղիպատացւոց ու Լիկայունացւոց յաղթելէն յետոյ՝ թագաւորութիւնը Թօրոս եղբօրը՝ Լեւոն որդւոյն յանձնելով վանք մը քաշուեցաւ. Լեւոն Գ. երկու տարի թագաւորելէն վերջը քոնի մ' իշխանաց վտառութեամբ Թամբարաց Պիղար զօրանվարէն նենդութեամբ բռնուեցաւ և իր իշխաններով հանդերձ սպաննուեցաւ:

Հ. Լեւոն Գ. ին ո՞վ յաջորդեց :

Պ. Լեւոն Գ. ին յաջորդեց իր եղբայրն Օչին, որ մէկէն զօրք գտամորելով յաղթեց Պիղարին և Եղիպատոսի Ամիլային՝ որ բազմութեամբ Կիլիկիոյ վրայ եկած էին, Օչին 12 տարի մնաւ քաջութեամբ և խելքով ազգը կառավարելէն ետեւ մեռաւ, իրեն յաջորդ թողլով իր որդին Լեւոն Ե:

Հ. Լեւոն Ե.ի ատենը Կիլիկիա ի՞նչ վիճակի  
մէջ էր :

Պ. Լեւոն Ե.ի ատենը Եղիպտացիք, Թուրքմէնք,  
և Թաթարք առ հասարակ Կիլիկիոյ վրայ սկսան  
յարձակիլ, որուն պատճառը՝ Լեւոնին Լատին իշ-  
խանաց հետ ըրած թղթակցութիւնն էր՝ որնոր  
Հայոց թագաւորութեանը կործանման պատճառ  
եղաւ : Լեւոն Ե. 24 տարի խեղճութեամբ թա-  
գաւորելին ետքը մեռաւ և իրեն յաջորդեց Յով-  
հաննէս Պայլ Լատին իշխանը՝ որ Հայատեցու-  
թեանը համար մէկ տարիէն սպաննուեցաւ :

Հ. Յովհաննէսին ո՞վ յաջորդեց :

Պ. Գուփիտոն իր եղբայրը՝ զոր երկու տարիէն  
սպաննեցին Հայոց Ազգային եկեղեցւոյն մէջ Լա-  
տին ծես խօթել ուզելուն համար, և իրեն յաջոր-  
դեց կոստանդին Դ. որ թէպէտ ազգաւ Լատին  
էր, բայց խելքով 18 տարի ազգը կառավարեց,  
և Եղիպտացւոց դէմ ալ փառաւոր յաղթութիւն  
մ' ընելով մեռաւ . քիչ մ' ատեն կիլիկիա անտէր  
մասին յետոյ՝ իշխանը միարանելով Լեւոն Զ.  
Լուսիննեանը թագաւոր դրին. որուն միայն մայրը  
Հայ էր՝ այս մարդը իւր իմաստութեամբը բաւ-  
պիտի կառավարէր ազգը, բայց աւա՛զ որ ժա-  
մանակը չօդնեց թշնամի ազգերը զօրացած միշտ  
կիլիկիայ վրայ կը յարձակէին, և Լեւոն օրի-  
նաւոր օդնութիւն չիրնալով դժմել Եւրոպայէն,

Կառավարութիւնը օրբատօրէ վատթարացաւ. թէն  
մէծամեծ խոստումներ շատ կ'ըլլար միշտ չուով-  
մայ Պապէն և Եւրոպայի թագաւորներէն :

Հ. Կիլիկիոյ թագաւորութիւնն ի՞նչաէս վեր-  
ջացաւ :

Պ. Եղիպտառսի Սուլթաննը քանի մ' անդամ Կի-  
լիկիոյ վրայ եկաւ, յաղթեց Լեւոնին, և շատ  
աւելմունքներ ընելին ետքը ետ դարձաւ : Եր-  
կու տարիէն դարձեալ անհամար զօրքով եկաւ և  
բոլոր Կիլիկիան սմապատ դարձուց ու Լեւոնն  
ալ բռնեց, դերի տարաւ Եղիպտոս, 11 տարի  
թագաւորութիւն ընելին ետքը : Այսպէս վերջա-  
ցաւ Կիլիկիոյ թագաւորութիւնը Քրիստոսի 1375  
թուականին : Ուարիննեանց իշխաննութիւնը թէ և  
ընդարձակութեամբ և զօրութեամբ իիստ պղտիկ  
էր, բայց քաջութեան և խոհեմութեան մասին  
շատ մէծ մանաւանդ այնպիսի դարերու մէջ որ  
ամեն կողմէն թշնամիք զօրացած ու Հայոց ար-  
տաքին ուժը տկարացուցած էին :

Հ. Լեւոն Զ. ի՞նչ եղաւ Եղիպտոս :

Պ. Լեւոն 7 տարի ժամանութիւն ետքը՝ ազգ-  
աեցաւ, հրաման առնելով նաև որ՝ ուր որ ուզէ  
երթայ . ուստի Լեւոն նախ Ելուսազէմ դնաց և  
իր ընտանիքը հոն թողլով անցաւ Եւրոպա՝ ուր  
ամեն կողմ թագաւորական պատճեռով ընդունուե-  
լով Փարիզ եկաւ և հոն մեռաւ Նոյեմբեր 19 ր.

Քրիստոսի 1393 թուականին 60 տարուան, և թաղ-  
ւեցաւ կեղեստինեանց վանքին մէջ . 11 տարի թա-  
գաւորելէն 7 տարի Եղիպատոս բանտը մնալէն և  
12 տարի Եւրոպա պանդխտանալէն վերջը :

Ա.ԵՐԶ ԵՈԹԵՐՈՐԴ ՄԱՍԻՆ

## ՄԱՍՆ ՈՒԹԵՐՈՐԴ

ԲՈՆԱԿԱԼԻՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՈՈՒԹԻՆՍԱՆՅ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՆԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԷՆ

ՄԻՆՉԵՒ ՅՈՎՈԿԻՄ Ա. ՊԱՏԻՒԿ Կ. ՊՈԼԱՅՑ

1393—1464

Հ. Յուրիինեանց թագաւորութեան կործանու-  
մէն վերջը ի՞նչ վիճակ ունեցու Հայաստան :

Պ. Յուրիինեանց թագաւորութեան կործանումէն  
ետքը , բոլոր Հայաստան Պատերազմի դաշտ մը  
դարձած էր , վասնդի մէկ կողմէն Պարսիկք որ  
Հայաստանի մեծ մասը իրենց իշխանութեան տոհի  
էր , Արաբացւոց արշաւանքին մնացած զանազան

ամիրաները վանել կուգէին , որոնք անկախ և ինք-  
նազլուխ կ'իշխէին , միւս կողմէն Եղբէֆ Շապան  
Եղիպատոսի Սուլթանը , զիկիիկիան կայրէր , կաւ-  
րէր , կապականէր և ահա արիւն կզակ թշնամի  
մը լէնկիմուր՝ Էօղպէք Թաթարաց թագաւորը  
անհամար զօրքով շատ տեղեր նուաճելէն ետքը  
Հայաստան եկաւ :

Հ. Լէնկիմուրի նշալէս վարուեցաւ Հայոց հետ :  
Պ. Հասած տեղերը սոսկալի անդթութիւններ  
կ'ընէր , կարս քաղաքն առնելով շատ մարդ ջար-  
գեց , յետոյ անցաւ փոքր Ասիա , առաւ Սերաս-  
տիա քաղաքը և որովհետեւ երգուած էր քա-  
ղաքացւոց սրով մարդ չըստաննել , նախ քաղաքին  
զօրքերը ողջ ողջ թաղել առւաւ , յետոյ տղայքն  
և ծերերը ձեռուանին ուստինին կապած դաշտի  
մը մէջ ձգելով կատղած ձիերու կոխկոտեց . իսկ  
քաղքին մէջի բորոտներն ու տկար մարդիկը ինեղ-  
գել տուաւ , ըսելով ևս աղջերուն չինայեցի ,  
դուք ի՞նչ բանի հարկաւոր էք . ասոնք ընկելէն  
վերջը անժիւ բաղմութիւն մ' ալ Խորասան գերի  
տարաւ , և Հայաստանը երկու իշխանի յանձնեց ,  
որոնք զօրանալով իր թագաւորութիւնը կործա-  
նեցին :

Հ. Այս միջոցին ի՞նչ դիմաւոր գիտելիք կոյ  
Հայոց վրայ :

Պ. Լէնկիմուրին Հայաստան արշաւած առեն՝

Սիւնեաց կողմերը կը զօրանար Պէլքինէ անուամբ  
կարիծ Հայ իշխան մը , որ վաթսուն հաղպարի չափ  
Հայ ընտանիք կը ինամէր և օր աւուր իր քառ  
ջութեամբն ու աղբասիրութեամբը մեծ համբաւ  
կը տարածէր Հայաստանի մէջ . բայց Վրաց թագաւորը նախանձելով Ամեստին անուամբ վատ Հայու  
մը ձեռքով թունաւորել և սպաննել տուաւ  
զանի , որ Հայերը մեծ տուգի մէջ ձդեց . թէպէտն  
Ամեստին ալ իր աղժանաւոր պատիմն առաւ  
Հայերէն՝ որ զինքը չարաշար սպաննեցին : Այս  
միջոցին Սուլթան Մէհմէտ Բ. Ֆաթիհ կոչեցիալ  
Օսմանցւոյ թադաւորը՝ Կ. Պօլիսը Յունաց ձեռքէն  
առաւ , և վաճառականութիւնն ու արհետաները ծագեցնելու համար շատ երեւելի Հայ արհետագէտներ բերել տուաւ ու Պօլսոյ զանազն  
կողմերը բնակեցուց , և իրենց գլուխ կարգեց  
Պատրիկ մը Քրիստոսի 1461 թուականին , իշխանութիւնն տալով իշխել փոքր Հայոց և Յունաց տանի մէջ գտնուած Հայերուն :

ԳԵՐՋ ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍԻՆ

## ՄԱՍԻ ԻՆՆԵՐՈՐԴ

ՊԱՏՐԻԿՁ

ԳԼՈՒԽ Ա.

ՅՈՎԱԿԻՄ Ա. ՊԱՏՐԻԿԻՆ

ՄԻՆՉԵԿ ԱԼԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ

1461 — 1704

Հ. Ովելաւ Ա. Պատրիկ :

Պ. Ֆաթիհ՝ բոլոր Յունաստանի տիրելին յետոյ ,  
կուզեր նաև տէր ըլլալ Հայաստանի , բայց այս մեծ  
գործը առանց արեան և գիւրաւ դլուխ հանելն  
անկարելի էր , ուստի՝ իրեն նախկին բարեկամ  
Պրուսայու առաջնորդ՝ Յովլակիմ եպիսկոպոսին  
դիմելով յայտնեց իւր խորհուրդը , խօսացաւ նաև  
զինւորական պահպանութենէն ու տրոց հաւա-  
քումէն զատ իրաւունքներն Հայ աղդէն Պատրիկ  
անուամբ մէկուն յանձնել և աթոռն ալ Կ. Պօլիս  
հաստատել . երբ այս առաջարկութիւնն իմացաւ  
Յովլակիմ եպիսկոպոս ուրախութենէն անմիջապէս  
իջմիածնայ և Սոյե Կաթուղիկոսներուն , գաւառաց  
Եպիսկոպոսներուն , իշխաններուն գրեց և անսնց  
ձեռօք , յորդորեց զագգը և հաղատակեցուց Օս-  
մանեան քաղցր լուծին , ուստի Պաթիկ ալ Յովլակիմ

Եպիսկոպոսը Պատրիկ դրաւ Հայոց վրայ և ինչ  
իշխանութիւն ու արտօնութիւն որ տուեր էր կը ո-  
նապէս Յունաց պատրիարքին նոյնը յար և նմանը  
տուաւ Հայոց Պատրիկին Հայ աղդին գոյութեան  
ու Հայ Եկեղեցւոյ անկախութեան համար :

Հ. Այս միջոցին ո՞վ էր Էջմիածնայ Կաթուղիկոս :  
Պ. Էջմիածնայ Կաթուղիկոսն էր Գրիգոր Փ.  
Մակուեցի : Ասոր օրով Սարդիս անուն վարդա-  
պետ մը գովնալով Ս. Լուսաւորչայ աջը՝ Դավիթ Ժ-  
տարաւ , և շատ ալ ընծաներ տուած՝ Ճիհան Շա-  
հին դնաց Կաթուղիկոսութիւնն առնելու համար .  
բայց Աղթամարայ Զաքարիա Կաթուղիկոսը՝ Ճի-  
հան Շահ իշխանին մօրն աղաչելով՝ Էջմիածնայ  
Կաթուղիկոսութիւնն ինքն առաւ : Յովակիմ Պատ-  
րիարք Ա՛ տարի աղդը խաղաղութեամբ կառա-  
վարելէն ետքը մեռաւ :

Հ. Յովակիմ Պատրիարքին որո՞նք յաջորդեցին :

Պ. Հետզիետէ նստեցան Նիկողայոս Ա. Ա տա-  
րի . Կարապետ Ա. 20 տարի . Մարտիրոս Ա. 20  
տարի . Գրիգոր Ա. 11 տարի . Աստուածատուր Ա.  
13 տարի : Ասոր օրովն Էջմիածնայ Ստեփան կա-  
թուղիկոս , Սեփաստացի Միքայէլ Եպիսկոպոսը  
իրեն յաջորդ կարգելով շատ ընծաներ առած կ.  
Պօլիս Սուլթան Սիւլյամանին եկաւ , որ Քանունի  
կը կոչուէր , աղաչելու համար որ Էջմիածնայ վրայ  
եղած բռնութիւններն և ծանր տուրքը թեթեւ

յընէ . նոյնալէս Պարսից Շահ - Թահմաղ թագաւո-  
րին լատ ընծաներ զրկեց՝ աղաչելով որ խնայէ Հա-  
յոց , և արդիլէ ասպատակները նեղութիւն տալէ  
վանօրէլց և եկեղեցեաց . թէ Սուլթանը և թէ  
Պարսից Շահը զիջանելով անոր աղաչանացը՝ սկսան  
հոդ աանիլ Քրիստոնէց վրայ : Ստեփանոս Կաթու-  
ղիկոս քիչ մ' ստեն կ . Պօլիս կենալով , անցաւ  
Գերմանիա Կարոլոս Ե . Մադաւորին հետ տեսնուե-  
ցաւ . յետոյ գնաց Լեհաստան՝ ուր Հայերէն մեծ  
ընդունելութիւն գտաւ և շատ ստվագեցին որ հոն  
մնայ . բայց քիչ մ' ստեն հոն կենալէն վերջը  
Ռուսաստան գնաց , և բոլոր դաղթեալ Հայերը  
միսիթարէլէն ետքը դարձաւ յԷջմիածին :

Հ. Աստուածատուր Պատրիարքին ո՞վ յաջորդեց :

Պ. Ստեփան Ա . 11 տարի : Ասոր ալ յաջորդեց  
Տիրատուր՝ զոր 2 տարիէն դահէն վար առին՝ ժո-  
ղովուրդը կեղեքելուն համար : Ասի գնաց առան-  
ձինն՝ Սոյս Կաթողիկոս ձեռնադրուեցաւ մինչդեռ  
օրինաւոր Կաթուղիկոս ունէր ամուս . ասոր պատ-  
ճառաւ Երկպառակութիւն մտնելով Հայոց մէջ զի-  
րար նախատել սկսան . Տիրատուրէն վերջը Պատ-  
րիարք եղաւ Յակոբ Ա : Ասոր օրով Կաթուղիկոսին  
աղաչանքովը Շահ - Թահմաղ Հայաստանի , գրեթէ  
գեռ նոր շնորհեր էր զիսաղալութիւն , ասպա-  
տակները դադրեցնելով , ծառաները զինքը խեղ-  
դեցին , և իրեն յաջորդեց Շահ - Իսմայիլ իր որդին :

Սա այնչափ անդութիւնը էր՝ որ չէ թէ Հայոց՝ այլ  
Պարսկաց մեծամեծներն ամենքն ալ թրէ անցուց :  
Նոյն միջոցին Սուլթան Մուրատ՝ Պարսկաստանի  
շիոթութիւնն իմանալով՝ ահաղին բանակ մը դրկեց  
Հայաստան՝ Լալա վաշայի հրամանառութեամբը  
որ Երեւանայ վրայ գալով Նախիջեւան, Չալտի, Բ.  
Դավթէժքաղաքներն առաւ, և 60,000 ի չափ Հայ  
գերի առնելով Յունաստան տարաւ, Յակոբ Պատ-  
րիարք Ա տարի ազդը կառավարելէն Ետքը մեռաւ :

Հ. Յակոբ Պատրիարքին որո՞նք յաջորդեցին :

Պ. Յովհաննէս Ա. 8 տարի. Թուլմաս Ա. 10 տարի  
Սարգիս Ա. 3 տարի. Յովհաննէս Բ. 1 տարի և  
Աղարիս Ա. որ կաթողիկոս տանն Սոյ էր, 1 տա-  
րի : Ասոր ալ յաջորդեց Սարգիս Բ. որ 3 տարի  
պատրիարքութիւն ընելէն յետոյ՝ Սոյ ինքնուիր  
Կաթողիկոս Տիրատուր Պօլիս դարձվ, կաշուօք  
պատրիարքական դահն ելաւ դարձեալ : Ասոր օրով  
Էջմիածին պարտական ինալով Մելքիսեդ Ա. Էջ-  
միածնայ Կաթողիկոսը կ. Պօլիս եկաւ հանդա-  
նակութեան համար : Պօլսեցիք շատ սիրավ ընդու-  
նեցին դիմքը և կուզէին Պատրիարք դնել : Կա-  
թուղիկոսը շատ դէմ կենալէն Ետքը՝ զիջանելով  
ժողովրդեան թախամնանաց՝ Տիրատուրը վարառ-  
նելով, որ Երեք տարիէ ՚ի վեր պատրիարքութիւն  
կ'ընէր, ինքը Պատրիարք եղաւ : Այս միջոցին սոս-  
կալի մը տիրեց Հայաստանի մէջ, և յնտոյ

սորուակների մահուարամամ մ' ալ հանելով՝ շատ  
գիւղեր և քաղաքներ ունարդականուկ եղան :

Հ. Մելքիսեդ Կաթուղիկոս որչափ տառն Պատ-  
րիարքութիւն ըրաւ :

Պ. Հայիւր տարի մը կորող եղաւ շարունակել  
իւր պաշտօնը և հրաժարեցաւ : Երեն յաջորդեց  
Յովհաննէս Գ. խուլ Սէկ տարիին Կրիզոր Բ. Կե-  
սարացի եւպիսկոպոսը պատրիարքութիւնն առնե-  
լով սկսու ինքը կառավարել ազգը : Սա բարի և  
աղղառից անձ մ' ըստան ժողովրդեան մեծ հոգ-  
կը տանէր : Ասոր օրով Շահ-Արաս Հայաստանը  
Օսմանյաց ձեռքէն առաւ և ինքը տիրեց բոլո-  
րովին . Էջմիածնայ Կաթուղիկոսն ալ կանչելով մեծ  
գումար մը պահանջեց անկէ, բայց նա չկրնալով  
վճարել բանոտ դրսեցաւ, և երկար առեն հան-  
ձնալէն վերջը՝ Պարսկաստանի Հայք իրենց մէջ  
հանդանակութիւն ընելով օրարտքը տուին և կա-  
թուղիկոսը աղատնցին :

Հ. Շահ-Արաս ուրիշինչ անդիմութիւններ ըրաւ :

Պ. Հայաստանի մէջ Օսմաննեան պահապան զօրաց  
Շահ-Արասէն յաղթուելուն լուրը և Զօլիս հաննե-  
լուն ոլէն՝ Սուլթան Ահմէտ՝ ձաւդէզատէ Սինան  
փաշան անհամար զօրքով Պարսից դէմ պէկեց .  
Շահ-Արաս տեսնելով որ չպիտի կարենայ յաղթել  
Օսմաննեանց, հրաման ըրաւ որ բոլոր Հայ ընտա-  
7

նիքները ժողովն Արարատայ դաշտին մէջ, և ա-  
նոնց քաղաքներն, աւաններն ու գեղերն այրեն,  
և Հայերն արտօրնօք Պարսկաստան տանին. որպէս  
զի՝ Երբ Օսմանցիք դան՝ պաշար և բնակութիւն  
չի դանան :

Հ. Հայոց այս դադթականութիւնն ի՞նչպէս եղաւ  
Պ. Այս բռնի դադթականութեան մէջ թշուառ  
և անտէր Հայերուն կրած տառապանքներն ան-  
նկարագրելի են. վասն զի Պարսիկներն անդադար  
յառաջ կը մղէին զիրենք առանց հանդիստ տա-  
լու, տկարներն ու ծերերը չարաչար կը ծեծէին,  
մէկ քանին ցիցը և մէկ քանին ալ կախաղան հա-  
նեցին, որպէս զի՝ մէկանները վախնան և շուտով  
յառաջ երթան : Երբ Երասխ գետին քով հասան՝  
ըստ որ և Ի աճապարէին որ Օսմանցիք չամնին,  
բաւական նաւակ ու լսատ չ'ըլլալով սկսան ժողո-  
վուրդը գետը ձգել, որ լողալով անցնին, ասով  
անհամար մարդիկ խեղդուեցան . գետէն և սուրէն  
աղաստողներուն թիւն էր 12,000 ընտանիք, ասոնք  
Նոր-Զօւղայ ըստածք քաղաքը շինեցին . Շահ-Արաս  
Հայոց սիրու վաստկելու համար տուրքերնին թե-  
թեցուց և հետերնին գլութեամբ վարուիլ սկսաւ :

Հ. Այս միջոցին Հայաստանի մէջ յիշատակի  
արժանի ի՞նչ դէմք պատճեցաւ :

Պ. Մինչդեռ Հայաստան այսչափ անտանելի նե-  
ղութեամբ կը տառապէր, եկեղեցիները կը քան-

դուէին, վահքերը կը կողոպտուէին և կրօնի պաշ-  
տօնեայք՝ ոմանք իրենց ժողովրդոցը հետ կ'եր-  
թային, և ոմանք իրենց ուխտեալ վահքերուն մէջ  
դանուած սրբոց մասունքները և նույնական ա-  
նօթները անարատ պահելու համար սմողուլ կը  
հսկէին . և ահա այս միջոցին Լատին կրօնաւորք  
յարմար առիթ սեղելով Հայաստանի ամսպու-  
թիւնը՝ սկսան խումբ խումբ հան վաղել, որոնց  
երկուքը Մելքիսեդ Կաթուղիկոսին հանդիպելով  
ընծաներ մատուցին, նա մարդաբարութեամբ ըն-  
դունեց զաննոք յլջմիածին . Լատինք շուտով բա-  
րեկամայան միարաններուն հետ և համորձակ  
կը պարաէին մերձակայ վանքերը . ամեն օր Հռիփ-  
սիմեանց Գոյիանեանց վանքերը կ'երթային՝ որոնց  
երկուքն ալ քանդուած էին . և որովհետեւ Լա-  
տինք դիտէին սրբոց մասանց՝ վանքին ո՛ր կողմն  
ըլլալ . սկսան այն կորմը քակել :

Հ. Լատինք կրցա՞ն գողնալ սրբոց մասունքները :

Պ. Վանքին մէջ մատուռին երկաթէ գուռը չը  
կրնալով կոտրել, աւագ խորանին տակէն պատը  
ծակելով մատուռն իջան, և սկսան փորել . Հռիփ-  
սիմեանց ոսկերց արկղը գանելով գուրս հանեցին,  
բացին արկղը և Երբ մասունքները կտաւով քսակ-  
ն՛րու մէջ դնել սկսան, Եջմիածնէն երկու եպիս-  
կոպոս այն կողմերն եկած ըլլալով վանքին մօ-  
տեցան, Լատինք շատ ջանացին որ եպիսկոպոսները

անկէ հեռացննն , բայց անոնք խորադիառ թեամբ  
մտան տաճորը , և տեսնելով Հռիփոխմեանց ու-  
կերց արկզը զարհութեցան , և շուտ մը Լատին կրօ-  
նաւորները ծեծելով վանքին դուրս վանակցին ,  
արկզն ալ էջմիածին ըերբն նոյն գիշերը , և հուն-  
եալ օրը հանդիսիւ ամբողջ միարանք գարձեալ եւր  
տեղը աւարին կաթուրիկոսին հրամանաւ . Այս Էա-  
ախները թէպէտ շատ տեղերէ գողութիւններ ը-  
րին՝ բայց ամենքն ալ ձեռուրնուն աւանուեցան Զու-  
զոյեցի նազար մեծ իշխանին շնորհէւ , որ նոյն ա-  
տենը Պարսից Շահին սիրելին ու խորհրդակիցն էր :

Հ. Նոյն օրերն ուրիշ ի՞նչ երեւելի գործ պա-  
տահեցաւ :

Գ. Շահ-Արաս Պարսից թաղաւորն ուղելով Հա-  
յերը բոլորովին պաշեցնել Հայաստանէն , միտքը  
դրաւ էջմիածինը կործանել և անոր քարերով նոր  
էջմիածին մը շինել Սպահանայ Պարսից երկրին մէջ  
և հոն բերել տալ Ա. Լուսաւորչայ աջը . այս խոր-  
հուրդը յայսնեց իր խորհրդակից Խօճա նազարին .  
Նազար որ ճարտարախօսութեամբ երեւելի եղած  
էր արքունեաց մէջ ըստաւ . « Տէր արքայ , ելքէ  
էր արքունեաց մէջ ըստաւ . « Տէր արքայ , ելքէ  
դուք կամք կընէք հոս էջմիածին մը շինել , ինչու  
Այրարատայ էջմիածնին քարերը հոս փախադ-  
րաբնք . դուք կարող էք ոչ թէ քարէ այլ ոսկիէ շի-  
րենք . բայց երբոր քարէ շինել կը հաճիք , հոս ձեր  
նել . բայց երբոր քարէ շինել կը հաճիք , հոս ձեր  
իշխանութեան տակ շատ աղնիւ քարեր կը դանուին

անոնցմով աւելի փառաւոր կըլլայ , և մհնք ազօ-  
թով կըլլամնք քու կինացդ : Այս խօսքով թէե  
զիջաւ Շահ-Արաս տա երեսա , բայց հետեւեալ  
օրը հրաման ըրաւ Ամիրդաւնայ թահմազգութի  
նախարարին՝ որ կաթուրիկոսն ու Լուսաւորչայ  
Աջն իրեն զրիէ , Թահմազգութի խկայն զնաց էջ-  
միածին , Ա. Լուսաւորչայ Աջը ոսկիփապատ աւե-  
տարան մը և արծաթ խաչ մը Մելքիսեծ կաթու-  
զիկոսին հետ Սպահան առաջեց :

Հ. Գրիգոր Բ. Կեսարացի որբակ նստաւ պատ-  
րիարք :

Գ. Յովհաննէս Գ. . խուլ մականուանեալ . հա-  
կառակելով Գրիգորի՝ Յ տարիէն վերջը վերասին  
Պատրիարք եղաւ , բայց Ա տարիէն ժողովրդէն  
հայածուելով գարձեալ Գրիգոր Բ. Պատրիարք  
զրուեցաւ , որ 10 տարի խաղաղութեամբ կա-  
ռավարեց ազգը . և սրբինեւ մաս մ' անձննք  
Յովհաննէսը կողէին շատ սատկ վասնելով դար-  
ձեալ զանի պատրիարքական գանձը հանեցին որ  
2 տարի իշխանութիւն վարելով գարձեալ Գրիգոր  
Բ. Պատրիարք եղաւ , և Յ տարիէն հրաժարելով  
Զաքարիա Ա. Վանցի՝ Պատրիարք նստաւ : Ասոր  
օրով երեւելի էր Մոխիս Կաթուրիկոս՝ որ էջ-  
միածնը և բոլոր անոր շրջակայ վանքերը նորո-  
գեց , հաստատեց նաև գոլոցներ , և գիշեր ցե-  
րեկ անդուլ աշխանելով աշակելաներ կը հասցը-

նէր, Հայաստանի ամեն կողմ նուիրակ զրկելով  
վանքերու և եկեղեցիներու շնութեան պէտքերը  
կը հոգար: Ասոր օրով Գաղատացի Յովհաննէս  
անոն վարդապետ մը՝ Հայոց տառեր ձուշելով  
ժամադիրը, Սաղմոս և այլն տպել տուաւ:

Հ. Զաքարիա ո՞չոսի ատեն պատրիարքութիւն  
ըբաւ:

Պ. Հինգ տարի, և հետղիետէ նստան Յովհաննէս Դ. խուլ, չորրորդ անդամ; Յ տարի. դարձեալ Զաքարիա՝ Յ տարի: Ասոր օրով Լեհաստան գաղթով Հայոց մէջ մեծ գժառութիւն ելաւ իրենց նիկու անոն անարժան Եպիսկոպոսին՝ Հայ Եկեղեցւոյն մէջ Լատին ծէս մտցնել ուղելուն համար. Մոլոէս Կաթոլիկոս շատ յորդպեց զանի և Գրիգոր Կեսարացի հրաժարեալ Պատրիարքը զրկեց՝ որ համոզէ ղնիկու, բայց անօգուտ եղաւ. Նորէն Կաթողիկոսն իր աշակերտներէն կեսարացի Խաչատոր վարդապետն առաջեց՝ որ ճարտարախօս և խելացի անձ մ' էր. շատ աշխատեցաւ Խաչատոր՝ որ համոզէ ղնիկու և ժողովրդեան հետ հաշուեցնէ, բայց անկարելի եղաւ:

Հ. Նիկոլ ի՞նչ հնորք մտածեց Կաթուղիկոսին  
ձեռքէն աղասիելու համար:

Պ. Այն առևելները Լատին կրօնաւորները զորացած էին Լեհաստանի մէջ. Նիկոլ անոնց գիմեց, ըուելով որ հսկ ժողովուրդս Հայ Կաթուղիկոսին

իրաւասութեանը տակ չենք ուզեր կենալ. այս որ լսեցին Լատինք՝ սկսան ամեն ճիգ թափել, Նիկոլ անոնց հետ միացած՝ նախ Կաթուղիկոսին զրկած Խաչատոր վարդապետն աքսորել տուաւ իրը խոսվարար, և յետոյ չարիք չմնաց հասուց Հայ ժողովուրդին գլխուն, թէ և ժողովուրդը շարունակ կը մարտնչէր Լատին կրօնաւորաց դէմ՝ իր մայրէնի և ուղղափառ եկեղեցիէն չղատուելու համար, և ամեն զոհողութիւն չինայեց թէ նիւթապէս և թէ բարոյապէս. բայց Լատինք և Նիկոլ որ առանց ժողովրդին հաւանութեամբը եպիսկոպոս եղած էր, վերջապէս յաղթող գտնուեցան, և 40 հաղար Հայ ընտանիք պատականութեան մէջ իյնալով, երենց սիրելի աղդութիւնը բոլորովին մուցան:

Հ. Լեհաստանի Հայերը ուսկից դաղթած էին:

Պ. Բագրատունեաց կործանելէն ետքը Անեցիք բարբարոս աղդաց բանութիւններէն աղասիելու համար, ինչքերնին ժողուելով Խըրըմ անցան, անկէ մաս մը Մալտաիա և մեծ մաս մ' ալ Լեհաստան գաղղեցին, հսկ հետղիետէ բաղմանալով 40,000 տաւն եղան. Լեհաց թագաւորն Հայոց աղդայնութեան իրաւանքները ճանչալով վայթ անունով Հայ Կառավարիչ մը դրաւ՝ որ աղդային գատաստանները աւենէ, և 1516 ին Սիկրունաւ թաղաւորին հրամանաւը Լեմպէրէի մէջ Հայոց գատաստանարանը չինուեցաւ. այս քաղ-

քին մէջ Հայք այնչափ զօրսոցան և հարստացան՝  
որ գրեթե Աւհաց ակրութեան բոլոր երեւելի գա-  
ղաքներուն մէջ իրենց վաճառականութիւնն ու ար-  
հեստը աարածեցին . և մինչեւ Հիմայ Արծէնին  
անուամբ շուկաներ , պողոտաներ և փողոցներ շատ  
կը գտնուին , Զինուորութեան մէջ ալ շատ յառա-  
ջադիմաւթիւններ ըրին և իրենց համբաւը ուրիշ  
երկիրներու մէջ գտնուող Հայերու քաջութերութիւն  
և խրախոյս կուտար , բայց այն Նիկոլ անուն վաս  
եալիսկոպոսին ձեռքսով ի պատճեանութիւն առաջ-  
նորդեցան ի մեծ ուուղ ընդհանուր Հայութեան :

Հ. Գտրարիս Պատրիարքին ո՞վ յաջորդեց :

Պ. Գաւիթ Ա. Սրեւելյի , որ կշմբածնէն նախ-  
րակ եկած եր , բայց 2 տարիին աթոռէն վար  
առնուելով Երեւանցի Կիրակոս վարդապետ Պատ-  
րիարք ուրուեցաւ : Ասի բարի և ազդասեր մարդ  
մ' ըրբալուն զենքերն այցելութեան ելաւ , երբ  
Պրուսա հաստ , Հայք խիստ մեծ պատուով ըն-  
դունեցին զինքը . և որսինեամեւ դատաւորը Հա-  
յերը շատ կ'ատէր , տեսնելով Պատրիարքին այն-  
չափ փառաւսպուիլը բարիկացաւ սաստիկ և հրա-  
մայեց որ կործանեն Հայոց եկեղեցին . այս լուրը  
կ . Պօլիս նասուող Եպարքու Պարս Մուսմափա փո-  
շան առնելուն անմիջապէս զատաւորն ու եկեղե-  
ցին քանդակները խստիւ պատժեց ըսելով թէ «Հա-  
յոց եկեղեցին կործանելու նիդ՝ կ'ըսախեք ժողո-

վուրդը որ ուրիշ երկերներ երթան իրենց պաշ-  
տամանքը կասարելու և հրաման ըրաւ նաև որ  
եկեղեցին շինեն . Կիրակոս Պատրիարք դարձաւ  
կ . Պօլիս , և Ա տարի 3 ամիս պատրիարքութիւն  
ընելին վերջը ժանուարին վախճանեցաւ :

Հ. Կիրակոս Ա . ի ո՞վ յաջորդեց :

Պ. Խաչատուր Սեփաստացի Վարփի և 6 ամիս .  
յետոյ Գաւիթ Ա . որ Ցածիկ մեծամեծներն և մէկ  
քանի Հայերը իրեն կողմ շահելով Պատրիարք եղաւ :  
Պար օրով Լատինը կ , Պօլսոյ մէջ բաւական մօրդ  
որսոցած էին՝ որոնց գլուխն էր կղեմէս անուն  
կրօնաւոր մը : Գաւիթ քանի մ' անդամ՝ զգուշացուց  
զիշեմէսն և անոր երթեւեկութիւն ընողները ,  
բայց անոնք անհաղութեամբ Պատրիարքին ազ-  
գարարութեան ո՛չ միայն շահացին՝ այլ և սկսան  
իրենց մէջ ստակ հաւաքել որ Պատրիարքին աթու-  
ուէն իջեցնեն և ուղղ թուման Բերխացին զննեն :  
Այս բանը մեծ Եպարքոս իմանալով ուղեց բռնել  
զիշեմէսն ու անոր համախոհ Լատինները : Լա-  
տինք այս լուրն առնելուն պէս՝ փախան Խոկէն-  
տէր Զելքապին տունը , միայն կղեմէս բռնուեցաւ ,  
բայց Պաղպիոյ զեսոպանին մարդիկները ճամբան  
վրայ համակով շատ ստակ տուին բռնողներան  
և փախուցին իրենց դեսպանատանը . դեսպանը  
տեմնելով որ չպիտի կընայ պաշտումնել կղեմէսը  
Հառմի փախուց , վասն զի եպարդուը բարկացած  
շաբանակ վինտել կուտար զանի :

Հ. Ո՞չափ Պատրիարքութիւն ըրաւ Դաւիթ :

Պ. Դաւիթ հաղիւ Յ ամիս պատրիարքութիւն ըրած էր, Թովմաս անուն վարդապետ մը շատ տուրք խոստանալով վճարել արքունի դանձուն ինքը Պատրիարք եղաւ, բայց չկրնալով վճարել խոստացած տուրքը՝ Հռովմ վախաւ : Իրեն յաջորդեց դարձեալ Դաւիթ՝ երրորդ անդամ : Ասոր Պատրիարքութեան երրորդ տարին սոսկալի հրդեհ մը պատահեցաւ Կ. Պօլիս, և այրեցան 2,000 տունէն աւելի Գումզաբուի Ս. Աստուածածնայ մայր Եկեղեցին . բայց Երկու ամսէն Սուլթան Խպրահիմի հրամանաւը Տիվրիկցի Պօղոս վարդապետին յորդորանօքը՝ վերստին շինուեցաւ աւելի վառաւոր կերպով :

Հ. Դաւիթի Պատրիարքութեան օրով ի՞նչ երեւելի դէպք պատահեցաւ Հայաստանի մէջ :

Պ. 1648 Ապրիլ ամսոյն 2 ին առաջ շաբթու ահագին գետնաշարժ մ' եղաւ, որ ուժը օր տեւեց, և կործանեցան շատ վանքեր՝ Եկեղեցիներ՝ մկիմթներ և անհամար տուն, որոնց տակը 50,000 էն աւելի մարզիկ մեռան . այս միջոցին Կ. Պօլոյ Հայերը մեծ խոռովութեան մէջ եին, վասն զի սմանք կազմէին որ Դաւիթը Պատրիարք մնայ սմանք Թովմասը . բայց Թովմասինք յազմազ դանուելով Դաւիթը վար տուն Յ տարի Պատրիարքութիւն ընելէն վերջը . և ԱԱ ամիս աշխարհական անդա-

պահով աղքը կառավարուելէն ետքը՝ գարձեալ Դաւիթ Պատրիարք եղաւ, և Յ ամիսէն դարձեալ վար առնուելով, աշխարհականը սկսան կառավարել, մինչեւ որ Եղիազար Անթափցի, որ վերջերը Երուսաղէմի Պատրիարք և Լջմիածնի կաթողիկոս ընտրուեցաւ, հաճեցնելով տեղապահներն ինքը Պատրիարք եղաւ, սակայն խռովութիւնը չվերցաւ Հայոց մէջէն :

Հ. Փիլիպպոս Կաթողիկոս ինչո՞ւ համար Կ. Պօլիս եկաւ :

Պ. Պօլոյ Հայոց մէջ պատրիարքական Երկպառակութիւնը տիրելով օր ըստ օրէ թշնամութիւնը կ'աւելնար, ասոր համար շատ անդամ նամակներ դրեցին խաղաղասէր սմանքը Կաթողիկոսին, ումանք ալ անձամբ դացին Լջմիածին, որ գարման մը դանեն և այս Երկպառակութիւնը վերցնեն Հայոց մէջէն . թէպէտ և Կաթողիկոսը շատ անդամ կոնդակներով կը յորդուէր և իր կողմէն խաղաղասէր անձինք կը զրկէր, բայց չը օդուէր ուստի անճառացեալ՝ ճամբայ ելու անձամբ Պօլիս գուռու . Հայք Կաթողիկոսին Պօլիս զալը Եպարքուին իմացնելով բազմաթիւ անձինք՝ Բ. Դրան պաշտօնականիքով Կաթողիկոսը գիմտորել գացին մինչ ՚ի Կարին, Կաթողիկոսը նախ Երաւան զէմ հանդիպելով հոն դտաւ Սոոյ Ներսէս Աեւստացի Կաթողիկոսը՝ և շատ սիրով տեսնուե-

յաւ հետը , այս երկու կաթուղիկոսներն իրենց եկեղեցականաց մէջի անհարդութիւնները վերցրնելու համար մօսակայ թեմերուն եպիսկոպոսներն ու վարդապետներն Երաւաղէմ Հրատիրելով ժողով մը կազմեցին :

Հ. Երկու կաթուղիկոսաց այս ժողովը ի՞նչ կանոններ հաստատեց :

Պ. Սահմանադրութիւն մը շինեցին , որոյ առաջին և դիմաւորն է Հյամիածնայ և Սոսյ Կաթուղիկոսները մէկըմէկու հետ սիրով կապուին , և ամեն մէկն իրեն փիճակեալ թեմերուն Եպիսկոպոսները ձեռնադրէ , և մանաւանդ առանց ժողովրդին վկայութեան Եպիսկոպոս չեռանադրեն կաթուղիոսը . մէկ վիճակ մը մէկ առաջնորդ ունինայ , Եպիսկոպոսը իրենց թեմէն գուրս ուրիշ փիճակի մը քահանայ կամ վարդապետ չեռանադրեն , վարդապետութեան կամ քահանայութեան պաշտօն չորսի մէկու մը մինչև որ ուսման և առաջինութեան մէջ կատարեալ ըլլայ , և իրենց վիճակին Եպիսկոպոսէն ձեռնադրուին ժողովրդին Հաւունութեամբը . Եպիսկոպոսը ըսրկեն զբահանաւորը իրենց իրաւունքն զրո ժողովուրդը կաւոյ , և քահանայը մէկըմէկու ծուխ չյափշատեան , քահանայք նշանաւութիւնն Եկեղեցւոյ մէջ խնոցնեն որ եթէ արդեւք մը կայ յայտնաբի . Երեցինը վախճանած քահանայ մը , և թէ ծեր և քանի մը

դաւակ ունի և առաքինի բայալը վետայուած է , կրնայ Եկեղեցւոյ մէջ պաշտօն վարել , ապա թէ ոչ պէտք է անպատճառ վանք երթայ . Սոյս կանոններն ամեն տեղ հրատարակեցին : Փիլիպպոս Կամուզիկոս Ս . Յակոբայ աւագ խորանին բեմը շնորհ տալով ուղեւորեցաւ 'ի Պոլիս :

Հ. Փիլիպպոս Կաթուղիկոսին Պօլիս դան ի՞նչ աղքեցութիւն ըրաւ :

Պ. Դէմքով պատկառելի և ճարտարակօս բյալն Եկեղեցեաց մէջ սէր ու միաբանութիւն քարոզելով ժողովւրդը խաղաղեցուց Եղիազար Պատրիարքն ալ վար առնելով Յովհաննէս Գ . Մողնեցի վարդապետը Պատրիարքը զրաւ . ժողովուրդն սկսաւ մէկըմէկ համբուրելում եղրայր եմք մէք դոչիլ . շատ սիրեցին կաթուղիկոսը և Հյամիածնայ համար մեծադամար ստակ հաւաքեցին իրենց մէջ , նաեւ ընկի Պրուսացի Անտօն Զէլչովին Էշմածնայ մած զանգակատունը շնելու համար խոստացաւ ամբողջ ծախորը վճարել . նոյն օրերը Էհհաստանին Կ . Պոլիս Եկաւ Նիկոլ անուն անարժան Եպիսկոպոսը և քանի մը երեւելի Հայեր՝ որ Երկար համալիլով հաջոմեցուց . Նիկոլ խոստացաւ որ անկէ ետքը ժողովրդեան կամացը համեմատ վարուի . ժողովուրդին ալ կոնդակաւ պատուիեց որ հաշտ աչօք նային իրենց առաջնորդին և ճամբաւ դրաւ . բայց Նիկոլ դարձեաւ

իր ընթացքը շարունակեց . խակ կաթուղիկոսը քիչ  
մ' ատեն ալ Պօլիս կենալով՝ օրհնեց ժողովուրդը  
և գնաց Էջմիածին :

Հ. Աւրիշ ի՞նչ յիշատակի արժանի դործ ունի  
Փիլիպոս կաթուղիկոս :

Պ. Էջմիածնայ վաճքը կատարելապէս նորոգե-  
լէն ետքը , Ասպահան գնաց , ուր մեծ քնդունե-  
լութիւն դառաւ Հայերէն : Սա կը փափաքէր լու-  
սաւորչայ Ս . Աջն Էջմիածին փոխադրել վերստին ,  
ըայց Զուղայեցիք դէմ կը կենային պատճառե-  
լով թէ Զուղայեցի Հայերն ինքնինքնին միսիթա-  
րելու համար միայն այս Ս . Աջն ունի , և թէ  
Շահ-Եբաս արքայն Զուղայեցոց տուած է զայն  
պահելու , եթէ ուզելու ըլլայ ի՞նչ ընենք . ուստի  
Փիլիպոս կաթուղիկոս Երեւանցոց օդնու թեամիք  
շատ ընծաներ տալով՝ Պարսից երեւելիները հա-  
ճեցուց . յետոյ ընծաներով թագաւորին ալ ազեր-  
սադիք տուաւ և հրամանն ընդունելով , Զուղա-  
յեցի պարոն Սաֆարին տունէն Ս . Աջն Եկեղեցին  
փոխադրեց ժողովուրդը օրհնելու համար . և երբ  
տեսաւ որ Զուղայեցիք դարձեալ կ'ընդդիմանան  
և չեն ուղեր տալ , Մարդար անուն վաճառականի  
մը հետ Դավթէժ վախուց ու ինքն ալ ճամբայ  
ելնելով հասաւ Դավթէժ և Ս . Լուսաւորչայ Աջը  
և տարի Պարսկաստան մնալէն յետոյ վերադար-  
ձուց Էջմիածին :

Հ. Յովհաննէս Մուղնեցի՝ աղդը կրցաւ կառա-  
վարել :

Պ. Եղիաղար Սնթապցի քանի մ' Եղեւելի Հայեր  
իրեն կողմ որսալով և տարիէն Յովհաննէսը Պատ-  
րիքութիւնէ ձղեց . սակայն իշխանները փոխա-  
նակ Եղիաղարը Պատրիարք ընելու՝ իրենք սկսան  
տեղապահութիւն ընել . այս տեղապահները Կ .  
Պօլսոյ 6 Եկեղեցեաց կողմէն ընտրուած էին , որք  
են , 'ի Սամաթիա Ս . Գէորգ՝ որ Պատրիարքարան  
էր . 'ի Գումարէաբու Ս . Աստուածածին . 'ի Լանկա  
Ս . Սարդիս . յԱլահա-մէջիտ Ս . Նիկողոս . 'ի Պա-  
լատ Ս . Հրեշտակապետ և 'ի Ղալաթիա Սմենա-  
փրէլիչ : Այս վերջինը Պօլսոյ մէջ Հայոց համար  
շինուած առաջին Եկեղեցին է . Այս միջոցին Փի-  
լիպոլոս Կաթուղիկոս Էջմիածնայ մէջ ուրիշ շատ  
կարդագրութիւն ընելուն Ետքը վախճանեցաւ .  
Իրեն յաջորդեց Յակոբ Զուղայեցի առաքինի՝ վե-  
հանձն և խորախորհուրդ եպիսկոպոսը :

Հ. Տեղապահներն ո՞չափ ատեն կառավարե-  
ցին Աղդը :

Պ. Հաղիւ 2 տարի . վասն զի Հռովմ վախած  
Թօմիսս Բ . Պօլիս գալով դեսպանաց թարգման-  
ներուն միջոցաւ վերստին Պատրիարքական դահն  
ելաւ : Ասոր օրով Երուսաղէմի Աստուածատուր  
Պատրիարքը Կ . Պօլիս Եկաւ Յունաց հետ դատ  
վարելու համար , վասն զի Ծռագատկի մ' առթիւ

Յունաց և Հայոց մէջ վէճքայութելով՝ Գրիգոր Առ-  
կացի Երուսաղեմի նախկին Պատրիարքը տեղոյն  
բդեշխին միջնորդութեամբ կրցաւ կատարել Ս.  
Յարութեան տաճարին մէջ իւր պաշտօնը, այս  
բանիս համար Յայներն ով պահած էին. Երբ Գրի-  
գոր Պատրիարք մեռաւ՝ Յայնը մեծամեծ ընծա-  
ներ առած աէրութեան բարձրատիժան անձանց  
դիմելով Հայոց Ս. Յակովայ վանքը իրենց սեպ-  
հականել կուզելին, ուստի Աստուածառուր Պատ-  
րիարքին ճարը հատնելով շատ սատկ առած է,  
Պօլիս Եկաւ, և Եղիազարին յաջուղակութիւնն ու  
ճարտարութիւնը տեսնելով իրեն փոխանորդ կար-  
գեց, և խոստացաւ նաև իրեն յաջորդ ընտրել  
եթէ սոյն իրաւացի դատը շոհելու ըլլոյ. Եղիա-  
զար սյս խողիրը յանձն առնելով թէ և շատ սար-  
սափելի և անտանելի չարչարանքներ քաշեց թէ  
Հայոց և թէ Յունաց վրէժինդրութենէն, բայց  
և այնպէս դատը շահեցաւ:

Հ. Թովմասի Պատրիարքութիւնն ո՞րչափ ժա-  
մանակ տեւեց :

Պ. Հաղիւ և տարի և վեց տամիս, վասն զի Հայ  
Ժողովուրդն որ Եջմիածնայ ալթոռին և հնա բաղ-  
մազ կաթուղիկոսին վրայ մէծ սէր ունէր, կուզեր  
դարձեալ Յովհաննէսը Պատրիարք գնել. բայց  
Թովմաս՝ դեսպանաց զօրութեամբը կը բանար  
Հայոց պատրիարքական գահուն վրայ, սակայն

վերջապէս ժողովուրդը յաջողեցաւ վահել աթո-  
ռէն և տեղը կաֆացի Մարտիրոս վարդապէտը  
դրաւ՝ որ Երուսաղէմայ միաբանութենէն էր: Սա  
Պատրիարքական աթոռը Գումզաբու փոխադրեց  
Սամաթիայէն: Ասոր օրովը Կ. Պօլիս սոսկալի հրդեհ  
մը պատահելով 3,000 էն աւելի տուն և 5,000 ի  
չափ անձինք այրեցան՝ որոնց մէջ էր Հայոց Լանկայի  
Ս. Սարդիս Եկեղեցին, և հաղիւ ազատեցաւ Գում-  
զաբուի Ս. Աստուածածնայ Եկեղեցին: Այս ա-  
տեններն Երեմիա Զէլէպի Քէօմիւրծեանց՝ Երեւելի  
եղած էր իր տաղանդովը. այս մեծ մարդը բա-  
ւական աշխատութիւններ ունի զրական ասպա-  
րեզին մէջ: Մարտիրոս Բ. և տարի և Յ ամիս Պատ-  
րիարքութիւն ընելէն յետոյ վար առնեւեցաւ, և  
իրեն յաջորդեց Ցիկրիկցի Ղազար եպիսկոպոս՝ Բ.  
Դրան դիւանադպիր Ցիկրիկցի Էպրահիմի ձեռօք:

Հ. Ո՞րչափ ատեն Պատրիարքութիւն ըրաւ Ղազար:

Պ. 2 տարի և կ ամիս Պատրիարքութիւն ընելէն  
ետքը՝ Եջմիածնայ միաբաններէն Յովհաննէս վար-  
դապետ՝ որ Եջմիածնայ անուամբ նուէր էր հաւա-  
քէր, տեսնելով Պօլայ Պատրիարքական լիազօր իշ-  
խանութիւնը, Եջմիածնայ համար ժողված ստա-  
կով՝ Պատրիարք Եղաւ և Յովհաննէս Ե. կոչուե-  
ցաւ. բայց հաղիւ և տարի և Ա ամիս անցած էր՝  
ժողովրդեան մէջ դժտութիւն մտաւ՝ վասնած

ստակները շուտով հաւաքելու համար հարստա-  
հարութիւններ ընելուն . ասոր օրով Երուսաղեմին  
նուիրակ եկած էր Սարդիս վարդապետ Ռոտոս-  
թօցի : Սա յարմար առիթ սեպելով դնաց Անդ-  
րիանուազօլիս , Երուսաղեմի համար ժողված ստակ-  
ները վատնելով և շատ ալ պարզեւ տալ խոստա-  
նալով Պատրիարք եղաւ Սարդիս Գ . անունով և  
եկաւ Կ . Պօլիս , հալածեց Յովհաննէսն ու ինքն  
սկսաւ կառավարել զլլոգը Օ ամիս , մինչեւ որ Յով-  
հաննէս Ե . վերստին Պատրիարք եղաւ : Ասոր օրով  
Եղիազար Անթապցի որ Երուսաղեմի Պատրիարքա-  
կան փոխանորդն էր , Երուսաղեմի մէջ բազմաթիւ  
շնութիւններ ընելէն ետքը , յանք ըրաւ Տաճկաս-  
տանի Կաթուղիկոս ըլլալ և աթոռը Երուսաղեմի  
մէջ հաստատել , և այս բանին համար Երուսաղեմի  
մէջ Էջմիածին անուամբ Եկեղեցի մ' ալ շնեց :

**Հ.** Եղիազար կրցա՞ւ յառաջ տանիլ իւր այս խոր-  
հուրդը :

Պ. Սոոյ Խաչատուր Կաթուղիկոսն Երուսաղեմ  
հրաւիրելով համուղեց զայն և հաճեցոց ըսելով . « Դու քու վիճակիդ Հայոց , Էջմիածին՝ Պարսկաս-  
տանի և Սրեւերի մէջ դանուող Հայոց , իսկ ես՝  
Կ . Պօլսոյ շրջակայից ելն . դանուող Հայոց վրայ  
Կաթուղիկոս պիտի ըլլամ » : Աւստի շատ ստակ և  
ոսկի առած Եսլարդոսին երթալով Կաթուղիկո-  
սութեան և միանգամայն Երուսաղեմի Պատրիար-

քութեան հրովարտակն առաւ . ասկէ երկաղաքա-  
կութեան գուռ մ' ալ աւելի բացուեցաւ Ազգին  
մէջ . բայց Էջմիածնայ Յակոր Կաթուղիկոսն՝ որ  
խոհուն և հեռատես անձ մ' էր , իմանալով՝ Եղ-  
իազարու այս ընթացքն՝ անմիջապէս Կ . Պօլիս  
եկաւ , խաղաղեցոց ժողովուրդը , և անտի Սուլ-  
թանին դնաց յԱնդրիանուազօլիս , հոն վերստին  
վաւերացոց իր ընդհանրական Կաթուղիկոսու-  
թիւնը . և որովհետեւ Յովհաննէս Պատրիարքի  
վրայ ալ արտունջներ կային , վերստին Սարդիս  
Գ . Ռոտոսթօցին հրովարտակն առաւ և Յովհան-  
նէսը հրաժարեցոց 2 տարի և 2 տմբիս Պատրիար-  
քութիւն ընելէն յետոյ : Այս ատեններս էր՝ որ Առ-  
կան վարդապետ Մանչէսթէրի մէջ սովորան բանա-  
լով Սոտուածաշունչ են . գրդեր տապագրել տուաւ :

**Հ.** Սարդիս Գ . ո՞չչափ ատեն Պատրիարքու-  
թիւն ըրաւ :

Պ. Սարդիս 3 տարի Պատրիարքութիւն ընելէն  
ետքը մեռաւ , և իրման յաջորդեց Էջմիածնայ միա-  
րանութենէն Ստեփանոս վարդապետ Մեղրցի՝ որ  
խելացի և ուսումնական անձ մ' ըլլալով՝ սկսաւ  
խաղաղութեալոր կառավարել Ազգը , բայց Կ տա-  
րիէն վախճանելով Յովհաննէս Զ . Սամաթիայի  
Ռութ մականուանեալը յաջորդեց , որուն օրովը  
Հայերը շատ ստակ ծաղք ընելով լամկայի Ս . Սար-  
դիս եկեղեցւոյն շինութեան հրամանն առին , բայց

Հաղիւ լմնցած էր, կործանեցին ՚ի հիմանց և մինչեւ այսօր աւերակ կը մնայ . Յովիհամնէս Զ. և տարի Պատրիարքութիւն ընելէն վերջը՝ գահէն վար առնուելով Անդրէաս անունով երեց մի դպրուեցաւ . և տարիէն Կարապետ կեսարացի Կրտոյ մականուանեալը յաջորդեց : Ասի Յ տարի աղդը կառավարելէն ետքը՝ արքունի բանակին մէջ հայադործ Սարդիս անուն անձ մ’ երիցութեան աստիճան առնելով՝ Պատրիարք եղաւ . բայց և տարիէն վերստին Կարապետ կեսարացի երկրորդ անդամ Պատրիարք եղաւ : Այս միջոյներուն ժողովուրդն ալ շուարեալ որուն հնազանդելը չէր դիտեր . Յակոր Կաթուղիկոս այս բաներն իմանալով՝ վերստին կ . Պօլիս եկաւ ժողովուրդը խաղաղեցնելու :

Հ. Յակոր Կաթուղիկոս ի՞նչ ըրաւ կոստանդնուպօլիս :

Պ. Հաղիւ Պօլիս հասած էր, մահը համելով վախճանեցաւ . Հայերը մեծ փառօք թերայի գերեզմանատան մէջ թաղեցին զինքը Օդոսառոս Զ Պրիտոսի 1680 թուականին . բոլոր աղդայինք սգայինն այնպիսի աղդասէր և Սուրբ հովուէ մը զրկուելնուն համար . Յակոր Կաթուղիկոսի մահուընէն վերջը կշմիածնայ միաբանք Եղիազար Անթապցին ընդհանուր Կաթուղիկոս ընտրեցին . ասով Սղոթին մէջ այդ մասին խաղաղութիւնը հաստատեցաւ . իսկ Պատրիարքութեան գալով Կարապետ և տարի

և Յ ամիս իշխելէն վերջը՝ Թորոս Ա. երեց յաջորդեց , որուն պատրիարքութիւնը հ0 օր աեւեց : Ասոր յաջորդեց Երրորդ անդամ գարձեալ Կարապետ Բ. Կեսարացի Զ տարի . յաջորդեցին հետղհետէ Եփրեմ վարդապետ կշմիածնայ միաբանութենէն՝ որ նուիրակ եկած էր , և տարի 8 ամիս : Կարապետ Բ. Կեսարացի չորրորդ անդամ՝ Յ տարի : Թորոս Ա. որ հ0 օր Պատրիարքութիւն ըրած էր՝ Երկրորդ անդամ և տարի : Խաչառուը Երեց ձլեցի 7 ամիս : Կարապետ Բ. Կեսարացի հնագերորդ անդամ՝ որ Յ ամիս Պատրիարքութիւն ընելէն յետոյ ժողովուրդը զինքը բոնի գահէն վար առաւ և աքսորել առուաւ :

Հ. Կարապետ Բ. ի ո՞վ յաջորդեց :

Պ. Երկու աշխարհական տեղակալներ նատան , որոնք Երկու տարի խաչառութեամբ ժողովուրդը կառավարեցին . ասոնց անուններն են , Սաղա ողլու և Շահին , որոց յաջորդեց Մատթէոս Սարի մականուանեան . առ Զ տարիէն Սոյ Կաթողիկոսութիւնը յափշտակեց : Ասոր յաջորդեց Եփրեմ Ղափանցի : Ասոր օրով շատ մը ձիովիթ և Լատին կրօնաւորներ կ. Պօլիս և Անատոլի քաղաքներ լցուեր էին , մինչեւ անգամ Հայաստան և Պարսկաստան , որոնք յայտ յանդիման Հայոց եկեղեցին կը նախատէն և քանի մը թեթեւամստ Հայեր իրենց կողմ որսալով չը ըլլար օր խաչառութեամբ

անցնել, թէ և արքունի առաջները կ'արգելէն, և ձիգիթներէն շատերը կը բռնէին խաղաղութեան համար, բայց Գաղղիոյ գեսալանին միջոցաւ անմիջապէս կազմառուէլն բանտէն :

Հ. Եփսեմ Պատմանցի կրցաւ կառավարել Աղղը :

Պ. Ճիղիթաց այս ընթացքը վարանման մէջ ձգեցն զինքը, վասն զի ամեն տեղ կրօնական առելութիւն մ' է սկսաւ, և Եփսեմ Յ տարի և 6 ամիս Պատրիարքութիւն ընելն յևոյ հրաժարեցաւ, իրեն յաջորդեց Մելքիսեդ Սուորհի մականուանեալն : Ասոր օրով Միկիթար Արքայ Սերաստացի Կ. Պօլիս դարսվ Պատմթիոյ Ա. Լուսաւորիչ Եկեղեցին քարոզիչ եղաւ: Մելքիսեդ Յ տարի և 3 ամիս Պատրիարքութիւն ընելն ետքը Միկիթար վարդապետ Պիտրիստանցի Մելքիսեդը աքսորել առաջի ինքը Պատրիարք եղաւ, բայց մէկ տարի և 2 ամիս ետքը Մելքիսեդ տքածոցն դաւնալով վճրատին Պատրիարք եղաւ, Յ ամիս անցնելով Եփսեմ Ա. Երբորդ անդամ յունակեց պատրիարքութիւնը : Ասի աթոռը Անդրիանուպօլիս Պօլիս հաստատեց, և Կ. Պօլիսը վոխանորդով կը կառավարէր :

Հ. Եփսեմի Պատրիարքութիւնն ո՞րչափ տեւեց :

Պ. Այս առենները Լատին կրօնաւորներն այնքան շատցած են ՚ի Կ. Պօլիս՝ որ դրեթէ իւրաքանչիր Հայ քահանացի տուն կը գտնուէն, թէ և

շատ անդամ կը վաճառուէին բարեպաշտ և իրենց մայրենի ու անդրանիկ Եկեղեցւոյն կանոններն ու ծէսերը սուրբ և անարատ պահել ուղող առաքինին Հայ Երեշներէ, բայց՝ նոքա իրենց յամառութեամբ մինչեւ անդամ կը յանդգնէին Հայ Եկեղեցիներուն որբաղան բեմին վրայէն կեղծ բարեպաշտութեամբ պատութիւն քարոզել . ուստի և ժողովրդեան տղէտ մասը խարուելով անոնց պատիք խօսքերէն՝ կ'սկսէին անոնց կողմը բռնել՝ ոմանք ստակով և ոմանք ալ տեսակ տեսակ մնութի խոստմանքներով, թէպէտ շատերը լաւ համոզուած կ'զդուշանային այդ կրօնաւորներէն՝ ինչպէս թունատու իթէ մը . այդ Ճիղիթներէն մաս մ' ալ Հայ քահանաներու զդեստով Անդրիանուպօլիս գացին Պատրիարքն որսալու համար, բայց Եփսեմ ովատրիարք ճանչնալով ոչ Եկեղեցին ընդունեց և թէ ալ անոնց կրօնքի վերաբերեալ խօսք մը որաւ: Ճիղիթութք իրենց հանապատօրեայ խորամանեաւ Շետու մէկ քանի միտմիտ քահանաներ ովատրով սկսան հան ալ երկպառակութիւնն ձգել, ուստի Եփսեմը հրաժարեցաւցին Պատրիարքութենէ 10 ամիս իշխանութիւն վարելէն եաքը:



ԳԼՈՒԽ Բ.

ԱԽԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

ՄԻՆՅԵԻ ՍՍՀՍԱՆՈՂՄԱԿԸՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1700—1860

Հ. ՈՎ յաջորդեց Եփրեմի :

Պ. Եփրեմ պատրիարքին օրով կ. Պօլիս Եկած Եր Երգիկացի Աւետիք անունով վարդապետ մը, և Սամաթիս Ս. Գէորգ Եկեղեցւոյն մէջ քարտլչութեան պաշտօն կը վարէր : Սա իր բարձի խոհեմ վարքով և ազդու քարոզութեամբը բոլոր ժողովրդեան սէճն իրեն դրաւեց, և հեռաւոր թաղերէ անոր քարոզը մտիկ բնել կուզային, վասն զի քարոզութիւնները սիրոյ և միութեան վրայ էին, ամենուն հետ ալ պիրով կը վարուէր : Աւետիքի համբաւն ամեն տեղ տարածուելով, մինչեւ անդամ Շէյս-Իւլ-Իոլամի ականջը հասաւ, որն որ իր պալատը հրաւիրեց և երկար ատեն տեսութիւն ընելէն յետոյ, զարմացաւ Աւետիքի խմասութեանը վրայ, ուստի միշտ կուզէր որ քովը կենաց : Եւ մինչդեռ Աւետիք Անդրիանուպոլիս Եր, Հայքը բազմաթիւ ստորագրութեամբ աղերսագիր մը մատուցանելով Եպարքալոմին, ինդրեցին որ Աւետիքն իրենց Պատրիարք զնէ, և որովհետեւ Եպարքուն ալ ձանձրացած Եր Պատրիարքաց վու-

փոխութեանը պատճառաւ Հայոց մէջ ծագած երկարակութենէն, ուղեց նախ տեղեկութիւն առնել Աւետիքի վրայ և իմանալով անոր բարի վարքը՝ նա մանաւանդ Շէյս-Իւլ-Իոլամ էֆէն տիէն Աւետիքի լաւութիւնը, կանչեց Բ. Դուռը և Պատրիարքական կոնդակը տուաւ : Այս բանը ժողովրդեան մեծ ուրախութիւն պատճառեց :

Հ. Աւետիքի վրայ ի՞նչ դիտելիք կայ :

Պ. Աւետիքի Պատրիարքութիւնն ընդհանուր Հայոց ուրախութեան պատճառ եղաւ, այնպէս որ Հայք ամենը մէկ սիրու և մէկ հոգի եղած՝ սկսան մէկզմէկ սիրով համբուրել : Նոյն օրերն Երուսաղէմի միաբաններէն չորս վարդապետ իրենց անկարգութեանը համար Երուսաղէմի վանքէն արտաքսուելով, Անդրիանուպոլիս Եկան, և սկսան նախառանիօր խօսիլ Երուսաղէմի Մինաս Պատրիարքին վրայ: Ասոնք բազմաթիւ կողմնակիցներ գտնելով Եպարքունին դիմեցին, Երուսաղէմի Պատրիարքը պաշտօնէն ծղելու, և որովհետեւ Եպարքուն Աւետիքի խազազափակութեան և խոհեմութեան համբաւն առած և իրօք ալ աեսած Եր, ուստի Երուսաղէմի Պատրիարքութիւնն ալ անոր յանձնեց : Աւետիք քիչ մը ժամանակ եւս Անդրիանուպոլիս կենալով կ. Պօլիս Եկաւ, ուր ժողովուրդը բազմութեամբ դիմաւորեց զինքը, և այն ոլիս մեծ ու շքեղ պատռով ընդունեց՝ որոյ

Նմանը երբէք չէր եղած մինչև այն ատեն դահակալող Հայ Պատրիարքներուն։ Օտար Դեսպաններն ալ շնորհաւորի եկան, մանաւանդ ֆէրիօլ Դաղղիոյ Դեսպանը, և Դալաթիոյ Դաբուշնաց վաճքին վանահայրը՝ Հայր Յակինթոս։ Ասոնք շատ սիրով տեսնուեցան Պատրիարքին հետ, և ազգային երկպառակութեան վերջ մը տալու համար խոստացան սիրով մնալ շարունակ մէկըմէկու հետ։

Հ. Աւետիք Պատրիարքի օրով ի՞նչ երևելի դէպք պատահեցաւ։

Պ. Գաղղիոյ Դեսպանը շատ ջանաց որ Աւետիքը իրեն կողմ դարձնէ՝ բայց չյաջողեցաւ, վասն զի Աւետիք իր եկեղեցւոյն ծիսին և արարողութեանը ջերմ նախանձախմելիր էր, նա մանաւանդ իր համոզիչ և ազգու քարողութիւններոնց ամբողջ Հայոց սիրան իրեն դրաւեց, և այն Հայերն՝ որ առաջ Հայ եկեղեցւոյ առջեւէն անցնելն անդամ մեղք կը սեպէին, սկսան Հայոց եկեղեցին դալ եպատարադ տեսնել։ Սեբաստացի Մխիթար փարդապետին ալ քանի մը անդամ նամակ դրեց՝ որ իրեն տեսութեան դայ, բայց Մխիթար՝ Լատինաց թելաղութեամբը չուզեց երթալ, կատկածելով որ Աւետիք Պատրիսրք իրեն մնաս մը կը հասցնէ. վասն զի Լատինը իրենց կողմը եկողները Հայոց եկեղեցին բոլորովին պաղեցնելու և հեռացնելու համար՝ ամենուն սիրով տարապարագ կատկածներ

կը գարթուցանէին, որով պատճառ եղան այն ամեն աղետալի խոռվութիւններուն՝ որոնք զհայոց ազգը երկպառակեցին և մաս մաս բաժնեցին։ Եւ Մխիթար փարդապետ յարմար առթով մը վաճառականի մը նաւով Մոռա փախաւ, հոն վանք մը շնուց և անոր մէջ գպրոց բանալով՝ աշակերտներ ժողվնց՝ բայց քիչ մը վերջը վենետիկցւոց պատերազմին ատենը վանքն ու դպրոցը կործանելով՝ Մխիթար գնաց վենետիկ, և հոն հաստատեց իր բնակութիւնը Պապին իշխանութեանը տակ։

Հ. Աւետիք ո՞րչափ Պատրիարքութիւն ըրաւ։

Պ. Աւետիք Պատրիարք՝ խոհեմութեամբ իր հօտին ցրուեալ ոչխաջներն օր աւուր Հայաստաննեայց Ս. Եկեղեցւոյն փաթախը կը ժողվէր. Լատինը տեսնելով որ կրենց այնշափ ատենի մէջ որսացած ժողովուրդը ձեռքերնէն կելլայ, դայրանալով՝ դարձեալ սկսան հակառակութիւն ընել և Հայ եկեղեցին նախատել, և յարմար առթի մը կ'ոպասէին Սւետիք Պատրիարքը ձգելու։ Նոյն օրերը 200,000ի չափ Եէնիչէրիներ ազգատամբելով Սուլթան Մուսթաֆան գահէն վար առին և անոր տեղը Սուլթան Ահմէտը թաղաւոր զրին. ուստի Սւետիքն ալ եէտի գուէն բանալը գրին՝ 1 տարի և 8 ամիս Պատրիարքութիւն ընելին յետոց. ուսով Լատինը և Լատինացնեղ Հայ քահանաներն ուղեցին Պատրիարքութիւնն իրենց ձգել, բայց չը յաջողեցան։

Հ. Աւետիքի ո՞վ յաջորդեց :

Պ. Երբոր Սուլթան Ահմէտ Կ. Պօլիս կուղար՝  
չայոց մեծամեծներն և մէկ քանի եպխակոպոս  
իմացուցին Բ. Դրան թէ Երուսաղէմի և թէ Կ.  
Պօլսոյ Պատրիարք չունենալը . ուստի հրաման ե-  
լաւ՝ որով Մինաս նախկին Պատրիարք՝ Երուսաղէմի,  
և կայծակ Գալուստ վարդապետ Կ. Պօլսոյ Պատ-  
րիարք եղան , Լատինք Գալուստ Պատրիարքին ան-  
հոգութենէն օդուտ քաղելով սկսան իրենց հա-  
կառակորդ եղողներէն շատերը մատնել Բ. Դրան .  
չարախօսելով թէ Քրանկացեալ և անոնց կողմէն  
լրտես են՝ թէ և իրենցմէ ալ շատերը կը բանտար-  
կուէին , բայց Գաղղիոյ գեսպանին միջոցաւ ան-  
մշապէս կ'աղատուէին : Ուստի ճշմարիտ Հայերը  
չկընալով հանդուրժել Գալուստ Պատրիարքին ան-  
փոյթ կենացը վրայ՝ միաբանեցան և բողոքեցին Բ.  
Դրան , որով անմիջապէս վար առնուեցաւ ԱՅ ամիս  
Պատրիարքութիւն ընելէն ետքը . և անոր տեղը  
Ներսէս վարդապետ Կ. Պօլսեցի Պատրիարք նատաւ-  
սակայն Հայերը գարձեալ Աւետիքը կուղէին :

Հ. Ներսէս ո՞րչափ ատեն Պատրիարքութիւն  
ըրաւ :

Պ. Հայ ժողովուրդը՝ որ Աւետիտի վրայ մեծ սէր  
ունէր և կը ճանչնար անոր առաքինի յատկութիւն-  
ները , գիտէր՝ նա և այս բարի եկեղեցականին իր  
թ. Եկեղեցւոյն քաջարի ախոյեանն ըլլալը , որ ոչ

շահ կը վնատուէր և ոչ վասոք , այլ դիշեր ցերեկ իր  
ժողովրդեան անդորրութիւնը կը մտածէր . վասն  
զի հարուստը կը համոզէր , աղքատը կը ինսամէր և  
հարստահարեալը կը միտթարէր . և Հայերը այն-  
պիսի անձէ մը զրկուելուն վրայ մեծ ցաւով կը  
կենացին . ուստի որոշեցին որ ստակ հաւաքեն և  
անով Բ. Դրան պաշտօնեայները հաճեցնեն , անկէ  
ետքը Եպարդոսին դիմեն ու խնդրեն Աւետիք Պատ-  
րիարքը . Լատինք այս բանն իմանալով Հայոց  
գլխաւորներէն Յ հոգի բանտարկել տուին . բայց  
Հայք փոխանակ վհատելու՝ առաւել զայրացած եր-  
դում ըրին թէ ինչ որ ալ պատահի , բանտ , աք-  
սոր , մահ , չպիտի ետ կենան բողոքելէ . և քանի  
մ' օրէն գարձեալ հաղարաւոր ստորագրութեամբ  
աղերսաղէր մը մատուցին մեծ Եպարդոսին , յայտ-  
նելով թէ Աւետիք Պատրիարքին անկումը քանի  
մը հակառակորդ և պապագաւան անձանց միջո-  
ցաւն է . Եպարդոսը լսւ մը տեղեկանալով Ներ-  
սէսը վար առնել տուաւ , որոյ Պատրիարք ըլլալը  
և ամիս եղած էր , և անոր տեղ Աւետիք Պատ-  
րիարք դրաւ , նմա յանձնելով նաեւ Երուսաղէմի  
Պատրիարքութիւնը :

Հ. Աւետիք ի՞նչպէս վարուեցաւ Պապականնե-  
րուն հետ :

Պ. Միշտ ներողամտութեամբ , այնովէս որ թշնա-  
միք անդամ կը զարմանային այս մարդուն անյի-

շաշտրութեանը վրայ . իր ամենին ամսադորոյն և  
անյաղթելի թշնամին Ֆէրիօլ՝ որ Գաղղիոյ Դեռ-  
պանն էր՝ այցելութեան եկաւ , Աւետիք ամենայն  
քաղաքավարութեամբ և սիրով ընդունեց զանի .  
Նոյնպէս Գարուչինաց վանահայրը՝ Հայր Յակին-  
թոս այցելութեան եկաւ և յարդանօք ընդունուե-  
ցաւ Աւետիքէն . և վերջապէս ամենուն հետ մար-  
դասիրութեամբ գարուելով , բոլոր թշնամիներն  
սկսան ակնածութեամբ վարուիլ , բայց Ֆէրիօլ՝  
Գաղղիոյ թագաւորին և Ս. Պապին դրդումներով  
դարձեալ սկսաւ թշնամանալ և ժողովուրդը Աւե-  
տիքի դէմ դրդուել , բայց առաջի աղդեցութիւն  
չունեցաւ , վասն զի ժողովրդեան մեծ մասը բաւ  
ճանցած էր Աւետիքին արժանիքը :

Հ. Աւետիք կբցաւ շարունակել Պատրիարքու-  
թիւնը :

Պ. Ֆէրիօլ պապականացեալ Հայոց ձեռօք դործ  
չլինալ տեսնելուն՝ սկսաւ Դրան պաշտօնեայներն  
և վեղիր Քեահեամին Հայոց Աւետիք Պատրի-  
արքի դէմ դրդուել . վասն զի երանելի Պատրիարքը  
մեծ արդեկը եղած էր Լատինաց . Դեսպանն իր  
խորհուրդը առաջ տանելին ամենին ետ չկեցաւ .  
Երբ տեսաւ որ Դրան պաշտօնակալներն ալ յահ-  
ցանք մը չեն կրնար գանել Աւետիքի վրայ , որ մը  
իր թարդմանին միջոցաւ սպառնալեօք ըսել տուաւ  
որ Փրօփականնոտայի՝ Հայ Պապական վարդապետ-

ները Հայ Եկեղեցւոյն մէջ պէտք է քարող խօսին  
և պատարագ մատուցանեն . բայց Աւետիք ամե-  
նայն հանդարատութեամբ պատավսանեց՝ թէ Հայ  
Եկեղեցւոյն ո՛չ Պապը , ո՛չ Գաղղիոյ թագաւորը  
և ո՛չ Գաղղիոյ Դեռպանը կրնան խառնուիլ , այլ  
միայն Հայոց կրօնական Ս. Ժողովը և այս խօսքին  
վրայ Ֆէրիօլ սաստիկ բարկացած՝ Եպարքուն  
դիմեց ըսելով , թէ Հայոց Պատրիարքը զիս ան-  
սկատուեց , վկայ կոչելով իր թարդմանը , մէկ  
քսմի բաղդախնդիր Հայ Եկեղեցականը և մէկ քանի  
պապականացեալ Հայեր՝ որոնք յառաջուց պատ-  
րաստուած էին : Եպարքոս ասոնց համոզուելով  
Աւետիքը ձգեց Պատրիարքութենէ և աքսորեց ,  
երկրորդ անդամ մէկ տարի Պատրիարքութիւն  
ընելին յետոյ :

Հ. Աւետիք Պատրիարք ո՞ւր աքսորեցաւ :

Պ. Թէպէտ և Պէհած արտօն ըսուած կղզին , բայց  
Քաշնեւր Գաղղիոյ Դեռպանին կաշառուելով , ճամ-  
բան Գաղղիացի նաւապետի մը հրամանաւարու-  
թեան ներքեւ եղող վաճառականի մը նաւով Մար-  
տիիս տարին , և հոն Գաղղիոյ ներսերը՝ Նօրման-  
տիոյ և Պրիթանիայի Սահմանադլվին մօտ Պենե-  
դիկտեան կրօնաւորաց վանքը դրին , ուր խեղճ  
Պատրիարքը Յ տարի բանտարկուելին յետոյ , Փա-  
րիդ եկաւ և 40 ամիսէն մեռաւ 1711 Յուլիս 24:  
Պօլսոյ Հայերն իրենց Պատրիարքը շատ փնտուե-

յին, շատ ստակ վատնեցին, քանի անդամ մարդ զրկեցին Գաղղիոյ, իտալիոյ և Սպանիոյ երկիրները, չդժան, և քանի մ' անդամ ալ աղերսազիր մատուցին մեծ Եպարքութին, և որովհետեւ Եպարգութ գիտեր Գաղղիոյ Դեսպանին Աւետիքի թշնամի ըլլալը նամակ զրեց Ֆէրիոլի և մյնչեւ անդամ սպառնացաւ որ Աւետիքը դանուի, բայց Ֆէրիոլ միշտ ուրացաւ, Հայք այնքան սղացին երենց սիրելի Պատրիարքին կորստեանը վրայ՝ որ ռամկաց մէջ մինչեւ մեր օրերն առած է թէ երբ մեծ բան մ' անյայտ ըլլայ, Աւետիքին օյունունա տէօնտիւ» կըսեն: Աւետիքին ետքը Գաղղիոյ Դեսպանին խնդրանօք կեռարացի Մատթէոս Սարի մականուանեալը Հայոց Պատրիարք դրուեցաւ:

**Հ.** Մատթէոս ո՞չափ Պատրիարքութիւն ըրաւ:

**Պ.** Հաղիւ 2 ամիս եղած էր նստելը՝ Հայերը դանի վար առնելով Աւետիքի փոխանորդ Մարտիրոս վարդապետը Պատրիարք դրին: Այս ալ Աւետիքին փոխանորդն ըլլալուն՝ Դեսպանը վար առնել առաւալ՝ և ամիս Պատրիարքութիւն ընելին ետքը: Տեղը յաջորդեցին Մէքայէլ անունով երեց մը 8 ամիս, և Ապուչեղի Սահակ վարդապետը: Ասոր օրով կ. Պօլիս եկաւ Զմիւռնիացի Յովհաննէս վարդապետը՝ որ երբեմն Աւետիքի փոխանորդն էր, և որ Եւրոպա ճանապարհորդած էր Աւետիքի վրայ լուր մ' առնելու համար. այս որ

տեսան Հայք՝ Խնդրեցին Եպարգութն որ Յովհաննէս իրենց վրայ Պատրիարք գնէ. Եպարգութ լուրվ Հայոց աշոշանաց՝ Սահակը վար առներվ, որ 8 ամիս Պատրիարքութիւն ըրած էր, Յովհաննէս է. լ. Հայոց վրայ Պատրիարք դրաւ. և որովհետեւ Եպարգութն իմացած էր Յովհաննէսի ճանապարհորդութիւնը, հարցուց թէ լուր մ' առած է Աւետիքի վրայօք. նա՝ ոչ պատասխանեց :

**Հ.** Աւրիշ ինչ հարցումներ ըրաւ Եպարգութ հաննէս Պատրիարքին:

**Պ.** Աւետիքի և Գաղղիոյ Դեսպանին մէջ եղած խոսակցութիւնները մի առ մի քննելին յետոյ՝ լատինացեալ Հայ քահանայից, Փրօփականատայէն եւ կող Հայ քարոզիչներուն և պապականացեալ Հայոց հոգեւոր արարողութիւնները մատակարարող անձանց վրայօք տեղեկութիւններ ուզեց. Յովհաննէս Պատրիարք խոհեմութեամբ երեք օր պայմանաժամ խնդրելով՝ դաղնի իմացուց լատինացեալ քահանայից և պապականացեալ Հայ ժողովրդոց, բայց անոնք պատասխան անդամ չտուին. ուստի երեք օրէն վերջը Յովհաննէս յայտնեց Եպարգութն, և Եպարդուն ալ ամենը մէկ ժողվելով բանեալ դնել տուաւ, որոնցմէ հինգ հոգի Մահմէտականութիւնն ընդունելով պատեցան, ումանք պաշտօնեաները կաշառելով աղատեցան և շատերը

մասցին բանոը , մինչեւ որ Գաղղիոյ Դեռավանը կաս-  
կածելով որ զինքը կը մասնեն չունի՞թուէ տաճն ,  
շատ սատկ վասնելով Վէզիր Քէհեասին իրեն կողմն  
որսաց , բանտարկեալներն աղատեց և Յովհաննէոը  
ձգեց Պատրիարքութենէն մէկ տարբէն վերջը :

Հ. Յովհաննէոին ո՞վ յաջորդեց :

Պ. Սահակ Ապոչելոցի վերստին . սա խաղաղու-  
թեամբ աղդը կառավարեց Յ տարի և Յ ամիս .  
բայց Թէքիրտաղի առաջնորդը հետը թշնամնու-  
լով եկաւ Կ. Պօլիս , Հայ մածամեծներն և Գրան  
բարձրաստիճան պաշտօնակալներն իրեն կողմ որ-  
սալով Յահակը Պատրիարքութենէ ձգեց . Եպար-  
դուր հրամայեց Հայոց որ Պատրիարք մը ընտրեն .  
Հայք՝ որ Պատրիարք ընտրելէ և հրաժարեցնելէ  
ձանձրացած էին , տարակուսի էին թէ զո՞վ ընտ-  
րեն : Նոյն օրերը Յովհաննէս անուն Գանձակեցի  
արեղա մը կը գանուեր որ փռան մը մէջ կը բնա-  
կեր Կ. Պօլիս , շատերը եպիսկոպոս կը կարծէին  
զինքը . Հայադորձներն ալ զայն ներկայացաւցին  
զինքը . Բայց Յովհաննէս անուն Պատրիարքը ընելու համար . թէպէտ Հայերէն շա-  
տերը չին ընդուներ զայն , բայց Յովհաննէս ա-  
տերը չին ընդուներ զայն , բայց Յովհաննէս ա-  
տերը չարտարախոս ընալուն ժողովրդեան մէծ  
մասն իրեն դրաւեց և Պատրիարք եղաւ Յովհաննէս  
Բ. անուամբ : Ասի Պատրիարք ընալուն պէտ նախ  
լատինացեալ Հայոց նամակ գրեց՝ յորդորելով որ  
Հայոց եկեղեցին դան , բայց անոնք ամեննեւին

մայիկ չըրեն , յետոյ Լատինաց եպիսկոպոսին նա-  
մակ գրեց՝ աղաջելով որ Հայերը չարգիլէ իրենց  
եկեղեցին երթալէ . ասկէ ետքը կամաց կամաց  
ոկտան դալ Հայոց եկեղեցին :

Հ. Ասկից ետքը ինչ ընթացք բանեցին Լատինք  
Հայոց դէմ:

Պ. Լատինք առաւել եւս բարկանալով սկսան  
Հայոց եկեղեցին նախատել , ըսելով թէ Հերետի-  
կոս Հայ եկեղեցիններուն տաջեւէն անցնելն անդամ  
մէծ մեղքէ , և սկսան ստակ հաւաքել որ Եպար-  
դուր հաճեցունեն զի իրենց զատ եկեղեցի և դատ  
Պատրիարք մը զնէ . Եպարդուն իմանալով Պապա-  
կանաց այս խորհուրդը՝ Պապականաց Յ գլխաւոր  
եպիսկոպոսները բանտարկել տուաւ . ուստի Լա-  
տինք բոլոր Պապական ժողովուրդն ՚ի ժողով հրա-  
վիրելով խորհուրդ ըրէն որ Պատրիարքն ամբառ-  
տանեն , և հետեւեալ օրն Եպարդուն աղերադիր  
մը մատուցանելով Պատրիարքն ամբառտանեցին ,  
ըսելով թէ Պատրիարքը մեր Յ եպիսկոպոսները  
բանտարկել տուած է չենք դիտեր ինչ պատճա-  
ռաւ . Եպարդուն այս բանիս վրայ բարկանալով  
հրամայեց որ զիրենք թէլադրող և առաջնորդ-  
եղող անձինքն իրեն իմացունեն , և երբ անոնք  
չուղեցին իմացնել Պապական ժողովուրդին մէջն  
մէկ քանին բանտարկել տուաւ և միւսներէն ալ  
երաշխաւոր առնելով աղաւ թողուց որ երթան

իրենց առաջնորդ՝ եղող ամհձնքն իշեն բերեն :  
Հ. Պապականքը կըցան բերել Եպարքոսին ի-  
րենց առաջնորդները :

Պ. Փրօփականստայի քրորդիչք, Լատինք և պա-  
պականայեալ Հայ կղերականք այս բանը կանխառ  
իմանալով, ոմանք Լատինաց վանքին մէջ և ոմանք  
Գաղղիոյ գեսպանատունը պահուըտեցան . Ճողո-  
վուրդը չկարենալով գանել զանոնք, յուսահա-  
տեալ Լատին եպիսկոպոսին և Գաղղիոյ Դեսպանին  
դացին և սկսան սպառնալ ըսելով թէ՛ մեզ առաջ-  
նորդ եղաք, թէ՛ դուք մեզ ոտք հանեցիք, թէ՛  
դուք մեր եղբարցը մէջ ատելութիւն ձգեցիք . և  
հիմայ բոլորովին ետ կը կենաք : Ժողովուրդին  
ոյսպիսի յուսահատեալ խօռքերէն վախնալով ի-  
րենց քով պահուըտած պատրական եպիսկոպոսները  
և քահանաները յորդորեցին որ երթան, խոստա-  
նալով որ ամեն միջոց ՚ի գործ կը գնեն զիրենք  
ազատելու համար, և ամենքն ալ բանտարկուեցան:  
Պատրականայեալ ժողովուրդն իմանալով ասոնց  
խարդախ և քու բնաւորութիւնը՝ սկսան ատելու-  
թեամբ վարուիլ Լատինաց հետ, և իրենց մայրենի  
Եկեղեցւոյն գիրկը դարձան ատով խաղաղութիւնը  
վերսախն հաստատուեցաւ Հայոց մէջ :

Հ. Յովհաննէս Բ.ի Պատրիարքութիւնը ո՞րչափ  
տեւեց :

Պ. Հազիւ և տարի և 8 ամիս, վասն զի նոյն

օրերը Երաւանցէմի վանքը մեծ վոանգի էր իւր  
մեծ ագռամար պարտուցը պատճառաւ, և դրեթէ  
ամեն Հայ մաստանջութեան մէջ էր, նոյն տառն  
Պօփս կը զանուէր նաև Ս, Կարապետի միաբան-  
ներէն Յավհաննէս վարդապետ Բաղդացիքի, որ իւր  
սքանչելի քարոզութեամբը բոլոր ժողովրդեան և  
Պատրիարքին սիրելի եղած էր : Սա ո զելով Երաւ-  
անցէմի վանքին գարման մ' ընել, Գումգաբուի Ա.  
Աստուածածնայ Եկեղեցւոյն մէջ Հայոց երեւելի-  
ներէն ժաղով մը գումարելով սկսաւ ողբազ Երաւ-  
անցէմի վանուց թշուառութիւնը . Ժողովուրդը  
Յովհաննէս վարդապետի աղջու խօռքերէն զգած-  
ուերալ ամեն կերպ ձեռնոտուութիւն ընել խոս-  
տացաւ, այն պայմանաւ որ Յովհաննէս յանձն առ-  
նու կ. Պօլսոյ և Երաւանցէմի պատրիարքութիւն-  
ները, սկիզբէն Յովհաննէս շատ զէմ կեցաւ, բայց  
երբ տեսաւ ժողովուրդին ստիպումը և Յովհաննէս  
Պատրիարքին յօժաբութեամբ հրաժարիլը՝ յանձն  
առաւ միայն Պօլսոյ Պատրիարքութիւնը, և եղաւ  
Յովհաննէս թ. Պատրիարք : Ասի Կոլոս ըսուեցաւ,  
իսկ Ս. Կարապետի առաջնորդ Գրիգոր վարդա-  
պետը Երաւանցէմի Պատրիարք եղաւ ժողովրդեան  
և Եջմիածնայ Աստուածատուր կամթուղիկոսի թաւ  
խանձանօքը :

Հ. Այս երկու Պատրիարքներն իրենց պաշտօնն  
և նշանէս վարեցին :

Պ. Կարծես Նախախնամաւթենէն յատուկ լնաւ բուած էին այս երկու անձինքը . վասն զի Գրիգոր, որ Երուսաղէմի Պատրիարք եղաւ, 8 տարի շարու նակ շղթայ կրելով Երուսաղէմի ամբողջ պարտքը վճարեց, որուն համար Շղթայակիր Գրիգոր Պատրիարք կոչուեցաւ . և Յովհաննէս՝ որ Կ. Պօլոց Պատրիարք եղաւ, անհնարին տառապանքներ կրելով և ամենէն խորամանկ Լտախնաց դարաններէն և մեքենաններէն իր ժողովուրդը զգուշացնելով Եկեղեցիներ շինեց, դպրոց մը բայցաւ Խւակիւտապու մէջ, և բաղմաթիւ աշակերտներ հասուց : Ասոր օրով Աղուանիք Նոր Զուղայի վրայ յարձակեցան և բաղմաթիւ Հայ ջարդելէն և շատ նեղութիւններ և տառապանքներ տալէն յետոյ 40 Հայ օիրորդ 21 հզր. թուման առնելով վախան 1722 թուականին:

Հ. Ուրիշ ինչ դէպք պատահեցաւ Հայաստանի մէջ Յովհաննէս թ. ի օրով :

Պ. Նոյն միջոցներուն Սիւնեաց աշխարհին Հայերը խփան նեղութեան մէջ էին այլազդի իշխանաց յարձակութերէն, ուստի Գաւիթ Սիւնի քաջ իշխանը քանի մը հոդի ժողվեց, թշնամիաց դէմն ելու և փախուց գոսմնքն ալ, Դաւթի այս յազմութիւնն իմանալով Հայ իշխանները եկան հետը միացան, որով Դաւթի զօրքերը 400 ի շափ ըլլալով սկսան աշակայ թշնամի այլազդեաց վրայ յարձակիլ և յաղթելով ամենուն սիրտը վախ ձղեցին . Տաճիկ

իշխաննեցն տմենը մէկ միացած Հայոց վրայ եկան, Դաւթիթ իր անպարտելի օգնական Միխիթար իշխանը Հայոց վրայ զօրավար կարգելով Տաճկաց դէմ պատերազմի ելու, բայց Հայերը տեսնելով թշնամիայ անհամար բազմութիւնը ցիրոցան եղան և Գաւիթ 17 հոդւով մնաց :

Հ. Գաւիթիթ ինչպէս ողառերազմեցաւ Տաճկաց դէմ :

Պ. Հայինորոյ Մէկիք Փարսատան և Ցէր Աւետիք կորիծ պատերազմուները քանի մը հոդւալ եկան միացան Դաւթի հետ, որոնցմավ դարձեալ 450 հոդւոյ չափ եղաւ Հայոց դունդը, և ամենքնալ հաղորդուելով պատրաստուեցան պատերազմի . թէպէտ թշնամիք 70,000 էն աւելի էին, եկան պաշարնեցին Հայինոր բերդն ու սկսան սաստիկ սկառադմիլ 6 օր շարունակ . թշնամեաց կողմէն օրը 300 էն աւելի մարդ կը նարդուէր, և Հայոց կողմէն Հային և մարդ . Տաճիկները տեսնելով որ պաշարման բան մը չկրցին ընել յուսահատած սկսան մեքենաններով բերդեն վեր ելնել, բայց բերդակ կանք զարմանալի արագութեամբ պատերազմունով և ոչ մէկումը թորոցին որ բերդէն վեր ենէ, ողառերազմին առքցած ատենը Ցէր Աւետիք և Միխիթար 200 հոդւով բերդին դալանի դանէն զարս ելու և սկսան թշնամեաց եաւէն պատերազմիլ, այսպէս Տաճիկներէն 13,000 մարդ Հայ-

Դելով 148 գրօշակ և շատ ալ տռար տռին և ցիրուցան ըրին թշնամին . ասանկով մոտակայ թշնամեաց սիրար վախ ձգեց Գաւիթմ և 6 տարի հախելն ետքը մեռաւ Յէ տարեկոն :

Հ. Գաւիթմ Սիւնի քաջ իշխանին ով յաջորդեց :

Պ. Հայերը միաբան հաւանութեամբ Միփիթարն իրենց առաջնորդ և իշխան ընտրեցին . բայց վերջերը մէջերնին խոռոշութիւն իյնալով ումանք Տէր Աւետիքի և ումանք Միփիթարայ կողմն անցան . ասանկով միութեան կապը քակուելով զօրութիւննին պակսեցաւ . Խմացան Տաճիկները Հայոց բերդականաց անմիաբանութիւնը , եկան բերդը պաշարեցին . բերդականք չկրնալով գէմ դնել Միփիթարէն ծածուկ որոշեցին որ բերդը մասմեն և իրենք աղատին . ուստի Տէր Աւետիքը պատղամաւոր զրկեցին . Տաճիկներն երդմամբ խոսացան բան մը չընել , բայց բերդին տիրելին յետոյ , բոլոր պատերազմաղներն թրէ անցուցին , բաց ՚ի Միփիթարէն որ իմանալով անոնց խորհուրդը գեշերանց փախեր էր . Միփիթար քանի մ' որ պահուըտելէն վերջը՝ նորէն մարդ ժողվելով եկաւ քանի մը քաղաքներու արիեց , և երբ ինձորէաք բերդը պաշարեր էր , օր մը քնացած ատեն իր մարդիկներն եկան զլուխը կտրելով Դաւրէժ նոտող բրդեշին տարին , որ ցաւելով այն քաջ մարդուն սպանմանը ու ողջ չբռնուելուն վրայ , և պանի

մեռյնողները սպաննել ուուաւ , ըսելով ։ Դաւք այս քաջ , առաքինի և իրաւանց պաշտպան մարդն աշխարհէ զրկեցիք , ուրեմն դուք սր վատ և տիրանենդ մարդիկներ էք , առաւել եւս արժանի էք զրկուելու աշխարհէս » :

Հ. Յովհաննէս Կողուու Պատրիարքին օրով ինչ դէպք պատահեցաւ :

Պ. Աղուանք Պարսկաստան յարձակած միջոցին , Օսմանցիք ալ Հայաստան արշաւեցին և 3 ամիս անդապար պատերազմնէ վերջը , Երևան , Գաւրէջ , Գանձակ և ուրիշ շատ մը քաղաքներ տռին , և անհաջ Հայ բնակիչներն ըստ մատին ջարդեցին , և մեծ մաս մ' ալ գերի բռնելով կ . Պոլիս և ուրիշ քաղաքներ տարին , և սկսան ծախել . Յովհաննէս Պատրիարք այս բանու իմանալով , Եղաղղոսին գնաց և աղաջեց որ արդիլէ զերեվաճառութիւնը , և մանաւոնդ գանոնք որ Սուլթանին հարկ կուտան . Եղաղղոսը իւելացի մարդ մ' ըստալուն իրաւունք տալով Պատրիարքին խօսքերուն , խսիւ արդիկեց զերեվաճառութիւնն ամեն տեղ . այս տաևններս էջմ ածնայ Սասուածառար Կաթուղիկոսը վախաճանելով իրեն յաջորդեց Աւանցի կողապետ Եպիսկոպոս որ Գալատիոյ տուաջնորդ էր : Ասոր օրով էջմիածէն Օսմանցւոց ձեռքն անցնելուն , Կաթուղիկոսը Պոլիս Ս. Սստուածածնայ եկեղեցւոյն մէջ օճռելէն եաքը , և լիսկոտոսական ժողով գու-

մարեց՝ Ազգային գործերու և Երաւանդէմի վանուց Պատրիարքոթեանը վբայօք կարդաղ բռութիւններ ընելու համար :

Հ. Ի՞նչ որոշեցին Երաւանդէմի Պատրիարքութեան համար :

Պ. Երկար առեն խորհելն յետոյ՝ որոշեցին և վճռեցին որ այսուհետեւ Երաւանդէմի մէտքան չեղող ու և իցէ անձ Ս. Երաւանդէմի Պատրիարք չըլլոյ, և ժողուրդին ալ սիրով և խաղաղութեամբ ապրելու համար յորդորներ տալով՝ պատրաստեցաւ երթալ էջմիածին։ Նոյն օրը Լատին եպիսկոպոսը և Գաղղիոյ գեհապանաւուն թարգմանիր չուրհաւորութեան եկան կաթուղիկոսին, որ սիրով յնուունեց զիրենք և յորդորեց որ սիրով և խաղաղութեամբ վարուին Հայոց հետ, և հետեւ ալ օրն ալ ի նշան փոխառարձ սիրոյ իր կողմէն Մամուել եպիսկոպոսը դրիեց Լատին եղիսկոպոսին և Գաղղիոյ Գեհապանին։ որ շատ սիրով ընդունուեցաւ բայց քանի մ' օրէն վերջը երբ Կաթուղիկոսը ճամբաց ելու գէմ յէջմիածին, Լատինը իրենց խոսմանցը զրծելով՝ դարձեալ սկսմն երկպատկել դժոյս։ Յովիսանէս Պատրիարք իր արդասկրութեամբն ամձն գործի կը համեմը թէ ի գաւառ և ի թէ ի Պօլիս, ամենան հետ սիրով իր վարուեր, ըստինայեալ Հայերը մի առ մի կը իմացէր, կը յորդուեր կը համազէր ու կարուել ։ Լատին եղիսկո-

պոսին ալ նամակներ գրեց, և մէկ քանի անդամ ինքն անձամք դնաց, աղաչեց որ Հայ ժողովուրդը չաղիկէ Հայոց եկեղեցի յաճախելէն։ Նախապէս մէկ քանի անդամ ալ Դաղնիս Գեսպանին գնաց, Դեսպանը Պատրիարքին աղաչանաց պիչանելով խոստացաւ որ կը համոզէ Լատին եպիսկոպոսը։

Հ. Գեսպանը իր խոստմունքը կտարեց :

Պ. Թէ և Գեսպանը շատ ջանաց համոզել ոլատէնս՝ որ Հայոց հետ սիրով վարուին, բայց անկարելի եղաւ. վասն ոի նորա սկսմն դիշեր ցերեկ պատպահուացեալ Հայ առներուն մէջ քարոզութիւններ ընել, այս պատճառաւ շատ Հայնը բռնտերու մէջ մեռան, մէկ քանին զլուխնին կորսընցուցին և շատերն ալ աղբառացան։ Ասկէ ետքը Հայք սկսմն ըոլորովին հեռու ըջիկ Լատիններէն։ բայց սոքա նոր մեքենայ մը հնարեցին Հայերը մերսամն սրսալու, ըսելով որ՝ մնաք խորհեցանք ձեզի համար որիշ եկեղեցւոյ հրաման առեւ Պաղպիոյ Դեհապանին միջոցաւ, բայց դոնէ առ այժմ 50,000 գանձեկան ոգեշք է, այս դումաքը հաւաքեցէք. թէ և ժաղավրդեան մնձ մասը դիտէնն այդ հրամաննին անկարելիս թիւնը, բայց միամիտներ իրենց մէջ զրամ ժաղինով Պաղպիոյ Դեհապանին առենի քանի անդամ Լատինը զանազնն խոստմութեալ իտքելով սատինին առած և իրենց պիտոյիցը զործածած է առած հեն. ասոր հա-

մար Հայերը փօխանակ ստուկնին Լատին քահանայից տալու՝ Դեսպանին տուին :

Հ. Լատինք կատարեցին իրենց խոստմունքը :

Պ. Երբ Դեսպանը Հայ պատգամաց համար մասնաւոր եկեղեցւոյ մը հրամանն առնելու կաշխատէր, Լատինք ամենը մէկ ոտք ենելով դաշին Դեսպանին իմացուցին որ՝ եթէ Հայ պատգամանք մասնաւոր եկեղեցի ունենան, իրենց եկեղեցեաց եկամուտը կը կարի, և ան ասեն ինչպէս պիտի ապրին, և ին, այսպէս խօսքերով համոզեցին զիեսպանը, իսկ ասդին՝ ստակ տուող իւեղճերը կ'ըսպանէին որ զատ եկեղեցի պիտի անենան : Եւ երբ տեսան որ այս ստակնին ալ զնաց, ամենքը Դեսպանին դաշին և սկսան ստակնին ետ պահանջիլ. Դեսպանին ճարը համարելով վանտեց զամենքն ալ. ըսելով որ՝ ես ձնի այն ստակը ոչ թէ մասնաւոր եկեղեցի շինել տալու համար առի, այլ Լատինաց եկեղեցին արձակ համարձակ դալու համար :

Հ. Պատրականացեալ Հայերն ինչ ընթացք ըստ նեցին երբ Դեսպանէն բացառական պատասխան ընդունեցին :

Պ. Ամենը մէկէն Եղարդտոին ագւրսադիր տուին, ըսելով որ՝ Գաղղիոյ Դեսպանը և Լատին եպիսկոպոսը մեր ստակներն առին, մեզի մասնաւոր եկեղեցւոյ հրաման առնելու խոստումով, բոյց ոչ հրաման առին և ոչ ստակնիս կրուան : Կարպի ուն ա-

զերսադիրը կարդալով ամենըն ու վանտեց, ուստի պատղականք համբաւալով Լատինաց ընթացքը՝ սկըսան հետզետէ Յովհաննէս Պատրիարքին գիմելով մեզայ գոչել. այնպէս որ Լատին եկեղեցեաց մէջ հազիւ քանի մը Դաղտասացի Հայեր կը տեսնուեին. այնուհետեւ շատ տուներէ վանտառիլ սկսան Լատին քահանայք, որով բոլորովին վարկերնին կուրեցաւ թէ ՚ի Պօլիս և թէ դաւառներուն մէջ :

Հ. Աւրիշ ինչ հնարք մտածեցին Լատինք Հայերն որսպառ համար :

Պ. Տեսնելով որ ալ անկարելի է Հայոց սիրոք շնչիլ, սկսան Պատրիարքացան յաճախել. և Հայոց եկեղեցւոյն հետ միութեան վրայօք խօսիլ. և որ մը Գաղղիոյ Դեսպանն իր ընտանիքովը և երեեի ողաշտօնականերովը Վալաթիոյ Ս. Լուսաւորչաց եկեղեցին եկան քանի մը Լատին եկեղեցտկաններով. նոյնպէս Աւագ Աւրքաթ օրը թափօրի համար Ղալաթիա իջան Գաղղիացւոց և Լեհացւոց դեսպաններն իրենց ընտանիքովը, և Քէմէր ալթը բառած փողոցը նստան և ստիպեցին որ նախ Հայերը թափօրի ենեն, յետոյ Լատինք, և ՚ի վերջոյ Յովիներ մինչդեռ առաջները նախ Յոյնք և յետոյ Հայերը կը կատարէին. սակայն որչափ որ Լատինք կը մօտենային Հայոց, Հայք ընդհակառակն առաւել եւս կը զլուեին անսնցմէ : Նոյն օրերը վախճանեցաւ Յովհաննէս թ. Կոլոտ Պատրիարք 25

տարի և Յ տմիս Պատրիարքութիւն ընելին յետոյ :  
իրեն յաջորդեց Յակոբ Նալեան՝ որ ինքն ընտ-  
րած էր իրեն օղնուիսն և միանդամոյն յաջորդ :

Հ. Յակոբ Նալեան ի նշով կառավարեց Ազգը :

Պ. Խոհեմ և առաջինի անձ մ' ըլլալուն՝ խաղա-  
ղութեամբ կառավարեց ազգը : Ասոր օրով Լա-  
տինը նոր վարպետութիւն մը խորհեցան՝ պապա-  
կանացեալ Հայերէն ստակ քաշէլու համար : Եւրո-  
պայէն մայրապետներ բերել տուին , և անհնց  
ձեռքով սկրան պապականներուն տուներէն ստակ  
հաւաքել , ըսելով որ՝ կառավարութիւնը Հայոց  
ձեռքէն Հալաթթիոյ Ս. Կուսուորչայ և Սամաթիոյ  
Ս. Գեորգայ եկեղեցիներն առնելով ձեղի պիտի  
տայ , ասանկով շատ ստուկ ժողուելով պահուը-  
տեցան . պապականնեալ Հայք Լատինաց ձեռքէն  
քաշոծ Նեղութիւններնուն համար բողոքեցին . Ե-  
պարգուն ալ ամենքն ալ բանտարկել տուաւ , ըսե-  
լով որ՝ ուսկից առիք այդ իշխանութիւնը որ ու-  
րիշի ստացուածքը դրաւելու կ'ելնեք . որով մե-  
ծամեծ տուգանք աւալով հաղիւ ազատեցան բան-  
տէն : Այս օրերը Գաղատացի պապականացեալ  
Հայք Սօֆեի խանին մշջ ձայնաւոր պատարագ ըսել  
սկրան , բայց Եպարքուն իմանալով Գաղատացւոյ  
մեծարէն շատերը բանտարկել տուաւ , որոնք մե-  
ծամեծ տուգանքներով հաղիւ կարող եղան ա-  
զատիլ :

Հ. Յակոբ Նալեանի օրով ի՞նչ պատահեցաւ  
Հայոց :

Պ. Արշակ որ Յակոբ Պատրիարք կը վափարէր  
ժողովաւորը խաղաղութեամբ պահել , ընդհակա-  
ռակին կատինը շարունակ դժուութեան և երկպա-  
ռակութեան որովը պակաս չեն ընել Հայոց մէ-  
ջն . ինչպէս որ այս անդամ Սիրիոսը Պատիսորոն  
անուամբ վառասէր վարդապետ մը Պօլիս գալով  
մէկ քանի պապականացեալ Հայեր մօտեցան , և  
խստացան Պատրիարք կարգել տակ զննը , և մէ  
իրենց կողմն անցնի . Պատիսորոն՝ անսալով անոնց  
խորհրդոց՝ մեծամեծ ընծաներով Եպարքուն դի-  
մեցին , և առանց ժողովուրդին իմացնելու Պատ-  
րիարք ըրին վրախորուն , և Ս. Զատկի առջի օրն  
արքունի ժամաներով Պատիսորոն Պատրիարքը Ս.  
Աստուածածնայ եկեղեցին ըերելով կուղէին ներս  
մոցնել : Երբ ժողովուրդը տեսաւ զոյն սկսաւ  
ազատակել թէ՝ մենք զքեզ չենք ճանչնար , մենք  
Յակոբ Պատրիարքը կը ճանչնամք և զայն կ'ըն-  
դունիմք . բայց ժամաները բանութեամբ ներս խօ-  
թելով տարին Պատրիարքական աթուուր բազմեցու-  
ցին . և մինչդեռ կը պատրաստուեը քարովն դար-  
ձեալ սկսան ազատակել . մեծամեծք տեսնելով որ  
Պատիսորոն բանութեամբ կուղէ Պատրիարքական  
դահլ բարձրանալ , Սուլթանին իմացուցին . Սուլ-  
թանը զեպարդուը կանչելով յանդիմանեց , ա-

ուանց աղջին հաւանութիւնն առնելու Պատրիարք  
կարդելուն համար : Պրովոպոն եօխն որ Պատրի-  
արքութիւնը ընելէն ետքը , Սամսոնի բերդն աք-  
սորուեցաւ և Հայոց ալ հրաման ելաւ որ իրենց  
Պատրիարք մը ընտրեն :

Հ. Յակոբ Նալեանի Պատրիարքութիւնը ո՞րչափ  
տեւեց և Մինասի ո՞վ յաջորդեց :

Պ. Պրովոպոնի բռնութեամբ գահն ելած առեն՝  
Նալեան Յակոբ Պատրիարք 8 տարի և 2 ամիս Պատ-  
րիարքութիւն ընելէն ետքը հրամարեցաւ : Նոյն  
տաճնը մեռաւ նաև Երուսաղէմի Գրիգոր շղթա-  
յակիր Պատրիարքը՝ և որովհետեւ միաբանու-  
թիւնը գեռ չեր որոշած միաբաններէն մէկը ,  
առժամանեակեայ Յակոբ Նալեանն ընսրբցին Ե-  
րուսաղէմի Պատրիարք , և Ա. կարապետ վահճի  
առաջնորդ Մինաս վարդապետը՝ և . Պօլսոյ Պատ-  
րիարք ընտրուեցաւ : Ասոր օրովէ Եղմանայ Ղա-  
զար կաթուղիկոսը վախճանելով իրեն յաջորդեց  
Մինաս վարդապետ , որ գեռ 2 տարի էր Պօլսոյ  
Պատրիարք ըլլալը : Աւստի Մինասին տեղ Կ. Պօլ-  
սոյ Պատրիարք ընտրուեցաւ Ղախանցի Գէորգ  
վարդապետը , որ բարի և մարդասէր անձ մ'ըլ-  
լալուն՝ ժողովուրդն ոկտաւ հայրաբար կառավա-  
րել . բայց անձնական տկարութեանը պատճառաւ  
և առարիէն հրաժարեցաւ : Ասոր օրովը խիստ երե-  
ւելի էր Ախնցի Ետղուպ ամիրան , որ ներքինա-

աղետին Հայ որդեղիբն իրեն կսովութեան պատճ էր ,  
բայց Հայու մը թշնամութեամբ սպաննուեցաւ :  
Ետղուպ ամիրայի մահուանը վրայ Հայը , Յոյնքը  
Հրեայք և Տաճիկը առ հասարակ սղացին : Պօլսոյ  
ցիք Յակոբ Նալեանը խնդրեցին՝ որ դայ գարձեալ  
կ , Պօլսոյ Պատրիարք ըլլալը : Յակոբ Պատրիարք Յ  
տարի և 1 ամիս Երուսաղէմի Պատրիարքութիւնը  
վարելէն ետքը՝ վերստին կ . Պօլսոյ Պատրիարք ե-  
ղան , և 12 տարի աղջը խաղաղութեամբ կառա-  
վարելէն ետքը՝ յօժորութեամբ իրեն յաջորդ ընտ-  
րեց Պղրիդոր վարդապետ Պատիսնեան կ . Պօլ-  
սոյի , և հրաժարականը դրեց Եպարք սպին իմաւ  
յըներով նաև իր յաջորդին սպանը : Կոլեանի օրով  
յոյժ երեւելի էր Հայոց մէջ Պալսոր Ամիրայ , որ  
Բաղրապ բաշա Եպարքուն սեղանաւորն էր :

Հ. Ղաղար ամիրայի վրայ ի նչ գիտեմիք կայ :  
Պ. Խոհեմ և առաքինի անձ մ'ըլլալուն , Բաղրապ  
բաշա ոչ միայն իրեն սեղանաւոր ընտրեց , այլ բո-  
լոր սեղանաւորաց ոչ գլուխ կարդեց , և հրաման  
տուաւ որ կարմիր թաւիչէ փակեղ դնէ , և ձիով  
սղանաւորով շըջի տմեն աել . այս մենաշնորհու-  
թիւն մ' էր իրեն : Ղաղար ամիրայ իւր մարդասիրու-  
թեամբն ու առատաձեռնութեամբը բոլոր հայտ-  
ապակ աղջաց սիրան իրեն դրաւեց , բայց Երու-  
սաղէմի Յ . Յակոբայ վանին Յունացմէ պահան-

ջուելուն պատճառաւ, Փողերամոցի տեսուչ Սպակվաքը օղու Յոյնին հետ թշնամացաւ, և երր Բազուցաչա մեռաւ, իրեն յաջորդեց Համիտ Համբարաշա, որուն սեղանաւորը Ստավրաք օղուն ըլլալուն՝ Ղաղարը մատնեց տէրութեան, ըսելով թէ՛ Քաղաք բաշայի ըոլոր ստացուածքը Ղաղարի քոննէ. Խակոյն բանտարկուեցաւ Ղաղար, և 40 օրի չափ տանիջուելէն ետքը՝ յանուն արդարութեան դլութան Մուսթաֆան դատի հրաւիրեց. Երբ այս լուրն առաւ Մուլթան՝ դահէն վար իջաւ, և երեք քայլ յառաջանալով հրամայեց որ գլուխասուի խր ոսոխը Չուխաճի խանին դրանն առջեւ, և բուլոր ստացուածքը յարքունիս դրաւեցաւ, բայց ի երկու անտուկէ՝ որ Ղաղար ամիրայի կինը Ֆիրուհի մին Զօպան աղա անուն Հայու մը, և երկրորդը մին Զօպան անձի մը տուած էր պահելու հանորհ. ը անուն անձի մը տուած էր պահելու համար. որ վերջը թէև Զօպան մականուանեալ Հայը մնտուիը ոսկուվ լի ետ դարցուց, բայց հնորհը ադամանդով լի մնտուկն առնելն ուշացաւ:

Հ. Յակոբ Նալեանի հրաժարականն ընդունեցաւ:

Պ. Սկիդրէն Եպարդուը չընդունեց հրաժարականը, բայց Յակոբ Պատրիարք երկրորդեց. Եղանակուը Սուլթանին ներկայացուց, և Սուլթանը՝ որ աման գործ արդարութեամբ և խմաստութեամբ էր տեսնէր, կասկածելով թէ. դուցէ ակամայ և

կամ քանի մ' ոհնձանց ատիորիումին եղած ըլլայ, իր հաւատարիմ մարդոցմէն մին Յակոբ Պատրիարքին դրկեց, և իմանալով որ յօժար կամօք կը հրաժարի, հրամայեց Եպարդուին, զդրիգոր Պատմանեանը Հայոց Պատրիարք կարդէ. Յակոբ Նալեան իր օրերը գրաւոր Երկասիրութեամբ անցուց և բաւական դրքեր տպել տուաւ, որք են Զէն Հոգեւոր, Վէճ Հաւատայ, Մէնութիւն նարէէ, Դանաւան Ըասացանց, և քիչ վերջը մեռաւ 1764 Յուլիս 18ին, և թաղուեցաւ Բերայի գերեզմանատան մէջ:

Հ. Գրիգոր Գի Պատրիարքութիւնը ո՞րչափ տեսց:  
Պ. Խելայի, հեռատես և Նալեանի օրով փորձառու ըլլալուն՝ թարի և 6 ամիս աղդը խաղաղութեամբ կառավարելէն և ճիղվիթայ ամսն մեքենաները հեռատեսութեամբ խորտակելով՝ ժողովուրդն զդուշացնելին ետքը հրաժարեցաւ, իրեն յաջորդեց Զաքարիա կաղզուանցի վարդապետը, որ Էջմիածնայ նուիրակ էր: Զաքարիա Պատրիարք՝ իր աղդասիրութեամբն սկսաւ ժողովուրդը հայրար խնամել. ամեն կողմ խաղաղութիւնը իը տիրէր. թէովէտ և մերթ ընդ մերթ ճիղվիթութիւնը գլուխ էր վերցնէր, բայց Պատրիարքին և անոր խորհրդականացը մէկ ակնարկովը գետինը կիյնար. առկայն կատենք չուղելով Հայոց խաղաղութեան երես տեսնելը, վերստին խոռվութիւն հանեցին, և Զաքարիա, թարի Պատրիարքութիւն

ընելէն ետքը, Պատուա աքսորիլ առէն, և ամսոր  
տէղը Յովհաննէս Ամսատանցի վարդապետը Պատ-  
րիարք եղաւ, պար ԱՆ ամիսէն Հայերը վար առ-  
նելով, Զաքարիան վերսալին Պատորիարք դրին: Այս  
միջացին Սայց Եփրեմ կաթողիկոսոր վախճանեցաւ  
տեղւոյն այլազգի իշխաններէն թունաւորուելով,  
և իրն յաջորդեց Թարոս եպիսկոպոս Սոեցի:

Հ. Զաքարիայի Պատորիաբքութեան միջոցին Հա-  
յոց մէջ ի՞նչ երեւելի գեղարք պատահեցաւ:

Պ. Զաքարիա Պատորիաբքին օրովք վերսալին սկը-  
ռաւ խռովութիւնը Հայոց մէջ, անամնկ որ ակսան  
մէկմէկ մասնել Բ. Պրան, որովշատ անմեղ ան-  
ձինք բանապարկուեցան, և մեծամեծ տաղանդ-  
ներով հաղիւ կազատէն: Զաքարիայի օրով երեւ-  
ելի էր Տատեան Առաքել ամիրայն, որ արքունի  
վասոգանայր շնուց յԱզատլար, և ինչը վերա-  
ռեսուչ եղաւ արքունի համանաւ: Եւ այդ պաշ-  
տօնը մինչեւ ցայսօր Տատեան գերգաստանին յանձ-  
նուած է: Այս միջոցին կատարնէ Բ. Առուսաց  
կայսրուհին Դըրքմի Հայերը հրաւիրեց ՚ի Առու-  
սատան, որոնցմէ մեծ մաս մ' եկան և Տօն գե-  
տին եղերը նոր Նախիջևան քաղաքը շնեցին,  
ուր 1816ին 4,600 տուն Հայ բնակիչ կար, կը-  
սին, աղջային քաղաքապետի մը իշխանութեան  
տակ: Զաքարիա երկրորդ անգամ ԱՆ տարի Պատ-  
րիարքութիւն ընելէն յետոյ մեռաւ:

Հ. Զաքարիայի ով յաջորդեց:

Պ. Դանիէլ Եսլիսկոպոս որ Եջմիածնէն նուիրակ  
եկած էր: Սա խոհեմ և առաքէնի անձ մ' ըլլա-  
լուն սիրելի եղաւ Հայ իշխանաց, որոնք Զաքա-  
րիայի օր աւոր տիարանալը տեսնելով, ստիպե-  
ցին զԴանիէլ որ Պօլոյ Պատրիարքը ըլլայ: Դանիէլ  
սիրով ընդունեցաւ: Հաղիւ ԱՆ ամիս եղած էր  
Պատրիարքական գահը ելնելը՝ Եջմիածնայ Պուկան  
Կաթողիկոսը վախճանելով անզը Քանինին ընտ-  
րեցին: բայց Գաւիթ Եսլիսկոպոս յակշտակեց Կա-  
թողիկոսութիւնը՝ վրաց Գաւիթ խանին մէջը-  
ցաւ, և Դանիէլ եկաւ մաց ՚ի կարին: և Կ. Պօլ-  
ոսյ Պատորիարք եղաւ Յովհաննէս եպիսկոպուս,  
որ իւր խատարարութեամբը ժողովրդին հետ  
ազէկ չվարուելուն՝ Առարիէն Եւղովիա արսորե-  
ցաւ: Ասոր յաջորդեց Գրիգոր Եպիսկոպոս Խամ-  
սեցի որ ԱՆ ամիս Պատրիարքութիւն ընելէն ետքը  
արսորեցաւ ՚ի Դաղկնդան:

Հ. Գրիգոր Պատորիարքի ով յաջորդեց:

Պ. Պօլոսյ Հայերն Երկու կազմ բաժնուած ու  
մանք Դատիթը կւողէն և ուսմը ուրիշ անձէր,  
հուսկ յետոյ միարան ցան և Յովհաննէս եպիսկո-  
պուր, որ Եւղովիա արսորուած էր, բերելով վե-  
րրատին Պատորիարք դրին: Յովհաննէս Պատորի Պ  
Նարը դափայի գուրուր Հայոց հրանգաց Միա-  
կամացից Ս. Գէորգայ Եկեղեցին շի Իւկ Յին,

Սուլթան Սէլիմի հրամանաւ : Նոյն միջոցին Պարսկց  
և Ռուսաց մէջ պատերազմ՝ բացուելով Պարսիկը<sup>1</sup>  
յաղթուեցան : Դաւիթ անվաւեր կաթուղիկոսը,  
որ Պարսից զօրութեամբը կը բռնանար, Էջմիածնայ  
գահուն վրայ, Ռուսաց միջոցաւ վար առնուելով  
Դանիէլ օրինաւոր կաթուղիկոսը դրուեցաւ : Յով-  
հաննէսի օրով Յոյնք դարձեալ սկսան պահանջել  
Երւսաղէմի Ա. Յակոբայ վանքը, բայց Յովհաննէս  
Պատրիարք ազգին բորդ իշխանները հրավիրեց՝ ի  
ժողով, որոնց մէջ էին Տիւղեանք ալ, և յայսնեց  
անոնց Երւսաղէմի վանքին Յունացմէ պահան-  
ջուիլը, ուստի ամենը մէկ սիրա և մէկ հոգի աշ-  
խառելով ազատեցին վանքը Յունաց ձեռքէն : Այս  
միջոցին Տաթեւացւոյն և Թրունեցւոյն Ա. Պատա-  
րադի տաեն յիշատակութիւնները դադրեցան :  
Յովհաննէս Պատրիարք Երկրորդ անդամ 10 տարի  
ազգը խաղաղութիւնի կառավարելէն ետքը հրա-  
ժարեցաւ, և իւր բնակութիւնն իւսկիւտար հաս-  
տատեց :

Հ. Յովհաննէսի ովլ յաջորդեց :

Պ. Արքահամ Եպիսկոպոս՝ նուիրակ Էջմիածնայ:  
Այս մարդը՝ ի նպաստ վանքին՝ հաւաքած ստա-  
կովն իշխաններէն մէկ քանին իրեն կողմ որսալով՝  
և միանդ տուայն Յովհաննէս Պատրիարքի հետ սի-  
րով փորտելով, Պատրիարքութիւնը ձեռք ձգեց :  
Յա սկիզբէն թէ և շատ հեղութեամբ կը վարուեր

աղջին հետ, բայց վերջերն սկսաւ խստութիւն  
բանեցնել թէ եկեղեցականաց, և թէ աշխարհա-  
կանաց, և Երւսաղէմի վանքին միաբաններն ար-  
դիւեց պատարագելէ : Յովհաննէս նախակին Պատրի-  
արք, Պէղճեան Յարութիւն անսւնով անձը դրկեց,  
խնդրելով որ Երւսաղէմոյ միաբաններուն Հրա-  
ման տոյ պատարագելու : բայց Արքահամ Պատ-  
րիարք մերժեց զՄէզճեան, և հրամայեց որ դուքս  
ենէ Ալենեակին՝ ուստի ներյառածովով դոչելով : Այս  
խօսքը Պէղճեանի ծանր գալուի յարմար միջոց կը  
վնտաեր գրէմը լուծելու : Ասոք օրով Գատար զիւզի  
Ա. Թաղաւոր Եկեղեցին շինուեցաւ, 1814 Յուլիս  
կին օծման համգէսը խիստ շքեզ և փառաւ որ կեր-  
պիս կատարուեցաւ : Նոյն օրերը նաև Յերացիք  
իրենց Եկեղեցւոյն շինութեանը Հրամանն առնելու  
համար Պատրիարքին դիմեցին, բայց Պատրիարքը  
թագեցւացմէ բազում ստակ պահանջելուն, ամեռով  
ուղը ելան, և Պէղճեանի Յեղադքութեամբ աղիք-  
սագիր տուին Սաւլթանին ըսելով թէ Պատրիարքին  
անկազող է ազգը կառավարելու և զժայովուրդը  
կը կեղեքէ . ուստի կը խնդրեմք որ ուրիշ Պատրի-  
արք մը դրուելու չնորհն ընէք : Սուլթանը աղեր-  
ագիրը կարդարով հրաման ըրաւ որ նոր Պատրի-  
արք մը ընտրեն, ուստի իշխանք ժողովնելով, որոնց  
մէջ էին Տիւղեանք, Պօղոս Եպիսկոպոս Անդրիա-  
նուպոլիսցին Պատրիարք ընտրեցին 1815 Դեկ 3 ին,

և Սրբութամ 2 տպրի և և ամիս Պատրիարքութիւնը  
ընելէն եռքը աքսորեցաւ ՚ի Մարզուան :

Հ. Պօղոս Պատրիարք ՚ինչպէս կառավարեցազդը  
Պ. Այս մարդն իր խոհեմ և աղքամէր բնու-  
թեամբն արդը սկսու խաղաղութեամբ կառավա-  
րել և ուղելով որ կը ծանումներն վեր-  
ցրեէ, Հայ իշխաններուն խորհրդովը՝ Հոռոմէական  
Հայոց երեւելիներն հրաւիրեց, որոնք եին ծխզեան  
Գրիգոր, Արքիկեան Պօղոս, Աստուածատուրեան  
Մատթէոս Կարնեցի, Տափուտեան Անտոն, Քուն-  
կրթեան Յովհէիք և Գրյուճեան Սնատոն, և հարցուց  
թէ ինչ է սրբառնառը որ Հայոց եկեղեցին հեռ  
ուացեր են; և իր նախառան իրենց կը ծանու որները.  
Հայոց եկեղեցին կարմուելն ՚ի վեր ինչ առեցու-  
ցած կամ սրբակեցուցած ունի թոպ ցոյց տան :  
Հոռոմէականց երեք ամիս միջոց խնդրեցին սրա-  
ստուխանութու համոր, և շնորհակալութիւն յայտ-  
նեցով Պատրիարքին այսպիսի առաջարկութեամբ՝  
երան դացին : Պօղոս Պատրիարք երեք ամիսին ա-  
ւելի սորտաց բայց պատասխան տուող ժնպաւ :  
Այս առաջարկութիւնը Դաշնեան վարդապետաց  
գործին չեկաւ, ըստ որում ովհանի յայտառեւ խար-  
դախութիւննին : Պօղոս Պատրիարք վերատին հրա-  
ւիրեց Հայ և Հոռոմէական իշխանները Գորու Ժշ-  
մէի Պատրիարքարանը, և երկար տառնարանութիւն  
մը ընելով յարկ որեց զանոնք, բայց Հոռոմէականք

Երենց կղերին վկայոք դանդասանօք սկսան խոսիլ  
թէ չեն ուղեր գոլ երես առ երես, ահաւասիկ  
մնաք պատրաստ եմք ինչ որ կուզէք ըրէք՝ ըստ-  
լոլ դացին : Աւսաի Պօղոս Պատրիարք ստիպուե-  
ցաւ կարգաւորները հրաւիրել :

Հ. Հոռոմէական Հայոց կարգաւորներն եկան  
Պօղոս Պատրիարքին հրաւիրելին :

Պ. Այ թէ զալ այլ և պատասխան տալու պետ-  
ղամ հարկ չսեպեցին, ուսաի վերջին անդամ մայ-  
ժողովի հրաւիրեց Պօղոս Պատրիարք Հոռոմէական  
Հայ արհեստաւոլները, և պատմեց անհնց մէ առ-  
մի միտ թեան համար ըրած ժողովները, իրեն առ-  
ուաջարկութիւնները և Հոռոմէականաց Գորէ ճեան  
կղերէն անզպասանսոնի մնալը, որոնք իմանալով  
իրաւունք ուուին Պատրիարքին, և Պատրիարքն օրհ-  
նելով դանակը արձակեց : Նոյն գիշերը 300 էն  
առելի Հոռոմէականը Բերայի Լամբնաց կ Երրոր-  
դա ինեան և կեղզեցոյն մէջ ժապաւելով կամչեցին  
երենց կը ծանուըրները, և հարցուցին անհնց մէ ին-  
չու Պատրիարքին հարցուեներուն սրբառական չեն  
տար, իսպա անհնք չկը առաջ ինքզինին որդա-  
րացնել, Լուանի կը ծանուըրաց ձեռքով ժողովուրդն  
եկեղեցին դարս փանտեցին, ըսկանք մէկ այս ձեր  
ժողովառեղինչ այլ եւստինաց եկեղեցին է, աւսաի  
ժողովուրդն սկսաւ աղաղակել և ըսկը Երր մեր  
սատկները կ'առնեք եկեղեցին ձերն է կըսէք, և

երբ ժողով մ՞ լնելու եկանք՝ մեզ դուրս կը վա-  
նէք, եկեղեցին լատինաց է ըսելով։ Նոյն գիշերը  
սաստիկ անձրեւ գալուն՝ Տիւղեանց դրագիր Պ.  
Ամանասին տունը հաւաքուելով կանչեցին դար-  
ձեալ իրենց քահանաները, և սկսան հարցունել  
և ըսել. Դուք Հայոց եկեղեցին կը նախատեք,  
հերետիկ է հետյառածու է, ըսելով. ահա Պատրի-  
արքը ձեզ ժողովիքի կը հրաւիրէ, ինչու չէ եր-  
թար յայտ յանդիման խօսելու. մենք ընտանեաց  
տէր և զբաղեալ մարդիկներ՝ ձեր պատճառաւուը  
չենք կրնար փորձաւթեան մէջ իյնալով շուրտնակ  
տուգանք վճարել։

Հ. Գողէճեանք ի՞նչ ընթացք բունեցին։

Պ. Նոյն գիշերը ժողովրդեան ցոյցքն վախնա-  
լով խոսացան երթալ. և ժողովուրդը համովեցին  
որ իրենք աւելի եւս պատրաստ են սոյն միտ թեան  
գործը գլուխ հանել, ժողովուրդը դոհ սրտով նոյն  
գիշերը մեկնեցաւ։ Խոկ Գողէճեանք այս ըստիպ  
վրէժն առնել ուղելով Լատին կրօնաւորներն իրենց  
զօրավիր առած՝ Գալիտան բաշայի վոխանորդին  
խմացուցին թէ խումք մը Հայեր ժողվելով Լատին  
եկեղեցին կոխեցին, և այս գիշեր ալ գեսպանա-  
տունը պիտի կոխեն։ Փոխանորդն ալ հաւատալով  
նոյն գիշերը բաղմամիւ զօրքով կուղայ և յան-  
կարծ Բերայի Հայոց Երբորդութեան եկեղեցին կը  
մտնէ, որպէս թէ հօն ժողովուած ըլլան Հայք։

բայց մարդ չդտնելով հարցուփորձ կ'ընէ, կը քննէ  
և բոլորովին զրաբարտութիւն ըլլալը հասկրնալով  
անհնարին զայրացմամբ ետ կը գառնայ, Հետեւ-  
եալ առտուն երբ Պատրիարքն խմացաւ Լատինաց  
այս վատութիւնը՝ բոլոր Հայ իշխանաց լուր զրկեց,  
ուղելով որ Յ. Դրան իմացնէ և պէտք եղած պա-  
տիմը տնօրինել տայ. բայց իշխանք աղաչեցին որ  
հիմակու հիմայ ձայն չհանէ և ուրիշ յարմար ժա-  
մանակի մը թողու, վասն զի նոյն օրերը Տիւղեանց  
տանը կործանմանը պատճառաւ՝ բոլոր Հայոց  
աղդը ահ ու դողի մէջ էր, ուստի Լատինք ու Գո-  
լէճեանք յարմար առիթ գտնելով ուղածնին կ'ր-  
նէն, և որ ամենէն ցաւալին է միաբանութեան  
մեծ դործը չյաջողեցաւ, որուն ամեն մարդ անձ-  
կանօք կը փափաքէր, մանաւանդ Պէղճեան։

Հ. Պէղճեանի վրայ ի՞նչ գիտելիք կայ։

Պ. Պէղճեան Տիւղեանց Զէլէպիներուն քով դոր-  
ծակալութեան պաշտօն կը վարէր, և այնքան սի-  
րելի եղաւ իւր աշակը թեամբը՝ որ արքունի փո-  
ղերանոցին գործերը Պէղճեանի խորհրդակցու-  
թեամբ կը կատարուեն։ Քիչ ատենէն փողերա-  
նոցին վերատեսչութիւնն իրեն յանձնել ուղեցին,  
բայց Պէղճեան իր հեռատեսութեամբը մերժեց,  
վասն զի Տաճիկը դոհ աչօք չը պիտի տեսնէին,  
մանսամնդ որ փողերանոցին գործակալներուն չտ-  
փաղանց շուայլութիւնը Դրան պաշտօնէից կասկած

տուած էր, և ասոնց մէջ ամենէն անապ որսյել չա-  
լիթ է փէնտի ըստւած անձն էր, որ չէ թէ միայն  
Տիւղեանց՝ այլ բալոր Քրիստոնէից հակառակ էր  
մանաւանդ՝ Սուլթանին ալ շատ սիրելի ըլլալով՝ իր  
կամքը կատարելու շատ դիւրութիւններ ունէր:  
Եւ երբ Խայրուլլահ է փէնտի ընդհանուր վերատե-  
սուչ եղաւ փողերանոցին, Հալէթի դրդմամբը  
Տիւղեանք բանաօրկեցան՝ պատճառելով թէ հա-  
զիւնին պիտի նայուի: Այս միջոցին մէկ քանի ան-  
ձերէ բռնի ստորագրութիւն առաւ, ըսելով թէ  
Տիւղեանք դանձուն պարտական են: Յետոյ Պու-  
տաննեի պաշիի ձեռօք Ցիւղեանց և ամսոց արտա-  
հանաց և վորդերանոցի լոլոր գործակուլոց տու-  
ները կնքելով այրերն ՚ի բանու և կինելն ՚ի Պատո-  
րիարքարան զրկից:

Հ. Տիւղեանց պիտակին ի՞նչ եղաւ:

Պ. Սարսափ և արհսուիք բոլոր աղբայնոց վրայ  
ախտած էր, ոչ ոք կը համարձակէր այս դեպքին  
վրայ բան մը հաղոցնելու: Բայց Պէղճեան դիշել ցե-  
րեկ կը հաստէր ող իր քարերապմերուն ապատու-  
թեան միջոց դանէ: Նոյն օրերն արքունի ճապատ  
րապեա: Կրիդար ամիգուն վրայի բանոցին ներփն  
տեսչութիւնը գարձեալ Հայոտ մը յահճնուելու  
բայն առնելով Պէղճէր պաշին՝ միմիջուզէ և կը  
ներկրոյացնէ Պէղճէր պաշին զնիւթեան: Այսպէս՝  
Սուլթանին հրամանաւ Պէղճեան վավերապմոցիներ:

քին աեսուչ կը ըստ և Խայրուլլահ է փէնտի մէն ալ  
մէծ ընդունելութիւն գտնելով՝ կը ըսկսի գործի.  
պէտք եղած կարգադրութիւնները կ'ընէ և իր  
բարերարացն աղասութեան միջոցները կ'ըսկսի  
խորհիլ: Այս միջոցին ինքուած տունները բացուե-  
լով՝ ամեն բան աճուրդի կը դրուէին ամեն Հինգ-  
շարթի: Իսկ բանտարկելոց մէկ քանիները բան-  
ախն մէջ մեռան ժամանակուէն: Տիւղեանք գլխա-  
տեցան ու մէծ սաւդի մէջ ձեցին աղդը: 1817  
Հոկտեմբեր կին ամեն Հայ լացաւ, բայց ՚ի Թըն-  
կըրեան և Գրլըճեան ընտանիքէն, որ Գոլէճեան  
քահանայից հետ Քանտիլի Տավուտեան Անտօնի  
տունը ցնծութեան աօն կը կատարէին ՚ի նախա-  
տինս մարդկութեան: Այս գործին վրայ չափա-  
զանց բարեկացան Հայք, բայց լուսութիւնն առ այժմ  
խոհեմութիւն սեպէլով, Տիւղեանց մարմինները  
թագիրու հրամանն առնելով և Դանէն՝ Սաղեցին  
՚ի Գուրու չշմէ՝ իրմնց նախնեաց գերեցմանա-  
տունը: Քանի մ' ամիսին Պէղճեան պատեհ առիթ  
գտնելով՝ Պէրպէր պաշին բանտարկելոց աղա-  
տութիւնը խորենց: Պէրպէր պաշին ալ Առջեւ-  
նին հրամանաւ բոլոր բանասարկեալները Պատրի-  
արքարան զրկեց որպէս զի Պատրիարքն որօշեալ  
աեղեր աքսորէ:

Հ. Պողոս Պատրիարք ի՞նչ ընթացք բռնէց:

Պ. Բ. Դրան հրամանաւ Տիւղեանց ընտանիքին

մէջ դանուած երեւելիները դատ զատ տեղեր ար-  
սորեց , և մնացածներն արք և կանայք աղաս  
թողուեցան : Տիւղեանց և ուրիշ աքսորեալներուն  
առներն ածուրդի ելած ատեն եկեղեցական զար-  
գեր տեսնուելով՝ յայտնուեցաւ որ՝ Հռովմէական  
Հայ տուներու մէջ Պատարադ կըլլան : Այս բանս  
Բ. Դուռն իմանալով՝ հարցուց և տեղեկացաւ թէ  
Հայոց աղդէն մաս մը ժողովուրդ Հայոց եկեղե-  
ցին զատուած , և Հայոց Պատրիարքին իրաւա-  
սութիւնը չեն ճանչնար : Ուստի խիստ հրաման  
մ' եկաւ Բ. Դուռն , որ շուտով այս բաժանումը  
վերցուի և Հայոց Պատրիարքն ամբողջ իր աղդին  
երաշխաւոր ըլլայ . Պատրիարքն այս լուրն առնեւ-  
լուն պէս անմիջապէս Հայ իշխանաց և ուրիշ երե-  
ւելի արհեստաւորաց հետ ժողով մ' ըրաւ , և ա-  
նոնց հաւանութեամբը Հռովմիական Հայ իշխան-  
ներն և երեւելի արհեստաւորներն հրաւիրեց , և  
արքունի հրամանը հաղորդեց անոնց . և որովհե-  
տեւ Հռովմէականներէն շատերը ձանձրացած ու-  
ղղուած էին այսպէս բաժնուած և օտարացած  
մնալէն , որոշեցին որ երկու կողմանէ դիսնական  
անձինք նստելով՝ քննեն այն խնդիրներն որոնց հա-  
մար վէճ և բաժանում եղած է : Ուստի անոնց  
կողմէն Գոլէճեան քահանայից և Լատին եպիսկո-  
պոսին Մօնսինեօր Վէկէնտիոս Քոռէսի հրամա-  
նաւը Հ. Մեսրով Աղա ըլլապեան , Հ. Թաթէոս

Ասկէրեան , Հ. Գրիգոր Գաղարաճեան , Հ. Քե-  
րովիէ Աղնաւուրեան , Հ. Պօղոս բժիշկ . Հ. Ստե-  
փանոս Եպիսկոպոս Աւգէրեան ընարուեցան . իսկ  
մեր կողմանէ Տ. Մեսրովիք քահանայ Մայր Եկե-  
ղեցւոյ , Տ. Բարթուլիմէոս քահանայ Ս. Խաչ Եկե-  
ղեցւոյ և Թագւոր վարժապետ . և Աբբացւոց կող-  
մանէ Հ. Մեսրովիք , Հ. Թովմա , Հ. Մերովիէ , Այս  
ժողովին կը նախագահէր Ստեփանոս Եպիսկոպոս  
Աւգէրեան :

Հ. Ժողովին ինչպէս համաձայնեցաւ :

Պ. Երեք ամիսի չափ մերթ Պէղճեանի և մերթ  
ճարտարապետ ամիրայից առները ժողովուելով,  
համաձայնեցան վիճաբաննելու խնդրոց կէտերուն  
վրայ , և ստորագրելով հետեւեալ օրը Պատրիար-  
քին ներկայացուցին : Պատրիարքն անմիջապէս ընդ-  
հանուր ժողով գումարեց , ուր ներկայ էր նաև  
Սոյ Կիրակոս Կաթուղիկոսը . ժողովքն այս որո-  
շումը մի առ մի քննելով հաւանեցաւ : Պօղոս Պատ-  
րիարք սիրոյ և միութեան վրայ գեղեցիկ ատե-  
նաբանութիւն մը ըրաւ և ժողովականք միաբան  
հաւանութեամբ սոյն համաձայնեալ խնդրոց տըլ-  
ուիլ խնդրեցին Հրաւեւ սէրա անուամբ . Պօղոս Պատ-  
րիարք ընդունելով օրհնեց ժողովուրդը . և ժո-  
ղովականք վիրար համբուրելով բաժնուեցան մե-  
ծաւ ուրախութեամբ : Նաեւ աշխարհամատրան  
Կիրակէ օրը 18 Ապրիլ 1820 Մայր Եկեղեցին ժո-

զաված էին ամեն աստիճանի երեւելի անձնութ, և  
թե եկեղեցական խուռն բազմաթիւն մը վերա-  
գարձող Հայոց քահանային երով և ժողովրդով,  
Աքքայեան և Գոլէճեան վարդապետներէն մէկ  
քանին՝ գաւաղան ՚ի ձեռին վեզար և փիլոն առած՝  
դասին մէջ կայսած էին : Պատարագի ատեն Աւե-  
տարանի Հ . Մեսրոպ կարդաց, Տաթեւացւոյն և  
Որոտնեցւոյն անունները չի յիշատակուեցան, նոյն-  
պէս Պօղոս Պատրիարք իր երկու սարկաւագները  
վարդապետ ձերնաղբեց առանց Լեւոնի և Քաղեւ-  
դանի ժողովները նզովելու . Պատարագ էն պերծը  
բոլոր երեւելի ամերայք Պատրիարքան Ելան, և ի-  
րմանց նարհակալութիւնը յայանեցին Պատրիարքին,  
Աւակէ ետքը ժողովարդը մէկզմէկ սիրով զրկեց  
և համբուրեց, իսկ երեւելեաց կողմանէ մէկ մէկու  
արուած ինչոյքներն անմիւ էին :

Հ. Գոլէճեանք ինչ միջոց խորհեցան Հայոց մի-  
ութիւնը վրդովելու համար :

Պ. Թէեւ Պօղոս Պատրիարք այս դործին իր ձե-  
ռնհասութենէն վեր ըստ լաւ գրտէր, բայց մէկ  
կողմէն ազգին սէրը և միւս կողմէն Դրան ստի-  
պումը պարտաւորեցին այս պէս փութանակի գոր-  
ծէլ: Եւ դեռ կաթողիկոսին և գտւառական առաջ-  
նորդներէն բոզաքներ չեկած, Լատինք և Պալէճ-  
եանք սկսան գրգռել զժողովուրդն, ըսկը որ  
պէտք է Ա. Պապը յիշէք որ կատարեալ ուղղակառ

Բլուր: Եւ երբ 12 Յուլիս 1820 Պատրիարքը վեր-  
ջին օճան խցի օրհնելով Եկեղեցիները դրկեց օճ-  
ուիլ ուղող հիւանդներն օծելու : Այն առեն կա-  
տինք իրենց բոլոր յոյսնրուն ոչնչանալը տեսնելով  
վերջին փորձ մ' ալլըրին և յաջողեցան : 1820 Օդոս-  
տոս 7 ին Քուցիանդի Լատին եպիսկոպոսին խորհր-  
դավը Գոլէճեան վարդապետ մը Հայ վարդապետի  
հաղուստով Հրաւեր սիրոյ տեսքը ձեռքը, ( որուն  
ոկիզը գտնուած Ա. Լուսուորչոյ պատկերին փոյց  
Պապին պատկերը փակուած էր ) շուկան կեսա-  
րացի կօշկակարաց խանութները շրջելով զրդուել  
սկսաւ, ըսկը ինչ անհոգ նոտեր էր, Պատրիարքը  
Էջմիածինն որանալով Պապին հնաւանդեցաւ, Ա.  
Մեռոնը վերցաւ, ալ ասկէ ետքը ձեթով պիտի օճ-  
ուիք՝ աղցանի նման, ալ լուելու ժամանակ չէ, մենք  
վազը պատրիարքան ովտի իջնենք, դոք ալ ի-  
շք, և իմայնենք Պատրիարքին թէ մենք Լուսա-  
ւորչոյ որդիք եմք, ոչ թէ հոռվմայ Պապին :

Հ. Գոլէճեանց այս ըրածն ի՞նչ աղետներ բերաւ  
աղջին դիմուն :

Պ. Պօղոս Պատրիարք այս լուրն առնելուն անմիշ-  
ջապէս առաջքն առնել ուղեց, բայց զիշերուան  
երրորդ ժաման ըլլալուն բան չիրցաւ ընել : Հե-  
տեւեալ առտուն խուռն բազմութիւն Մայք եկե-  
ղեցի իջնելով սկսան աղաղակել և ըսել, մենք Հայ

եմք , մինք Ս . Խուսաւորչոյ որդիք եմք , մինք ֆրուանք չենք ըլլար : Պօղոս Պատրիարք Մարկոս և Յակոբ Եպիսկոպոսները զրկեց որ համոզեն զժուզովուրդն ամենեւին մտիկ չընելով պատրիարքարանի դուրը խողափեցին , մըտան ներս և Պատրիարքը կը վիճառէին , բայց նա մերձակայ պատուհանէն Ցածիկ մը տուն վախուճ էր : Քիչ մը ետքը Ենիչէր աղասին իր զօրքովը հասաւ , ժողովրդէն մէկ քանի անձինք բռնեց և միւս ներն տլ շիրուցան ընելով՝ քիչ մը զօրք թողուց Պատրիարքարանի դռան առջեւ և ինքը մեկնեցաւ : Բ . Գուռն այս գրդութեան հեղինակները դանելու համար բանտարկեալները տանջել սկսաւ , որոնց՝ մին ծէլի Պաղտասարը , ուրիշ մ' աղ կարտապետ անուն սարկաւագ մը և գրդոիչ Գոլէճեան վարդապետը մատնեցին , բայց վարդապետը չդանուեցաւ . յետոյ սարկաւագը մատնեց զյախայեան Դրիգոր ամիրան և անոր աղղական Ազարիա անուն Երիտասարդը , Արքիարեան Մկրտիչ , Գարուքէճեան Արքահամբ , Կէլիկեան Պօղոս ամիրաները և ուրիշ շատեր :

Հ . Բանտարկեալներն ի՞նչ եղան :

Պ . Անմըք որ խոստովանեցան Պիխատուեցան , ինչողէս Սախայեան Դրիգոր ամիրայն Մայր Եկեղեցւոյ գրանն առջեւ , Կարտապետ Կեսարացի Տիգրի թաշի առջեւ , և Ցէլի Պաղտասար՝ Պամաթիա

իր սրճարամին առջեւ Պիխատուեցան , և Ազարիա Երիտասարդը Սոլլիթան Պայազիտ Բարիմադ զափու կոչուած առջը կախուեցաւ . իսկ մասնիչ սարկաւագը բանտին մէջ Մահմէտականութիւնն ընդունելով աղատեցաւ , և միւս բանտարկեալներն աքսորեցան . որոնց մէջ էին Աղնաւորեան Կարապետ , Պիղծեան Յարութիւն որով վողերանոցի տեսչութիւնն ալ Պիլէզիկնեան Պօղոս պապական Հայուն յանձնուեցաւ : Իսկ Արբայեանք որ սկսեր էին Հայոց Եկեղեցին յաճախել , ոյս տեսմանելով սկսան Լատինաց Եկեղեցին երթալ : Ասոնց հետեւեցան նաև Արբայցի ժողովուրդը . միայն Գապարածեան Հ . Դլիգոր հրաժարելով Արբայեան մարտանութենէն , փախաւ ի Փարիզ : Այս միջոցին Հալէի Եփէնտի և անոր խորհրդակից իսկունք Հըւայն աքսորէն մէջ խեղդամահ մնուան : Պէղծեան՝ որ աքսորէն դարձած և փողերանոցին տեսչութիւնը վերատին իրեն յանձնուած էր , յարմար առիթ սկսելով Սոլլիթանէն Տիւղեանց Զէլէպիներուն աքսորէն վերագանալու հրամանն առաւ 13 Ապրիլ 1823 , և վերագարձան Տիւղեանք : Նոյն օրեւը Սոյ Կիրակոս Կաթուղիկոսը վահճանեցաւ առջևայն այլազդի Եշխանաց թոյն տալովն , որուն յաջորդեց Եփէնմ իր Եզրորուրդին , որ դեռ 13 տարեկան էր . Պօղոս Պատրիարք 8 տարի աղջը կառավարելէն Ետքը՝ ծերութեանը պատճառաւ հրաժարեցու Պատրիարքութենէն :

Հ. Ո՞վ յաջորդեց Պօղոս Պատրիարքի :

Պ. Կարապետ վարդապետ Կ. Պօղոսի : Առ իր խելացին և խոհեմ բնաւորութեամբը Պէղճեանի հետ խորհրդակցութեամբ որոշեցին Հռովմէական վուխանորդ մը զնել ՚ի Հալաթիա որպէս զի Պատրիարքարան Եկած արքունի Հրամաններն անմիջաւոց հաղորդուն Հռովմէական Հայոց : Առոր համար Պէղճեան՝ Պիլէպիճեան Պօղոսի տունն երթալով Հրաւիրեց Հռովմէական Հայոց գլխաւորները և ծանոյց Պատրիարքին կամքն ու հաճութիւնը . որոնք ուրախութեամբ ընդունելով, իրենց և Պէղճեանի հաւանութեամբը Նուրիճան Անտոն վարդապետն ընտրեցին, բայց հետեւեալ օրը Հռովմէականք իրենք իրենց դատոնի ժամով ընելով՝ Մարուշ Պօղոս վարդապետն ընտրեցին փոխանակ Նուրիճան Անտոնի . ասոր ալ գո՞յ չըլլալով՝ սկսան մուծել որ հերետիկոս Պատրիարքի մ' իրաւասութենէն եւ նելով՝ զատ Պատրիարք և զատ Պատրիարքարան ունենան : Նոյն օրերը մնուաւ Զամշեան Հ. Միքայել վարդապետ, Կալուպետ Պատրիարքի օրով Օրթագիւղի Ս. Աստուածածնայ Եկեղեցին նորոգուեցաւ :

Հ. Այս միջոցին Հայաստանի մէջ ի՞նչ գլխաւոր գէպը պատահեցաւ :

Պ. Պարսիկը 1823 ին յանկարծ Բուռաստան յարձակելով բաւական տեղ զբաւեցին, Ռուսաց զօրքը բուտղ ըլլալուն համար : Հայերը տեսնելով Պարսի

ահապին յարձակումը, մանաւանգ երկար ժամանակէ ՚ի վեր Պարսիցին կրած տառապանացն ալ չկրնալով համբերել, Ներսէս եպիսկոպոս Աշտարակեցւոյն յորդումանօքը 20 - 25,000 հոգիէ բազկացեալ բանակ մը կաղմեցին Պարսկաց զէմ ելան և այնքան նեղը ձգեցին զՊարսիկները՝ որ ստիպուեցան ետքաշուիլ: Հայոց զօրավարներն էին Մատաթեան, Բեհրութեան, Երկայնաբաղուկն Արդութեանց, Մովսէս Կնէալ և Գանգդեսի Աղասին, որ սոսկական սպայ մ' էր: Ռուսք զայս տեսնելով իրենք ալ ահապին բավկութեամբ յարձակեցան Պարսկաստան և սկսան անխնայ ջարգել, մինչեւ Պարսիկը յաւսահատեալ սկսան փախչել, և Ռուսք անոնց երկրին մէջ յառաջանալով այրեցին առերեցին քանդեցին, այնպէս որ Պարսկաց նահը շատ աղաչանօք և գեսպաններու միջնորդութեամբ հաշտուեցաւ՝ Ռուսիոյ ամեն պարմաններն ընդունելով: Նոյն ատենը Արարատ դաւառը իր շրջակաց քաղաքներոն և զիւղերավի հանգերձ Ռուսաց իշխանութեան տակ անցաւ. Նաև պայման ալ զրուցաւ որ, Պարսկաստանէն Ռուսաստան անցնիլ ու զազ քրիստոնեայները չարդիլուին, այս ալ Հայաղի Աղա Մինաս Լազարեանցի խորհրդովը եզաւ:

Հ. Ե՞նչ հնարք մուծեցին Պատրիարք զատ Պատրիարք և Պատրիարքարան ունենալու համար :

Պ. Թընկըրեանք՝ Ապարագիւտ ԱՌէ հմէտ բաշխին

սեղանաւորներն էին՝ անոր միջոցաւ ազերաստիր մը  
տուին Սուլթանին, որուն մէջ հետեւեալը դրուած  
էր. «Պարսկակ Հպատակ Հայերն ապստամբելով»  
Բուսաց օգնութեամբը դրաւեցին Սրացատ նա-  
հանդը՝ որուն մէջ կը դժոնուի իրենց ընդհանուր  
Կամթուղիկասին նստած էջմիածնայ վանքը. ուսափ  
Հայք Զեր տէրութեան հետ թշնամութիւն ունե-  
նալով, հիմայ մտադիր են Օսմանեան երկիրներն  
արշաւել և քաղաքներն ու դիվերը դրաւելով,  
իրենց թագաւորութիւնը վերականգնել Բուսաց  
տէրութեան հովանաւորութեան տակ. և մենք՝  
որ թէպէտ աղդաւ Հայ եմք բայց կրօնքալ Պա-  
պական ըլլախնուս և անոնց Պատրիարքէն կառա-  
վարուելուիս, մենք ու աւշտամի Հայոց իրը հա-  
մամիտ պիտի սեպուինք Զեր վեհափառութեան  
առջեւ. ուստի կը խնդրեմք որ մեզի դատ Պատ-  
րիարք և Պատրիարքարան մը չնորհեք: Այս աղեր-  
սապիրը երդ Սուլթան Մահմատ կը կարդայ, ան-  
միջապէս կանչել կուտայ դֆեղճեան՝ դրաւածնե-  
րուն վրայ բացաւրութիւն կ'առի: Պէտքեան ո-  
ռանց վարսուելու մի առ մի Սուլթանին կը ներ-  
կայացնէ Պաղաւացի Պապականաց անհաջու առե-  
լութէւնն ու թշնամութիւնը Հայոց դէմ, և թէ  
Պատրիարքը ըստ որում որստամանառու է աղ-  
դին համար. կրնայ երաշխաւորել աղդին: Աւստի  
Սուլթանին հրանաւ կանչուեցան թէ կարապետ

Պատրիարքը և թէ հրաժարեալ Պօղոս Պատրիար-  
քը՝ հարցուելու համար որ կրնան երաշխաւոր ըլլ-  
ալ Օսմանեան տէրութեան մէջ դանուած Հայոց:  
Հ. Պատրիարքներն ի նշ պատասխան տաւին:

Պ. Պօղոս Պատրիարքը աներկիւղ և վատահ հաս-  
ատեց Հայոց աղդին հաւասարիմ, հլու և  
աիրամէր ընթացքը, և թէ Օսմանեան տէրու-  
թեան չնորհիւ անդորր և խաղաղ կեանք վարե-  
լով ամեն օր աղօթողէ թէ աւաստագութ Սուլթա-  
նին և թէ անոր արդարամէր նախարարաց համար,  
և թէ ինք և թէ կարապետ Պատրիարք ըստ ա-  
մենայնի կ'երաշխաւորեն բոլոր աղդին համար,  
ապահովցնելով որ այդպիսի վատ խորհուրդ մը  
ընաւ մաքէ անցուծ չէ: Կրկին կը հարցուի թէ  
ուսկից կրնաք զիանալ հեռաւոր քաղաքներ բնա-  
կող աղդպինց խորհուրդները, և ինչպէս կրնաք  
ապահովցնել զմեղ ապատամութիւն չծագելու  
մասին, միթէ ինչ որ կըլլոյ ձեր խորհրդով վը կ'ըլ-  
լոյ: Պօղոս Պատրիարք կը պատասխանէ թէ գրիո-  
տանէտիան կրօնին մէջ խորհուրդ մը կայ, որ ա-  
մեն մարդ իր սրտին դաշտամիքը պարտական է  
քահանային խօստավանիլ, որպէս զի մեղացը թո-  
գութիւն գտնի. ուստի եթէ քահանայր այդպիսի  
խորհուրդ մը նշնարելու ըլլուն ոնմիջապէս մեզ  
կը ծանուցանեն որ առաջքն առնենք. և ահա  
այս պատճառաւ է որ բոլոր աղդին կել աշխառ-

րենք . միայն կախովիկ ըստած մաս մը Հայերսաւ չենք կրնար երաշխաւորել , վասն զի անոնք ոչ միայն մեր եկեղեցին կուգան և ոչ մեր քահանայից կը խոստովանին : Եղարդուը համազուելով Սութանին կիմացնէ ինչ որ Պատրիարքէն կը լսէ . ուստի Սուլթանը սաստիկ բարկացած այսպիսի անլուր զրադարսութեան վրայ , կը համայէ որ աքսորուին Թշնկրեանք : Թշնկրեան Յակոբ՝ ի Կեսարիա , և եղբայրը Յովսէփ՝ ի Սեփաստիա կաքսորուին իրենց ընտանիքներովը , Յ Հոկ . 1827ին :

Հ . Ի նշու համար Պատրիարք ոմանք աքսորուեցան և ոմանք տեղափոխեցան :

Պ . Յունաստանի ապստամբութեան ժամանակ՝ Սուլթան Մահմետ Եւրոպական գեսապանները ճամրելով պատերազմ հրատարակեց ընդ դէմ Ռուսաց . և որովհնետեւ Բ . Պուռը դիմեր որ Պատրիարք Հայք Հայոց հետ ըմբարտնեցան , և Եւրոպաց հետ յարարերութիւն ունին , հրավարտակ դրկեց Հայոց Պատրիարքարքանը , որուն մէջ հետեւեալ պատուեները կընէր . Ա . Բաղր Պաղատացիք իրենց հայրենիք . Բ . Հուովմէտիան կարգաւորներն յԵւրոպա . Գ . Պօլսոցի Հուովմէտականք՝ որոնք որ չեն հնազանդիք Հայոց Պատրիարքին յԱնուսորու . Դ . Մայրապետները ոքսորուին . Ե . Հուովմէտականք ընտան ՚ի թերա և ՚ի Դաշտիա և Եւրոպացի դանաւող տեղեր . այլ ուրիշ Հայաշնակ

թաղերը բնակին : Եւ որովհետեւ նոյն ատեն Պատրիարքարանն այրած էր , Սամաթիա Ա . Գէորգ Եկեղեցին հրաւերուելով ըոլոր կուսաւորչական և Հուովմէտական Հայոց երեւելիներն ու արհեստաւորները՝ ՚ի ներկայութեան անոնց հրովարտակը կարդացուեցաւ 27 Դեկ . 1827ին . և սկսաւ աքսորը 1828 Յուն . 9ին : Նախ Գաղատացիք աքսորեցան իրենց ընտանիքներովը սարսափելի խեղճութեամբ , որոնց մէջ Լուսաւորչական Հայեր ալ կային՝ հրովարտակին մէջ լաւ որոշուած չըլլալուն համար . 27 Յունվար 1828ին Պօլսոյ մէջ տեղափոխութիւններ եղան . 6 Ժետրվար կարգաւորներն աքսորուեցան յԵւրոպա . 23 Ժետրվար մայրապետներն աքսորուեցան , 30 ը ՚ի Պանտըրմա , և Ար ՚ի Մահալը . իսկ Յիւղեմնէք՝ Ալլահվերտեան , Զամրչեանք և ուրիշ երեւելի ընտանիքներ՝ Հայոց Պատրիարքին իրաւասութիւնն ընդունելով մնացին կ . Պօլսոյ մէջ : Այս միջոցին Մայր Եկեղեցին Պում դարձուի մեծ ու ընդարձակ ձեւով շնուրեցաւ : Նոյն տարեն կ . Պօլսոյ մեծ սովոր կը աիրեր Օսմանիանց Հետ Ռուսաց ունեցած պատերազմին պատճռառաւ :

Հ . Թըրօ - Ռուսական պատերազմին վախճանն ի նշ եղաւ :

Պ . Ռուսաց բանակը Վրաստանէն անցնելով Եկա պաշարեց Ախրացիա քաղաքը , և սկսան պատերազմիլ : Եւ որովհետեւ քաղաքը զբուն օդնու-

թիւն չունեցաւ, 30 օր դիմանալէն յետոյ բնակիչք յանձնեցին ղանի: Այս պատերազմին մէջ 25,000 մարդ միայն քրիստոնեայներէն ջարդուեցան, քանի մ' օրէն Պայտադիտ, կարս, Մուշ և Կարէն յառաջացան Ռուսք, և եկան Բարերդ քաղաքը պաշարեցին. բայց ժողովաւրդը դէմ դնելով քաջութեամբ պատերազմեցան, և եօթն անդամ յաղթեցին Ռուսաց, բայց վերջատէս յաղթուեցան. վասն զի Ռուսք քաղաքին ջուրը կարելով հեռացան, և երբ Բարերդ գաղիք քաղաքէն դուրս յարձակեցան՝ Ռուսք պատուի սկսան թնդանուներ արձակիւ, որով շատ մարդ ջարդուեցաւ: Այս պատերազմը 2 տարիի չափ տեսելէն ետքը 7 Հոկ. 1829 ին հաշտութիւն եղու: Ենդ վեց և Դազգից դեսպանները վերադարձան, և երբ Պէօյիւք անը բաշխավայրին մէջ Սուլթանին ինչոյք մը կուտային, ինդ բեցին Սուլթանէն որ Հռումէական Հայք տքսորէ աղատուին և զատ Պատրիարքով կառավարուին: Սուլթանն ընդունեց և (Յ Յ Ա լ ի ք. 1830) վերադարձան և Լատինացւոյ Եկեղեցին չյածախելու համար ալ զատ եկեղեցի ընելու հրաման տախին իրենց: Նոյն ատքին նուև Նուրիճաննան Անտոն վարդապետ դերավայծուը Պատրիարք զրուեցաւ Հռումէն, բայց Սուլթանը ընդունեց, վասն զի Յւստիոյ հոգատոկ էր: ուստի Մանուէլ Եւեան Յակոբ վարդապետ Պատրիարք եղաւ. և այս

ալէս Հռումէականք սկսան երկու Պատրիարքով կառավարուեիլ, մին քաղաքական, և միսով կրօնական: Այս միջոցին 5,000 ի չափ Հայ աղստիներ Ենատօլուի քաղաքներէն եւ Պոլիս բերուեցան, որնք թէրսանէին և Խիլիքհանէին մէջ կ'աշխատէին՝ միայն հաց և հանդերձ ընդունելով: Կարապիտ Պատրիարք 8 տարի աղողը կառավարելէն ետքը հրամարեցաւ, և իրին յաջորդեց Ստեփանոս Աղաւենի Պատրիարք:

Հ. Հռումէական Պատրիարքներն ինչպէս կառավարեցին իրենց ժողովուրդը:

Պ. Նուրիճանն Անտոն՝ որ հոգեւոր Պատրիարք էր, ուղեց ճիշտ Հայոց Եկեղեցւոյ ծխոից և արարողութեանցը համեմատ կառավարել՝ առանց բան մ' աւելիցնել կամ պակսեցնելու. բայց կատինք և Գողէճեանք հակառակեցան և կատին ծեսերով կ'ուղելին կառավարել ղեկեղեցին. առոր համար մեծ դժուութիւն մը ծագեցաւ մէջնին, և երկուքի բաժնուեցան Արքոյեանք և Գողէճեանք անուններով: Արքայեանք իմացան ինչ անելաննելի բարիւրինուղոսի մէջ ինսանին, և Նուրիճանին ճարը հատած զրեց ի Հռումէ: Ս. Պապէն կանգակ բերել տառ, որ Հայոց նախնին արարութիւններն ու ծեսերը անխախտ պահուին, և առնենայն կերպով հնացանդին Նուրիճանն Պատրիարքի հրամանացը, և ով որ հակառակի նղովեալ ըլլոյ: Աա-

կայն Գոլէճեանք դարձեալ իրենց չար նովատակն  
առաջ տանելու համար՝ ամեն ճիշ թափեցին, և  
յաջողեցան փոփոխութիւններ ընել հին տօնացոյ-  
ցէն, որ Ս. Սահակ, Ս. Մեսրոպ և ուրիշ Ս. Հայ-  
րապեաններ նզավելով կը նզովին ջօնացոյցէն փա-  
փոխութիւն մ' ընողը. որք են Ս. Ծննդկան տօնն  
առաջ ընելով սրբոց տօներն ալ փախուեցան, և  
Ս. Հաղորդութեան դինին հետ ջուր խառնեցին՝  
Լուսաւորչայ գրութեանը հակառակ, Ս. Աստուածն  
առանց խաչեցարի սկսան երգել, Պատարադի մէջ  
Պապը յիշել, և այն. որով զատ եկեղեցի և զատ  
ազդ մ' ըլլալով սկսան տաճկերէն խօսիլ, այնուհետ  
որ շատ մոլեռանդ և վատ տղէտներ Հայերէն խօ-  
սեն անդամ մեղք կը համարէն. Հոռվիմեական  
Պատրիարքներն ուղեցին Յերիացիններն իրենց իշ-  
խանութեան առակ առնել. բայց կառավարութիւնն  
ունեց ազգայնութեան իրաւունքը ճամփարով զատ  
Պատրիարք դրաւ : Յակոբ Մանուկեան 2 տարի  
և 8 ամիս Պատրիարքութիւն ընելով մեռաւ : Իրեն  
յաջորդեց Վիճնայի Մարամներէն Սերովէ վար-  
դապետ : Այս միջոցին Պէջճեան կը վախճանի ՚ի  
մեծ սուր թողլով բոլոր Հայութիւնը :

Հ. Պէջճեանի համառօտ վարքն ի՞նչ է :

Պ. Պէջճեան Յարութիւն ամիբան բաղմաժին  
Եկեղեցիններ շինեց, Մայր Եկեղեցւոյ ուսումնարա-  
նին Եկամուաններ պատրաստեց, Ս. Փրկչի վանքն

ամեն կարասիներով հաստատեց, Երուապէմայ Ս.  
Գերեզմանին վրայ Հայոց պատարադ մատուցմանե-  
լու հրամանն առաւ, և իւր ծախիւքը Պարսկերէն  
և Հայերէն բառարան մը տպագրել տուաւ : Նոյն  
պէս Վկնետիկ տպուած մեծ Հայկաղեան բառա-  
րանին համար պէտք եղած դրամական օգնու-  
թիւնն ըրաւ և բոլոր օտար ազգաց ըրած մեծ բա-  
րիքներուն ու տէրութեան հաւատարիմ ծառայե-  
լուն՝ մանաւանդ Ռուսաց պատերազմէն վերջը Օս-  
մանեան սէրութեան 11 միջին վկնետկեան ոսկի  
պարտքը վճարելու հնարքը գտաւ, որով Թագավորէ  
Հիւանց բարձր պատուանշանին արժանացաւ, և  
անկէ ետքը դրէթէ միշտ Սուլթանին հետ կը տես-  
նուէր ու հետը ընթելու բարձր արտօնութիւնը հա-  
մարձակ կը վայելէր : Ի՞ր հիւանդութեան ատեն  
Սուլթանին բարձր այցելութիւնը ժամու մը չափ  
ընդունելու պատիւն ունենալէ ետեւ՝ մեռաւ 3  
Յունվար 1834 ին : Արքունի պալատին յատկացած  
նաւամատոյցէն նաւ գրուելով Եէնի գարու տար-  
ուեցաւ, և այն տեղ մեծահանդէս յուղարկաւո-  
րութեամբ Մայր Եկեղեցւոյ գաւիթը թաղուեցաւ  
Սուլթանին հրամանաւ . վասն զի Պօլսոյ բերդա-  
քաղաքին մէջ Սուլթաններէ և խիստ երեւելի Փա-  
շաններէ ու անոնց պարագայններէն ՚ի զատ մարդ-  
չքը թաղուէր :

Հ. Պէջճեանի մեռնելէն ետքը Ստեփանոս Պատ-  
րիարք ինչպէս կառավարեց ազդը :

Պ. Ստեփանոսի օրով բաղմաթիւ և կեղեցիներ շինուեցան , ինչոք ճարտարապետ Յովհաննէս ամիրայն՝ ի յիշառակ Գրիգոր ամիրային Ա. Գրիգոր Լուսաւորիչ անուամբ եկեղեցի մը շինել տուաւ ՚ի Գուղիուննուք նաև թէ յԱնատոլու և թէ Կ. Պօլիս շատ թաղերու մէջ վարժարաններ բացուեցան : Այն ատենի անուանի վարժապետներն էին Փէշտըմլճեան Գրիգոր , Գէորդ պատուելի Տ. Յովհաննէսեան , Պալտասար ըատուելի , Խաչատուր պատուելի , Յարութիւն պատուելի , Թաղւոր պատուելի , Փիղիգայ Պօղոս վարժապետ և Տ. Մեսրովքահանայ : Ճարտարապետ կարտպետ և անոր քեռայրը Յովհաննէս ամիրանները մեծ խնամքով զիշեր ցերեկ գլուխութիւն յառաջադիմութեան համար հոգ կը ասնէին , ինչոք Մայր Եկեղեցւոյ գպրոցը , Խատդիւզի Ներսիսեան և Օրթաղիսի Ա . Թարգմանչաց վարժարանները , Բայց ասանցմով դոհ չըլլալով զիշերօթիկ վարժարանի մը պէտքն անհրաժեշտ կը դդային . ուստի Պատրիարքին հետ խորհուրդ ընելով Երուսաղէմայ Գարբիէլ Պատրիարքին Խոսկիւտարի մէջ Եղած Երուսաղէմատունը աղդին չնորուիլը ինդրեցին , և ընդունեցան Սէրվէրեան ամիրային ծախիւքը եռայարկ գլուխոց մը շինեցին ՃԵՄԸՐԸՆ անուամբ , և ամեն թաղի գպրոցներուն յառաջադէմ աշակերտաց ընտիրներէն 50ի չափ առնելով գործի սկսան : Եւ որով

Հետեւ ճեմարդանը մեծ ծախրի կը կարօտէր , որոշեցին որ տարուէ տարի 120,000 դրշ . աղքատ աղոց համար Երուսաղէմայ վանքը տայ , և հարուստ աղոցմէ տարին 3,000 տկան դրշ . առնուի :

Հ. Ստեփանոս Պատրիարքի ատեն ի նշ երեւելի դէմքը պատահեցաւ :

Պ. Ստեփանոսի օրով Ամերիկայի Միսիոնարք Պոլիս զալով Հայոց հետ խիստ սիրով տեսնուիլ սկսան : Եթամիտ Հայերն այնքան մեծ պատիւ և ընդունելութիւն կընէին այս նոր աշխարհին Ճիղվիթներուն՝ որ իբենք անդամ կը զարմանային Հայոց այս առաջնան մարդասէր ըլլալնուն վրայ : Ասոնք մասնաւոր վարժարան մ՝ ալ բայցած էին : որովէս զի Հայք անոր նման գոլոց տեսած չըլլալովնին՝ աւելի համարում ունենան իրենց վրայ և Հայ տղաքներն իբենց գոլոցը դրկեն . ստկայն Հայերը շուտով իմացան ասոնց նպատակը՝ բացի քանի մը ծոյլ և անդորձ անձինքներէ , որոնք առատ ուռնիկ առնելուն՝ սկսան անսոնց կողմը բռնել : Ամիսայք Ստեփանոսի թոյլ բարուցը համար զինքը Պատրիարքութենէ վար տոին Տ տարի աղդը կառավարելէն ետքը , և Մարդուանու և Ամասիոյ առաջնորդ Յակոբոս Եպիսկոպոսը Պատրիարք դրին : Ասի բաւական ատենէ ՚ի վեր Ստեփանոս Պատրիարքի խորհրդականն էր : Յակոբոս Պատրիարք ուղելով աղդը նորազանդից տեսու-

թենէն հեռացնել քանի մը կասկածոտ անձինք որք են թովմաս վարդապետ, ֆիզիդայ Պօղոս վարժապետ, Տ. Գէորգ և տիրացու Յովհաննէս՝ աքսորել տուաւ: Նոյն օրերը մեռաւ Սուլթան Մահմատ, և յաջորդեց իր որդին Սուլթան Մէջիտ 18 տարեկան, 19 օունիս 1839. որուն շնորհիւ Թանդիմաթը հաստատուեցաւ 9 նոյեմբեր 1839:

Հ. Յակոբոս Պատրիարք ի՞նչպէս կառավարեց ազգը:

Պ. Յակոբոս՝ Ժողովրդասէր ըլլուլուն, ամիրայից բռնութիւնները տեսնելով չը կընար համբերել, կը վափաքէր որ Ժողովուրդն ու ամիրաները հաւասարեցնէ. բայց ամիրայը իրենց ամբարտաւանութեամբը շարունակ Ժողովրդեան հետ խստութեամբ կը վարուէին. հետեւաբար ազգիս մէջ երկապառակութիւնը պակաս չը. ուստի Ժողովուրդն ամիրայից ճանկէն ազատելու և իր իշրաւանցը տէր ընելու ճիշտ ատենն էր, շնորհիւ Թանդիմաթի: Արդէն սկսեր էին Ժողովրդին մէջն ամիրայից դէմ ատամունք կը ճըտէլ. վասն զի Ճեմարանին բացուած ատեն Յակոբ Պատրիարք աղէկ հոգ կը տանէր և իր ծախիւքը Մարզուանէն ու Ամասիայէն երկու աղայ բերած էր. նոյնպէս իւրաքանչւր ամիրայք խստացած էին տարին 3,000 ական զրշ մէկ մէկ աղու թոշակ գնարել, սակայն զանազան տարածայնութիւններ

հանելով և ճարտարապետ ամիրայից հետ հակառակելով սկսան չի ճարել. ուստի Յակոբոս Պատրիարք այն ստակներուն տեղը լեցնելու համար, դուրս դացող Հայերէն Յական զրշի տուրք մը սահմանեց ՚ի նպաստ Ճեմարանին. և նոյնպէս ամիրայից ալ օր աւուր վատթարանալը տեսնելով՝ ըուրին ալ Պատրիարքարան հրաւիրեց, և առաջարկեց որ պաշտօնական կերպիւ ժողովրդէն յատուկ տուրք մը ժողովի, և այդ ստակին մատակարարութեան համար ժողովրդին կողմէն 24 հոգաբարձու ընտրուէն: Ամիրայք հաճութիւն ցցուցին, հետեւանք չինալով տեսնել. ուստի 24 անձինք ընտրուեցան, որոնց 2ը իրենցմէ էր, Մերեէմգուլեան Հեթում ատենազպիր և երկու ալ գանձապետներ ընտրուեցան:

Հ. Յակոբոս Պատրիարք ուրիշ ի՞նչ բարեկարգութիւններ ըրաւ:

Պ. Աղդային Պապը իւրաքանչի մէջ զատաստանական ժողով մը հաստատեց՝ եկեղեցական և աշխարհական անձինքներէ բաղկացեալ, ընդնախազահութեամբ Պատրիարքական փոխանորդի: Նոյնպէս թաղերու մէջ Ժողովքներ հաստատել տուաւ, որոնք Պատրիարքարանի հետ յարաբերութիւններ ունէին: Առաջին անգամ ժողովրդեան կողմանէ ընտրեալ այս 24 անձինքը՝ աղդային ելեւմօնից

Հովհանոսութիւնն ստացան, ուստի ուղեցին որ ամիբայից կողմէն 6 հոգի տեսուչ կամ միւթէվէլի դրուին, որոշէս զի ժողովքին ըրածներուն տեղեկանան: Ամէլքոյք այս առաջարկութիւնը ընդունեցին, ըսելով, զմեղ ձեզի հաւասարեցնել կուղէք: Այս խօսքին վրայ թէև ժողովը ցրուեցաւ, բայց ամիբայից յոխորատնքն ալ վերջինն եղաւ: Այս միջոցին աղջին դործերն երեսի վրայ մնացած էին, թաղական դպրոցները ժողովրդեան վրայ մնացած, ամիբայիք ձեմարանը դոցելու հնարքներ կը մտածէին, ճարտարապետ ամիբայից հետ թշնամութիւն ունենալուն համար: վասն զի անոնց առաջարկութեամբը բացուռած և աւելի անոնց լինամօքն առաջ կերպար, վերջապէս ամիբայիք ձեմարանը դոցելու հնարքը դատին: Նախ համոզեցին Երուսաղէմայ փոխանորդը որ 120 հազար դրշ. տարեկան առուրքը գաղթեցնէ քիչ մը տասն յնտոյ իրենց ծանօթ բարեկամներուն թոշակաւոր աղաքները հանել տուին: ձեմարանը ուրիշ տեղէ եկամուտ մը չունենալով Պատրիարքը վերատին ՚ի ժողով հրաւիրեց ամիբաները, և անհարած աղջին, 80,000 դրշ. պէտք ունենալին իմացուց: Ամիբաները պատոսիսանեցին թէ 40,000 դրշ. կուտանք, 40,000 դրշ. ալ թող ժողովուրդը վեարէ: Ժողովուրդը պատրաստ էր տալու, բայց իրենք՝ ոչ երբէք, ուստի Յակոբոս Պատրիարքին:

ըիտքը յուսահատելով հրամարեցաւ Զ տարի ազդը կառավարելին ետքը:

Հ. Ով յաջորդեց Յակոբոս Պատրիարքին:

Պ. Երբոր Յակոբոս հրամարեցաւ Պատրիարքութիւնէ ժողովրդեան ատելութիւնն ու յուղմունքը աւելի շատցաւ ամիբայից զէմ, անանկ որ մինչեւ Եպորդում ականջը համեմլով ամիբաներէն երեք հոգի կանչեց և հարցուց Յակոբոս Պատրիարքին տանց Բ. Դրան խմոց առալու հրամարելուն պատճառը: Ամիբաները չդիտնալ ձեւացնելով, խնդրեցին որ ուրիշ Պատրիարքի մը ընտրութիւնը չնորհէ: Եպորդում ընդունեցաւ և առաջարկեց որ իթէ արմանաւոր մէկը կայ թող ընտրեն: Աւստի ամմիջապէս Ստեփանոս նախկին Պատրիարքը կ'առաջարկեն. Եպորդում ալ Սուլթանին խմացնելով վերըստին Ստեփանոսը Պատրիարք կը կարգէ, որ խիստ Երկուու ըլլալուն ամիբայից շուտով կը խոնարհէր. և իրեն խորհրդական ընտրեցին Պօղոս Եպիսկոպոս: Բայց ժողովուրդը չհանդարտեցաւ, վասն զի ձեմարանին ծախըը Սէրվէրեան չկրնալով տանիլ, հրամարեր էր. անօրէն Յակոբ Մահուէլեանն ալ 6 Ապրիլ 1841 քննութեան հանդիսին պատճառաւ տղայոց ծնողն և ուրիշ ուսումնաւէր և ձեմարանին բարեկամ անձնիք հրաւիրելով ՚ի ձեմարան, աղդու առենարսնութեամբ իմացուց ձեմարանին կործանման վիճակի մէջ ըլլալը: Ասոր

վրայ այն տեղ ներկայ եղող ժողովուրդը «Միակամ» անուամբ ընկերութիւն մը կը հաստատեն ձեմարանին հաստատ յարատեւութեանը ամեն ջանք չխնայելու , և կը խնդրեն Պատրիարքէն թէ ձեմարանին յատկացեալ եկամուտն Աղդային ուրիշ եկամուտներէն բաժնուի , վասն զի ամիրաները Յակոբ Պատրիարքին սահմանած անցագրատան Յական զրշ տուրքը Փրկչի վանուց յատկացուցեր էին . ձեմարանը շուտով դոցուելու համար Պատրիարքարանն ընկերութեան ձայնին ականջ կախեց :

Հ. Ստեփանոս Պատրիարքի օրով ի՞նչ երեւելի դործ պատահեցաւ :

Պ. Միակամ անուամբ ընկերութիւնը երբ տեսաւ որ Պատրիարքարանը ամիրայից աղդեցութեամբն իրենց ականչ չկախեց , ձեմարանի աշակերտք Թօհաֆծի Եղիաղար անուն Հայու մ' առաջնորդութեամբ Քերպառանէն աղերսագիր կուտան Սուլթանին , ձեմարանին յարատեւութեանը համար . ասոր վրայ Պատրիարքը զայրացած՝ այս դործին դլուխ կեցողներէն մէկ քանիները կանչելով կը յանդիմանէ , բայց անոնք բանի տեղ չդնելով այն սաստը , երթալով դործը կը սաստկանայ , ամիրայք կը խնդան ժողովրդեան վրայ , ուստի բոլոր ժողովրդը սոք ելած , դարձեալ աղերսագիր կուտան Սուլթանին , աղաչելով որ Աղդային ելեւմը տական դործերը ժողովրդեան կողմէն ընտրեալ

24 անձանց ձեռօք տեսնուի , և այն 24 ները Բ . Դուռը վաւերացնէ : Սուլթանը կը հրամայէ որ ժողովրդեան դատը տեսնուի . ուստի արհեստաւորաց գլխաւորներէն արդարութեան ատենին մէջ դատ վարելով վերջապէս ստացան իրենց ուղածը , անանկ որ ամիրաներն ամենեւին դործի չպիտի խառնուին , իւրաքանչիւր Էւանք իր մէջէն պիտի ընտրէ , և Էւանքին վկայականով պիտի դայ Պատրիարքարան և ասոնցմով պիտի ընտրուին 24 ները ու բոլոր Աղդային դործոց տեսչութիւնը վարեն : Եւ ահա այս անդամ ժողովրդեան կողմէն վարչութիւն մը կը սահմանուի որ Հայոց Աղդին ծնունդէն ՚ի վեր տեսնուած ու լսուած բան չէր . նախատինք մ' էր ասի ամիրայից , ուստի ամեն հնար՚ի դործ դրին և Բ . Դունէն եկած Պատրիարքուն անդործադրելի թողուցին . ժողովն անհամբեր կերպիւ ֆէրմանէ կսպամէր , որ հաշիւ սկահանջէր . 2 ամիսն անցաւ և դեռ ֆէրման չեկաւ : Այս միջոցին ձեմարանը դոցուեցաւ և ամիրայք իրենց վրէժն առած սեպեցին ճարտարարէատ ամիրաներէն , ուստի Օդսստ . 24 ին ժողովուրդը վերստին աղերսագիր կուտայ Սուլթանին Զերէն պարհէն դարձած ատեն : Սուլթանը կը հրամայէ որ Հայոց աղդային դատը շուտով և անմիջապէս տեսնուի : Բ . Դուռն Օդսստ . 24 ին աղերսագիր տուողները կը վնտուէ , որ գինեպան Խակէնտէրն և 24 անձինք

էնն : Եղբ ժողովարդը կիմանայ առերսադիր տուողը՝ ներուն վիճառուելը , 3,000 էն աւելի անձննը շւշկան խանութիւնին դոցելով զինեպան իսկէնտէրի առաջնորդութեամբ թ . Դուռը կը դիմէն : Արտեղ ներկայ եղող 24 անձերէն 16 ը բանտարկուենր էին , և եղբ իսկէնտէրն ալ կուղեն բանտարկէլ , ժողովուրդը ձայնը կը բարձրացնէ և կըսկօնն ազագակել թէ մենք ենք աղջրոսպիր տուողը , Ազգն է , ամենքնիս եմք , ուստի թ . Դուռը ժողովարդը քաղցրութեամբ կը համոզէ և բանտարկէնտէրն ալ ազատ կը թողու , խոսանալով նաև իրենց ուզածը կտաարել : Նոյն միջոցին ամերայից կողմն եղող Ալթունեան Պետրոս վաս վարդապէտն արտաքին գործոց պաշտօնէն դիմելով պարագիխոց զինատուիլը և ումանց ալ աքսորուիլը կը խնդրէ , բայց կտաալութիւնը . կը մերժէ անոր առաջարկութիւնը , միայն Ծղոստ . 24 ի գէտքն անհիոնէնապար յանձնանք ըլլուլը 24 ներաւն խմացնելով և իրենք եւս խոստանալով Սեպտեմբեր 17 ին կաքսորուին հետեւեալ անձննը , Յովհաննէս վարդապէտ Սեթեան , Օրէլոր Տիմիֆեան , Յակոբ Մանուէլեան , Յարութիւն Յովհաննէսեան , Ենդրէս սմէրիչ , մահաւեսի Պետրոս պատմածի : Նոյն օրը ժողովրդանն կողմնէն թ . Դուռը կերթան Քօղա վարդապէտ , Եիղունքի Աստված և ուրիշն ը , աքսորին գէմ բողոքելու համար : ա-

նոնք ալ կաքսորուին , և Պատրիարքն ու ամիբանքը թ . Դուռը կը կանչուին ժողովուրդը խաւաղեցնելու համար : Սակեփանոս երկրորդ անդամ և տարի Պատրիարքութիւն ընկէն ետքը՝ հրաժարեցնելով Աստվածատուր եսլիսկապար Պատրիարք կը կարդեն , բայց ոչ ժողովրդեան հաճութեամբը , 13 Սեպտ . 1841 ին : Նոյն օրերը Սամաթիոյ՝ Հայոց Պատրիարքարանը այրեցաւ :

Հ. Աստվածատուր Պատրիարքն ի՞նչպէս կառավարեց Ազգը :

Պ. Ամիբայը կարծելով որ ալ ժողովուրդը հանգատած է , գարձեալ սկսան առջի ընթացքը շարունակել . սակայն ժողովուրդը քահանաներով հանդերձ գարձեալ և չըրրորդ անդամ , և աշառներ լցուած՝ աղերսադիր տուաւ Սուլթանին , ըսկը թէ մենք Ցէրութեան հրամանաց անհնապանդշեմք , բայց ամիբայից ալ գերին չըմք : Եւ թէ պէտ նոյն օրն ամենքն ալ կը բանտարկուին , բայց դիշերն աղատութիւն կը բատանան իրենց տունը երթալու : թ . Դուռը ՚ի շնորհս ամիբայից գարձեալ յերկարածդել կսկսի ժողովրդացնեան բողոքը , ուսուի ժողովուրդն առաւելեաւ զայրացած՝ միանալով երգաւմ ըրին թէ ինչ որ պատահի բանտ , արսոր , մահ՝ տանիլ և ամիբայից կամացը չհնապանդիլ : Այս երգումն ամիբաները զարհութեցաւ , ուստի Աստվածատուր Պատրիարք , Տատեան Յովհաննէս և Արդումնեան

Արդուման ամիրաները, ժողովրդեան զիմաւրը-ները վէզիր խան ՚ի ժողով հրաւիրելով, կը հա-մողեն խստանալով որ ժողովսդեան կամացը պիտի հնազանդին, և այսպէս կը խաղաղեցնեն ժողովուրդը, և Բ. Դուռը Պատրիարքարանէն տեղե-կանալով ժողովրդեան իրաւացի և արդար խընդ-րոյն, հրավարտակաւ կը հաստատէ 12 Դեկ. 1841 արհետաւորներէն 27 անձինք Ազգային դործերու-մատակարարութեանը համար, և ամիրաներէն ստորադրութիւն կառնէ Սղդային դործերու չը խառնուելու համար: Ուստի ժողովրդական վար-չութիւնն աւելի ոյժ առնելով կը հաստատուի. բայց տարիէ մը վերջը ժողովրդական վարչութիւնը ձանձրանալով չորս կողմէն ելած խոչնդուներէն հրաժարականը տունաւ Բ. Դրան, որով 13 Նոյ. 1842 վերստին ամիրայից յանձնուեցաւ աղջային վարչութիւնը:

Հ. Ամիրայը ի՞նչպէս կառավարեցին Սղդը:

Պ. Ամիրայը ալ չիրնալով առաջուան պէս ժո-ղովուրդը կառավարել, ուրիշ ճար մը մտածեցին: Նախ ժողովրդեան հետ հաշտուիլ, այս ալ ան-կարելի էր. ուստի Երկանեան ամիրային նախա-դահութեանին ամիրայից ժողով մը դումարուե-ցաւ, և այն աեղ՝ Երկանեան Ազգին թշուառու-թիւնը մի առ մի բացատրելով յայտնեց որ Պատ-րիարքաց անհողութիւնն է պատճառը. ուստի

ժողովը միաբանութեամբ որոշեց որ ժողովքին կողմանէ Պատրիարքին հրաժարականն ուղուի: Եւ երկու ամիրայ քաղաքավարութեամբ Պատրիարքին ներկայանալով հրաժարականը կը ինդրեն. և որով-հետեւ ձանձրացած էր Պատրիարքին Ազգային երկ-պառակութենէն, անձնական տկարութիւն պատ-ճառելով, հրաժարականը զրեց Բ. Դուռը և տարի Պատրիարքութիւն ընելին ետքը, և Պատրիարք եղաւ Մատթէոս եպիսկոպոս առաջնորդ Զմիւռ-նիոյ ժողովրդասէր և ուսումնասէր անձը 1 Յու-լիս 1844 ին, որ ժողովրդեան սիրելի ըլլալով իր աղդու ատենաբանութիւններովն ու համոցիչ խօս-քերովը ժողովուրդն ամիրայից հետ հաշտեցուց, և 30 հոդիէ բաղկացեալ վարչութեան ժողով մը կազմեց, որուն 16 ը ամիրաներէն և 14 ը ժողո-վրդէն էին. Ս.յս միջոցին թէպէտ ամեն թաղ սկը-սեր էր իր դպրոցներուն յառաջադիմութեանը հա-մար աշխատիլ, բայց ասոնց մէջ ամենէն փայլունն ու յառաջադէմը Սամաթիոյ Ս. Սահակեան վարժա-րանն էր, որ ընկերութեան մը արդեամք կը կա-ռավարուէր, Փափազեան Անդրանիկ և Ղաղուրոս-եան Քրիստոսութ հաստատամիտ և ամեն կողմէ եկած խոչնդուներու համբերելով յաղթող ան-ձանց մատակարարութեամբը. նոյնպէս Ներսի-եան վարժարանը, բայց այս ձէզայիրը Եան Մկրտիչ ամիրայի ինամօք: Ս.յս ատենները վերստին ոկտո-

Էջմիածնայ կաթուղիկոսին յիշատակութիւնը Պօլսոյ եկեղեցիներուն մէջ, վասն զի 1828 թաւաց պատերազմին համար դադրած էր Բ. Դրան հրամանաւ թէ Կաթուղիկոսին յիշատակութիւնը և թէ նուիրակաց գալուստը՝ Այս միջոցին 1843, Ներսէս Աշտարակեցի Կաթուղիկոս կընտրուի Ազգավիճն Առարի աքսորանաց դատապալբառելէն յետոյ, որ Ազգային իրաւանց պաշտպանութեանը համար էր:

Հ. Ներսէս Կաթուղիկոսի վկայ ի՞նչ դիմուլիք կայ:  
Պ. Երր Ս. Էջմիածնայ Կարբեցի Յովհաննէս ընդ-  
հանուր Կաթուղիկոսը մեռաւ, իրեն յաջողգեց  
Ներսէս Ե. Սշտարակեցի, որ խոհեմ, հեռատես,  
Աղդասէր և ուսումնասէր անձ մ' էր: Գեռ եպիս-  
կապոս չեղած քանիցս անդամ բողոքած էր նա-  
խորդ վախճանեալ Յովհաննէս Կաթուղիկոսին Պա-  
լաժենեան վենել և ինքն ստորագրելուն համար.  
Նաև շատ անդամ աղաչելով ստիպուծ էր զինքը՝  
որ ստորագրութիւնը յետո կոչ. բայց Յովհան-  
նէս Կաթուղիկոսն անդատութիւն կը համարեր  
յետո կոչումը: Եւ երր Ներսէս՝ Կաթուղիկոս ընտ-  
բուեցաւ, Յովհան Կայորը չնորհաւորելով Կաթու-  
ղիկոսը հրաւիրեց 'ի Բեղրապուրկ: Այն անդր  
նախ Կայսրն այցելութեան կուղայ Կաթուղիկո-  
սին: Ներսէս Կաթուղիկոս խօսակցութեան մի-  
ջոցին կը յիշեցնէ Կայսեր, Յասքնէի զըրտիւթեան  
աղաջաններին յարգորելով Պարսկաց արշաւանքի

առեն Հայոց Ազգին Կայսրութեան փառքին համար թափած արիւնը , և իրեն՝ Հայոց Ազգին ու Եկեղեցւոյն աղասութեամբ համար տուած սուսրագրութիւնը քովն իրը սրբազն մասունք պահած ըլլայը : Կայորը կը պատասխանէ ու կըսէ . Հաստատ եմ իմ խստամանս վրայ՝ որ յանուն Աստուծոյ ստորագրեցի և չեմ ուզեր ձեր Ազգին պարագական մնալ՝ որ այնչափ արիւն թափեց Կայսրութեանս փառքին համար . բայց այժմեան քաղաքականութիւնը չը ներեր , ուստի ալէար է համբերել մինչեւ որ Աստուած իմբը անօրինէ : Եւ հետեւեալ օրը երբ փոխադարձ այցելութեան կերպայ Ս. Կաթոլիկոսը առ Կայունը , խօսակցութեան միջոցին Կայորը Հայ և Առաս Եկեղեցեաց միութիւնը կառաջարկէ : Կաթոլիկոսը պատասխանելով կըսէ՝ Ցէր , դուք միութիւն կուղեք , բայց ինչ եղանակաւ՝ հինը նորին հետ թէ նորը հինին , ո՞րն է արդարը , ձեր գատողութեամբ կը յանձնեմ : Այդիշ օր մ' ալ երբ կը տեսնալին , Կայորը կառաջարկէ որ վեղարին ձեւը փախէ , և Առաօց Հոգեւոր Միհեթին ձեւալը գնէ : Կաթուղիկոսը կը պատասխանէ , Ցէր , երբ Զմիւռին Ս. Յանիկանոս Եկեղեցւոյն մէջ վարդապետ կը ձեռնազրուէի . Քրիստոնի խաչելութեան առջին ուխտեցի որ ոյս ձեւ մեղարով գերեզման իջնում՝ ուստի Աստուծոյ առջեւ որ ուխտած եմ , ինչ-

պէս կընամ ուխտս դրժել ի չնորհս մարդկան :  
Եւ երբոր կայսրն այս խօսքերը կը լսէ , հիանա-  
լով կը գովէ զանի և կը հրամարէ աղամանդեայ  
խաչ կըել վեղարին վրայ :

Հ. Մատթէոս Պատրիարքին օրով ի՞նչ երեւելի  
գէպքեր պատահեցան :

Պ. 1845 Ապրիլ 3ին Հռովմէական Հայոց աշ-  
խարհական Պատրիարքը մեռնելով՝ տեղը յաջոր-  
դեց Սննոն վարդապետ Հասունեան : Մատթէոս  
Պատրիարք չնորհաւորութեան զրկեց երկու հոգի  
իր կողմէն , և այս առաջինն եղաւ Հայոց և Հռով-  
մէականաց մէկզմէկու այցելութիւնը . Բ. Դրան  
հրամանաւ Հայ եկեղեցականաց գլխարկները փոխ-  
ուեցան : Եւ երբ Պատրիարքներուն Միւսմէշա-  
րութեան շքանշան տրուեցաւ Բ. Դոնէն , Հասուն-  
եան Սննոն չնորհաւորելու եկաւ զՄատթէոս Պատ-  
րիարքը : Նոյն գրերը Ռուսաց կոստանդինոս մեծ  
Դուքսը Պօլիս դարձով այցելութեան եկաւ Մատ-  
թէոս Պատրիարքին , ընկերութեամբ արտաքին  
դորձոց պաշտօնեայ թիֆաթ բաշային . Ռուսաց  
Դեսպանին և Այլաղեան Յովհաննէս անուն Ռու-  
սիացի երեւելի պատկերհանին . Նոյնպէս Գաղղիոյ  
թաղաւորի որդին Մօնթքանսիէ Դուքսն այցելու-  
թէան եկաւ Մատթէոս Պատրիարքի : Ասոր օրով  
Բողոքականաց քարողիչ Միսիօնարները , ուսնք  
նախ դպրոցներ բանալով բաւական Հայ աշակերտ-

ներ առած՝ ձրի Գաղղիարէն՝ Անդղիարէն կուսու-  
ցանէին , սկսան կրօնական դիտութիւն գտա տալ .  
աղքատաց ողորմութիւն բաշխել , պարտական-  
ներու ոգնել . այս կերպով բաւական մարդ որ-  
սալով սկսան Հայոց եկեղեցին յայտնի յանդիման  
նախատել . որով Մատթէոս Պատրիարք չկընալով  
հանդուրժել՝ կոնդակներ զրկեց եկեղեցիները և  
նղովեց զանոնք : Մատթէոսի օրով դարձեալ վէճ  
բացուեցաւ Հայոց և Յունաց մէջ երուսաղէմի Ա.  
Ծննդեան տաճարին գրան բանալոյն համար :  
Նոյն օրերը Սամաթիոյ Ս. Սահակեան գպրոցին  
տարեկան քննութեան հանդէսը կատարուեցաւ  
՚ի ներկայութեան Մատթէոս Պատրիարքի , Ամի-  
րայից , Միթէրճիմ Մէհմէտ բաշոյի , բժշկապետ  
Խամայիլ էֆէնտիի , Զէվէր էֆէնտիի , թէրճիման  
Ֆուատ պէյ էֆէնտիի , և բազմաթիւ ժողովր-  
դեան : Ասոր օրով հաստատուեցաւ նաև Ազգա-  
յին վաւերացեալ դարձերն ու եղելութիւններն  
Ազգայնոց հաղորդելու համար Հայաստան անուն  
Արտիրը : Նոյն օրերը՝ 1846 Յունվար 1 Հայկաղ-  
եան անուամբ ընկերութիւն մ' ալ հաստատուե-  
ցաւ , դպրոցներուն աժան զնով գասագիրքեր մա-  
տակարարելու նպատակաւ :

Հ. Ամիրայք ի՞նչու թշնամացան Մատթէոս Պատ-  
րիարքին հետ :

Պ. Տեսնելով անոր բացսրձակ իշխանութիւն վա-

բերը, և մէշտ Աղջային յառաջադիմութեան և գպրոցներու վարդացման անդուլ ուշխոստիլը, ամիւրաները այս բանն աղէկ աչքով չէին տեսներ, և առաջին յեղափոխութենին ալ խրատուած ըլլունուն, ուրիշ միջոցներ կը մտածեն, այն է առաջնորդները փոխեն: Բայց Մատթէոս Պատրիարք համարձակ խօսելով թէ առաջնորդները դաւառացիք կրմատըն, և Հոդեւոր ժողովն ընտրեալին և ընտրողին արժանաւորութեամբը կը վաւերացրնէ Հայաստանեաց Ս. եկեղեցւոյ կանոնին համեմատ: ամիրաներն այս լսելով շատերը հետը կը թշնամնան, բայց նոյն միջոցին ձեզայիրեւան Մկրտչ ամիրան խիստ զօրեղ և պայծառ վիճակ մ' ունենալուն կ' տիսածէին, վասն զի զՊատրիարքը կը պաշտպանէր: Ֆիչ ժամանակ եւրը ձեզայիրեւան ալ թշնամացաւ Պատրիարքի հետ, բայ որում Մատթէոս Պատրիարքը տկարութեանը պատճառաւ անոր հօրը մահուան յուղարկաւորութեան հանդէսին չէր գայեր՝ ուստի ամենը մէկ գալով խորհուրդ կընեն Պատրիարքը հրաժարեցնելու, բայց ժողովուրդէն վախնալով կորոշեն որ Պատրիարքին իշխանութիւնը սահմանափակեն, Աղդային վարչութեան գործերն երկու ժողովով կառավարուին, և Պատրիարքին առանց ժողովոյ գիտութեանը Բ. Գրան Ռուբեն չգրէ: Աւստի կրծիկեան Յակոբի և ճեղայիրեւան Մկրտչի ձեռամբ

Բէշիտ բաշան հաճեցնելով, ասի հրովարտակ մը կը զրկէ Սուլթանէն վաւերացած ՚ի Պատրիարքարան՝ Յ Մայիս 1847: Մատթէոս Պատրիարք եկեղեցականները, ամիրայները և ժողովրդեան գլխաւորները հրաւիրելով հրովարտակը կը կարգայ, որով երկու ժողով որոշելու արտօնութիւնը կը արտէր մէկը և եկեղեցականներէ բաղկացեալ կրօնական Հոդեւոր անուամբ, և միւսը 20 աշխարհականներէ Գեղադոյն անուամբ, ասոնց նախագահը Պատրիարքը պիտի ըլլայ և գործադին ալ էւշէեն անուամբ կրծիկեան Յակոբ: Ս. յն տեղ ներկայ եղաղ ժողովուրդը՝ ժողովոց անդամները կրմարէ և անունները Բ. Դուռը զրկեցին վաւերացնելու համար: միանդամոյն պայման դրին՝ որ երկու տարին անդամ մ' անդամոց փոփութիւն ըլլայ և հրավարտակաւ վաւերացուի:

Հ. Ֆէրիէրի ո՞վ է և ի՞նչ յարաբերութիւն ունեցաւ Հայոց հետ:

Պ. 1847 Մայիս 20 ին Բ. Դոնէն ժողովին վաւերացման հրովարտակը բալով, Աղջային գործերը կարդադրել սկսան: բայց ասով ամիրայը ո՛չ Պատրիարքին և ո՛չ Աղջին զնաս մը տուածեղան, վասն զի Պատրիարքը գիտէր որ օր մը ներկայ ժողովին մէջ բազմող ամիրայից տեղ, ժողովուրդն եր աղատ կամքովն ուղած անձը պիտի ընտրէ: Նոյն օրերը Կ. Պօլիս եկաւ Հռովմայէն

Ֆէրիէրի կարդինալը՝ մեծամեծ ընծաներով, և Բ.  
Դուռը հրաման զրկեց Հայոց և Յունաց Պատրի-  
արքներուն՝ որ քաղաքականութեան համար այ-  
ցելութիւն երթան Ֆէրիէրէի : Ուստի Մատթէոս  
Պատրիարք ընկերութեամբ Զամուրճեան պատուե-  
լի, և Աղաթօնեան Մկրտչին այցելութեան կեր-  
թայ, և փոխադարձ Ֆէրիէրի այցելութիւը խիստ  
փառաւոր կերպէւ կընդունէ : Սմիտ մը վերջը  
Պատրիարքարանը Հայերէն տալուած կոնդակ մը  
կուգայ, որուն մէջ Հայոց Եկեղեցին հերձուածող  
անուանելով կը հրաւիրէի Հռովմայ Եկեղեցւոյն  
գիրկը մոնել: Մատթէոս Պատրիարք՝ Տատէան և  
Չուլեան ամիրաներուն դիմելով կը խնդրէ որ Բ.  
Դրան խմացունեն այս նախատինքը՝ բայց անոնք  
փոխանակ Բ., Դրան խմաց տալու՝ Պէշիլթաշ ի-  
րենց տունը կը հրաւիրեն զնէրիէրի, և կը խընդ-  
րեն ցայց տալ Հայոց Եկեղեցւոյն մոլութիւնները:  
Հոն կը դժոնուի նաև Մատթէոս Պատրիարք և  
Զամուրճեան պատուելին : Ֆէրիէրի կըսկսի ոչինչ  
փաստերով ապացուանել, բայց Մատթէոս Պատ-  
րիարք ամենը ջրելեն ետքը՝ Հայոց Եկեղեցւոյն  
հաստատութեան օրէն մինչեւ այսօր անարատ և  
անխախտ մնալն, և Հռովմայ Եկեղեցւոյն քանի  
քանի անդամ փոխատութիւն կը ելը կապացու-  
ցանէ : Նոյն օրը ժամանակը ըներելուն, կորոշուի  
որ Բ. անդամ մ' ալ խօսակցին այս նիւթին վրայ :

Արդ 1848 Յնգր. 29՝ Ֆէրիէրի Պատրիարքարան  
գալով կրծիկեան Յակոբ և Զամուրճեանի հետ եր-  
կար ատեն աեմնուելով կը մեկնի : Երկու օրէն Լա-  
տին քահանայի մը ձեւոք Զամուրճեան պատուելին  
կը հրաւիրուի Ֆէրիէրի կարգինալէ : Զամուրճեան  
պատուելին երթալով, կըսկսին դարձեալ Հայոց  
Եկեղեցւոյն ուղղափառութեանը վրայ խօսիլ, և  
Զամուրճեան կը հաստատէ և կը համոզէ թէ  
Հայ Եկեղեցին ուղղափառ է և ուղղափառ պիտի  
մնայ միշտ :

Հ. Հասուն Անտօն՝ Ֆէրիէրի Հայոց Պատրիարքին  
հետ տեսնուիլը երբ լսեց, ի՞նչ ընթացք բռնեց :

Պ. Անմիջապէս իր համախոհներովը ֆէս նաղը-  
րիին տունը ժողովեցան նոյն գիշերը : Հրաւիրուե-  
ցաւ նաև Ֆէրիէրի կարգինալն ալ, և ընթրիքէն  
վերջը Հայոց վրայ խօսք բացուելով, Ֆէրիէրի ըստա-  
թէ Հայոց վրայ հնըետիկոսական ամենեւին կաս-  
կած մը չտեսնելուս համար Ա. գահին առջև պիտի  
վկայեմ: Այս խօսքին, ներկայ Եկող ժողովա-  
կանք ամենը մէկէն կըսկսին մեղադրել զՖէրիէրի,  
ըսելով. Արդարեւ, գերազագութառ տէր, դուք  
շատ միամիտ եք Եղեր որ Հայոց չարամատթիւնը  
չկրցիք հասկնալ, Հայերն ինչպէս կը դաւանին՝  
այնպէս չեն հաւատար, և դուք ձեր միամտու-  
թեամբը խաղուած եք անոնց խօսքերուն՝ անոնք

անհաշտելի թշնամի են Հռովմայ դահուն։ Մենք  
որ 20 տարի է շարունակ կաշխատիմք Հռովմայ  
դահուն անսփառութեանը համար, և դուք որ հի-  
մայ սփառական երեւցուցիք հերետիկոսաց, պիտի  
բողոքեմք ձեզի համար առ Ս. դահն Հռովմայ, և  
այն։ Եւ այնչափ կը նենքն որ Ֆէրիէրի կը խոստա-  
նայ իր խօսքը յետս կոչել։ Եւ երբ կը կին տեսու-  
թեան կուգայ Տատեամներուն տունը յԱյստեփա-  
նոյ, հնե կը դժոնուի նաև Մատթէոս Պատրիարք՝  
և ընթրիքի ատեն Տատեան Գարեդին՝ միութեան  
վրայ ատենաբանութիւն կընէ, որու վրայ շատ ու-  
րախ կը նայ Ֆէրիէրի։ յետոյ երբ դարձեալ միու-  
թեան վրայ խօսք կը բացուի Ֆէրիէրի կը պա-  
տասխանէ։ Ես շատերէն իմացայ որ Հայերն ինչ-  
պէս որ կը դաւանին՝ նոյնպէս չեն հաւատար,  
ուստի ես ալ կը կասկածիմթէ չըլլայ որ անխո-  
հերութեամբ սխալ դատած ըլլամ, ես Ս. դահին  
Հայոց համար ոչ աղէկ և ոչ գէշ բան մը պիտի  
կընամ վկայել։ Մատթէոս Պատրիարք իմանալով  
որ Հասունեանը համողեր են դֆէրիէրի, առանց  
բան մ' արտասանելու իր հրաժարական ողջոյնը  
տալով կը հեռանայ, նոյնպէս և Ֆէրիէրի։ Նոյն  
օրերը «Համագեաց» անուամբ ընկերութիւն մը  
հաստատուեցաւ։

Հ. Համագեաց ընկերութիւնը կազմողները ո-  
րո՞նք էին։

Պ. Հռովմէական Հայոց ազգասէր և ուսումնա-  
սէր երիտասարդները լուսաւորչական Հայոց հետ  
խորհրդակցելով, ուզեցին ուսմունքը տարածել  
և ուսումնական վերակենդանութիւն մը տալ Աղ-  
դին, ամեն գաւառի և գիւղերու մէջ գպրոցներ  
բանալ, երկրագործութիւնը ծարկեցնել և Աղգա-  
յին հնութիւններու թանգարան մը հաստատել։  
Այս ընկերութիւնը կազմեցին՝ որուն կանոնագրու-  
թիւնը Միթթարեան միաբանութենէն Հ. Պետրոս  
վարդապետը խմբագրեց։ Քիչ միջոցի մէջ ընկե-  
րութիւնն այնքան ընդարձակեցաւ՝ որ անդամոց  
թիւը 600 ի կը համնէր։ Երբ Հասուն՝ Համագեեաց  
ընկերութեան քիչ ատենի մէջ այսչափ յառաջա-  
նալին ու ընդարձակուիլը տեսաւ, հեռատեսու-  
թեամբն իր միապետական ապադայ իշխանութեան  
նուատանալը նշարելով՝ անմիջապէս իր արքան-  
եակներովին ու համախոհներովին ընկերութիւնը  
կործանելու միջոցները սկսաւ խորհիլ։ Նախ ժո-  
ղովուրդը համողեց՝ ըսելով թէ Հռովմէական Ս.  
կըօնին գէմ է հերետիկոս Հայոց հետ ընկերու-  
թութիւն կազմել և հոգեւոր սիրով հաղորդակ-  
ցիլը, և թէ չեմք կընար արձակում և հաղորդու-  
թիւն տալ ձեզ մինչեւ որ այդովիտի վնասակար ըն-  
կերութենէ մը զզալով ետ չկննաք, քանզի այս  
ընկերութիւնը չէթէ միայն ձեր հոգւոյն և մարմ-  
նոյն վնաս է, այլ մեծ անարդութիւն է Ս. դա-

Հին: Հասուն միայն առող ալ դո՞հ չըլլալով իր կա-  
մացը համեմատ Հոռվմ զրեց և կոնդակ բերել  
տուաւ՝ վերջապէս ամեն ճիգ թափեց ընկերու-  
թիւնը կօրծանելու, և յաջողեցաւ. թէպէտ ըն-  
կերութիւնը շատ ընդգիմացաւ, բողոքեց 'ի Հը-  
ռովմ, բողոքեց նաև Ռ. Դրան, բայց անլսելի  
եղաւ: Աւստի հիմնադիրը ալ 'ի նախատինս Հա-  
սունի՛ քարուեկիր տուն մը շնիւլ տուին «Համազ-  
գեայ ընկերութեան կեղրոն» անուանելով: Այս  
չափի թշուառութեան և Հասունին ամեն մեքե-  
նաներուն անվեհեր դէմ զնողները՝ ըստ մեծի մա-  
սին Մուրատեան և Ռաֆայէլեան դպրոցներուն  
աշակերաներն էին:

Հ. Մուրատեան և Ռաֆայէլեան վարժարան-  
ներն ո՞վ բացած է և ո՞ւր են:

Պ. Պարոկաստանի Հայերը վաճառականութեան  
պատճառու Հնդկաստան՝ այն ամենահարուստ  
երկիրը զիմելով՝ գաղթականութիւն մը կազմեցին  
հոն, և իրենց ճարտարութեան ու յաջողակու-  
թեան համար, երկրին թաղաւորներն ալ մեծ  
մարդասիրութիւն կը ցուցնեն, ամեն տեսակ աղա-  
տութիւններ կուտան: Հայը այն անդ մեծամեծ  
պաշտօններու կը հասնին, մեծ աղջեցութիւն կու-  
նենան, և իրենց առեւտրտկան յաջողակութեամբը  
դրեթէ բոլոր երկրին տէր կըլլան: Երբ Անդ վացիք  
Հնդկաստան արշաւեցին Հայը աւելի յաջողութիւն

գանելու յուսով, Անդ զիացոց կօդնեն, բայց յ՛յ-  
սերնին 'ի դերեւ ենելէ 'ի զատ՝ ուր որ Անդ զիա-  
ցոց ձեռքն անցաւ, այն ունի վաճառականու-  
թիւնն ալ Հայոց ձեռքէն ելաւ: Ասնց մէջէն ե-  
րեւելի եղաւ Մատրասի Սամակէ Մուբատ աղ-  
գասէր և ուսումնասէր վաճառականը, որ մեծ  
գոմար մը կատակ ըրած է Հայոց աղդին աղքատ  
տղայոց համար վարժարան մը բանալ և ձրի գաս-  
տիարակելու նախատակաւ, վարժարանին միայն ու-  
սումնական մատակարարութիւնը Միկթազման  
Հարց յանձնելով: Այս վարժարանը՝ նաև 'ի Բա-  
տուա բացուեցաւ, և յետոյ 'ի վարիդ, Մուրատեան  
վարժարան անուանէ: Նոյնպէս Հնդկաստանի Աս-  
ֆայէլ վառարաննեան Հայ կաճառականը մեծ գո-  
մար մը կտակած է որ վէճնէ տէկի մէջ վարժարան  
մը բացուի, այս ալ առաջինին պայմաններովը,  
Առջունէ Հռչեարան անուանի: Բայց յու է մեզ  
որ Միկթարեանը յիշեալ բարերարներուն կամացը  
համեմատ՝ անխափի Հայ աղքատ պատանեաց չեն  
վոյեցներ այն մեծ շնորհը, բայց միոյն Հոռվ-  
մէական Հայոց, և այն ալ թաշակաս:

Հ. Հնդկաստանի Հայոց վրայ ուրիշ և նշ գի-  
տելիք կոյ:

Պ. Թէե Հնդկաստանի Հայ գաղթականութիւնը  
շատ պարզէ, բայց իրենց վաճառականութեամբը  
բոլոր երեւելի քաղաքաց մէջ աղքածուած է իւշ-

պէս Պօհպա , կալկաթա , Մատրաս , Պաթաւիա ,  
Սինկափոր և լին . և որպէս վաճառականութեամբ  
Նոյն քաղաքներուն մէջ երեւելի՝ նոյնպէս աղգա-  
սիրութեամբ ամբողջ Հայոց մէջ երեւելի եղած  
են : Երենց մէջ երեւելի ընկերութիւններ ունին ,  
որոց մէկն է Արարատէա ընկերութիւնը : Կալկա-  
թայի մէջ տպարան մ' ունի և բաւական դրքեր  
տպած է : 1850 Մարտական անուամբ ճեմարան  
մ' ալ կառուցած է , և Արքանէր անուամբ հմտա-  
լից օրագիր մը կը հրատարակուէր Մեսրովք Թաղ-  
եադեանցի խմբագրութեամբ : Այս ուսումնական  
անձն ուրիշ շատ հեղինակութիւններ ալ ունի :  
Հնդկաստանի մէջ երեւելի եղած է նաև Տիկին  
Մարիամ Յակոբեանի , որ իր ծախիւքը մօտ ատենա-  
ներս աղջկանց վարժապան մը հիմնած է 'ի Հընդ-  
կաստան . բայց ցատ է մեզ որ օրինաւոր առաջնորդ-  
ներ չունենալովնիս , թէ Հնդկաստանի և թէ Լե-  
հաստանի Հայութիւնն օր աւուր ոչնչանալու վրայ  
է . թէ պէտե մերթ ընդ մերթ Հնդկաստանէն  
նամակներ կը տեսնեմք լրադրաց մէջ , բայց լե-  
հաստանէն և միւս Երոպական քաղաքներու մէջ  
գանուող Հայերէն ոչ ոք տեղիկութիւն ունի :

Հ . Մատթէոսի Պատրիարքութիւնը ո՞րչոփ տե-  
սեց :

Պ. Ամեր այք , որ վարժուած էին ուղած տաեն-  
նին Պատրիարքներն ու առաջնորդները փոխել ,

Մատթէոս Պատրիարքի ալ կուպէին նոյն ընթացքը  
բոնել . բայց ժաղովրդէն ակնածելովնին բան մը  
չէին կլնար ընել : Նոյն օրերը Ճանիկ ամիրայի  
քոյրը կը մեռնի , Պատրիարքը՝ յուղարկաւորու-  
թեան հանդիսին անձնական տկարութեանը պատ-  
ճառաւ ներկայ չդանուելուն՝ ձանիկ ամիրայ կը  
թշնամանայ Պատրիարքին հետ . նոյնպէս կը թշ-  
նամանայ Միսակ ամիրայ որ Բերայի եկեղեցւոյն  
կալուածներէն մին , ուր վերջին Արևելան թա-  
րոնը կանդնեցին , կուղէր Գայիանեանց դպրոցի  
շնութեանը համար տուած ստակին փոխարէն  
առնել : Ուստի Մատթէոսի 25,000 զրչի արժու-  
զութեամբ մուշտակ մը կը զրկէ , Պատրիարքը  
չընդունիր . և անմիջապէս Բերայի եկեղեցւոյն 8.  
Զաքարիա քահանան կամակալով կիմացնէ . այն ալ  
ժողովրդեան իմացնելով եկեղեցւոյն Մէ-Ռէ՛ւլ-  
-Ռէ՛ւլ- Միսակէն կ'առնուի , և Ցատեան Պօղոսի  
կը յանձնուի : Ասոր վրայ ամիրայից մէջ Պատրի-  
արքին թշնամիները շատնալով յողովին կողմէն  
երկու անդամ հրաժարականը կուռուի . Մատ-  
թէոս՝ Ես ժաղովրդեան ձայնավը Պատրիարք եղած  
եմ և միայն ժաղովրդեան ձայնովը կը հրաժարիմ ,  
կը պատասխանէ : Ամիրայք տեսնելով որ չպիտի  
կարենան հրաժարեցնել , կը համբերն , և արիշ  
գէպքով մ' առիթ կը դանեն հրաժարեցնելու :  
Օտեան Պօղոս ամիրան Պատրիարքի ձեռապէ 50

Հաղար զրչ կը նուիրէ Քարտակէ օմքիւկի եկեղեց-  
ւոյն և դպրոցին , միանդամայն կաղացէ որ մարդ-  
չմանայ : Ճէզայիրլեան՝ Պատրիարքին երթալով  
կուզէ իմանալ նույիրառուին ո՞վ ըլլալը . Մատ-  
թէոս խոստովանութիւն մ' ըլլալուն համար չու-  
ղեր յայտնել . ճէզայիրլեան կը բարկանայ և թէշխտ  
բաշայի երթալով Պատրիարքին հրաժարիլը կը  
խնդրէ . Թէշխտ բաշա Կրծիկեանի ձեռամբ Պատ-  
րիարքին հրաժարականը կը խնդրէ . Մատթէոս  
Պատրիարք զղուելով ամիրայից վատ ընթացքէն  
1 Հոկ . 1848 ընդհանուր ժողով կը գումարէ Մայր  
եկեղեցին , հրաժարականը կուտայ Յ տարի Պատ-  
րիարքութիւն ընելքն յետոյ :

Հ. Մատթէոսի ո՞վ յաջորդեց :

Պ. Մատթէոս Պատրիարքի հրաժարական տուած-  
օրը ժողովուրդը շատ կը դիմանայ , բայց վեր-  
ջապէս դինեալան իսկէնտէրի առաջարկութեամբը  
Յակոբոս նախկին Պատրիարքը կընտրուի վերստին ,  
Ժողովրդեան և ամիրայից հաճութեամբը : 1 Նոյ .  
1848 Եւգուիիայէն դալով կըսկսի Աղդը կառա-  
վարել : Ասոր օրով Աղդն աւելի շարժում ընել  
սկսաւ , մանաւանդ դաւառներու մէջ առ հասա-  
րակ Հայոց մէջ մտաւորական շարժում կերեւնար :  
Յակոբ Պատրիարք իր խորհրդականներովն Աղդին  
դիշերօթիկ վարժարանի մը ոլէտըն անհրաժեշտ  
զգալով իւսկիւտարի Ճեմարանը վերստին բանալ

կուտայ , որով թաղական դպրոցներու յառաջա-  
դէմ աշակերտները , փոխանակ թոշակաւ օտար  
աղդաց դպրոցները յաճախիւլու , այն տեղ կը դի-  
մէին : Նոյն տարին նաև Եկտի գուլէի Ս . Փրկչի  
վանուց մէջ նախսակրթական դպրոց մը բացուե-  
ցաւ , պանդուխտ , աղբատ , որբ և անպաշտուան  
տղայոյ համար . բայց քիչ մը վերջը Ճեմարանին  
ծախուց չկրնալով առկալ , Ճեմարանին կահ կա-  
րոսակը աշակերտաներով մէկ տեղ Ս . Փրկչի վանքը  
կը փոխադրուի , և կըսկսի Փրկչեան վարժարանը  
ծաղկիլ զանազան ուսմանց և լեզուաց դաստիօ-  
սութիւններով . ուստի Կաթողիկոսը Յակոբ Պատ-  
րիարքին աղդասիրական դործերն և Աղդին ու-  
սութիւններու վերակենթանութիւն տալու համար  
աշխատութիւններն իմանալով , մեծադին՝ Փրկչին  
և Աւետարանչաց պատկերներով զարդարեալ մար-  
դարտսղարդ կոնքեռ մզ , և Զմբուռնիոյ եկեղեց-  
ւոյն նպաստելու համար 1,000 Բոլ էմբէրիալ կը  
զրկէ : Նոյն օրերը Երուսաղէմի եկրակոս Պատրի-  
արքը վախճանելով իրեն կը յաջորդէ Զմբուռնացի  
Յովհաննէս եպիսկոպոս : Նոյնողէս Յակոբ պատ-  
րիարքի օրով 1 Յունիս 1852 իրարու հակառակ  
երկու պարսաւագիրք կը տեսնուի Հայոց եկե-  
ղեցւոյն դէմ , որուն մին Հասունի կողմէն զՄիփ-  
թարեանս հերետիկոս , հերձուածող , Հայոց կողմ-  
նակից և առ երեսս Հռովմէական են ըսելով կը

բամբասէր . միւսը Մխիթարեանց կողմէն , որ Հայոց եկեղեցին հերետիկոս , հերձուածող հրատարակելէն ՚ի զատ ինքովնքն ալ կատարեալ Գաթոլիկ և ամենամերմեռանդ ծառայ Հռովմայ եկեղեցւոյ կը հրատարակէր , որ քիչ շփոթութիւն չպատճառեց Հռովմէական Հայոց մէջ . սոսոր համար Հասուն քաղաքական Պատրիարքութենէ հրաժարելով սկսաւ միայն հոգեւոր իշխանութիւնը վարել և իրեն յաջորդեց Սէլլեան : Բայց քիչ մը վերջը Սէլլեան Պատրիարքութիւնը ձգելով , Կանկոնեան Նիկողայոս վարդապետն աշխարհական Պատրիարք եղաւ 12 նոյ . 1852 :

Հ . Յակոբ Պատրիարքի օրով ի՞նչ երեելի դէպք պատահեցաւ :

Պ . Կարաւուտ վարդապետ Շահնազարեան , որ բաւական ատեն Փարիզ հաստատած էր բնակութիւնը , իր երեելի տաղանդովը և լեզուագիտութեամբ Փարիզի քանի մ' երեելի ընկերութեան անդամ ըլլալով Ասպետութեան պատուանշանին կարժանանայ , և Նաբոյէն Էրյանէր հրամանաւ Փարիզի մէջ մատուռ մը կը հաստատէ՝ Հայաստանեւոց եկեղեցւոյ արարողութեանց ծխսից համեմատ , և կրոկի պատարագել , հոն զտնուող լուսաւորչական Հայերն իրենց պաշտամունքէն չը զրկելու համար : Այս միջոցին չ . Պարիզէլ Այգիւրութիւն կամբասէն , չ . Սարցիս թէոդորոսիութիւն որութիւն ու ուղարկեան ՚ի սուգ ընկղմեցաւ :

Ե . Խորէն Գալֆաեան վարդապետները , կը հրաժարին վենետիկոյ Մխիթարեան միաբանութենէն և Հայաստանեայց եկեղեցին կը յարին , ընդունելով անոր դաւանութիւնը , և կըսկին Մարտան Ալեւէ անուամբ լրագիր մը հրատարակել , նոյնպէս վարժարան մ' ալ կը բանան Արեւելքու բարձրելու վարժութան անուամբ , և կըսկին դասախոսութեան սոյն վարժարանին մէջ , ուրկէ բաւական աշակերտներ կը հասցունեն . բայց քիչ մը վերջը , իրենց մէջ անհամաձայնութիւն տիրելով դպրոցը կը դացուի , և աշակերտներն ալ ցիրուցան կըլլան , որով պատճառ կըլլան Ազգին վրայ մեծագումար պարտք մը ձգել : Թէսկետ՝ թէ՛ այս դպրոցին կանգուն შնարուն՝ և թէ Փարիզի Մուրատեան վարժարանն ամբողջ Հայ աղղին աղքատ տղայրը դաստիարակութելուն համեր եղած կտակն ամբողջապէս գործագրել տալու համար շատ աշխատեցաւ աղղասէր Հայ ամիրայ մը , սակայն հոն ալ ճիղուէթութիւնը՝ մասնաւորապէս մեր ազգին ժանտախալը վերսախին յաղթանակեց , Նոյն օրերը 1857 Փետր . 13 վախճանեցաւ Նիկոսէս ընդհանուր Հայոց սուըր Հայրապետը Զկ տարեկան հասակին մէջ Ակ տարի Հայրապետութիւն ընկելէն ետքը , և Ազգը որ մեծ ակնկալութիւններ ունէր այս սրբազն անձէն , անոր յանկարծական մահամական ՚ի սուգ ընկղմեցաւ :

Հ. Ներսէս Կաթուղիկոսի ովլ յաջորդեց :  
 Պ. Այս անդամ ընտրութիւնը Տաճկաստանի Եւ  
 պիսկոպոսաց վրայ ձղուելուն , 1858 Ապրիլ ամ-  
 սոյն մէջ կրօնական և աշխարհական անձերէ ընդ-  
 հանուր ժողով գումարուելով երեք արժանաւոր  
 անձնը կընտրուին , որք են Յովհաննէս Պատրի-  
 արք Երուսաղէմի , Մատթէոս Նախկին Պատրիարք  
 կ . Պօլոյ , և Գէորգ արքեպիսկոպոս առաջնորդ  
 Պրուսայու , և իրենց կողմէն երկու Տփիսիեցի  
 Եշխաններ Երեսփոխան ընտրելով կը զբկեն Ս.  
 Էջմիածին Տաճկաստանի Հայոց կողմէն Կաթո-  
 ղիկոսութեան քուե տալու : Եւ 1858 Յունիս 18ին  
 Մատթէոս արքեպիսկոպոս՝ Նախկին Պատրիարք  
 կ . Պօլոյ՝ ընդհանուր Հայոց Կաթուղիկոս կընտ-  
 րուի : Այս ընտրութիւնը նախ Ռուսաց Կայութը կը  
 վաւերացնէ և գեսպանատան միջոցաւ նոյն տար-  
 ոյն Օդոսառա 11ին Բ. Դրան կիմացնէ Մատ-  
 թէոսի ընդհանուր Հայոց Կաթուղիկոսութիւնը .  
 և Բ. Գուռը Հնորհաւորելով , կը Տրամայէ նախ  
 թէ՝ երր որ ուղէ կընայ Երթալ ՚ Ս. Էջմիածին :  
 Նոյն օրին կըսկսի յիշուի նորընտիր Հայրապետու-  
 նանուը բոլոր եկեղեցից մէջ , Դեկտ . 18ին Էջ-  
 միածնայ կողմէն Մակար եպիսկոպոս և Երկու  
 վարդապետ Հրամիրակ կուղան . նոյնպէս 1859  
 Ապրիլ 20 Ռուսաց Կայսեր կողմէն Հրամիրակ կու-  
 գան գումարք Միքայէլ Լորիս Մէլքոն Հոյ գործ-

պէտք իր բանակին օդնական Հայաղդի Միքայէլ  
 Միանաւորովի հետ , որոնք խիստ մած պատուով  
 ընդունուեցան թէ Ազգին երեւելի իշխաններէն  
 և թէ ուսումնականներէն : Դանի քանի անդամ  
 կոչուեցներ տրուեցան թէ Քերա , թէ Օքթագիւղ  
 և թէ Գէշիկլաշ . բայց ասոնց ամենը գերազան-  
 ցեց Բէրայի Օբէւու Պէտան անուն օժեւանին կո-  
 չունքը : Բոլոր Հայ ուսումնականը ներկայ էին ,  
 և մեր Օգոստավիառ Սուլթանին և Վեհ . Կայսեր  
 Ռուսաց բարեմազգեւութիւններ եղան : Նոյնպէս  
 Անդ վիացւոց Դեսպանն իր գեսպանատան մէջ վա-  
 սաւուոր Հայկերոյթ մ' ըրաւ ՚ ի պատիւ Վեհ . Կա-  
 թուղիկոսին և Վահամ . Միքայէլ զօրապետին . հոն  
 ներկայ էին Ռուսիոյ , Պէլճիքայի Դեսպանք և Պօ-  
 զոս պէյ Տատեամ :

Հ. Յակոբ Պատրիարքի իշխանութիւնը ո՞րչափ  
 ուեւեց :

Պ. Յակոբ Պատրիարք Օ տարի և 9 ամիս Ապրիլ  
 կառավարելէն Ետքը իր ծերութեանը պատճառաւ  
 իր Հրամարի 1858 Հոկտ . 7 ին : Թէե Ժողովուրդը  
 մէծ ցաւ կղդայ այնպիսի աղդասէր և ուսումնա-  
 պէր հովուէ մը զրկուելուն վրայ , բայց ժողովա-  
 կանը կը վատահացունեն զժողովուրդը թէ իրեն  
 յաջմուղող նորընտիր Գէորգ Պատրիարքը՝ Յակոբ  
 Պատրիարքի ընթացքէն չը պիտի շեղի : Ասոր օրով  
 Պատրիարքի կուղայ Ռուսաց Կայսեր եղբայրը կոս-  
 ի . Պօլս կուղայ Ռուսաց Կայսեր եղբայրը կոս-


ասանդիամոս մեծ դուքսը , որ ընտանեօք Ս. Երու-  
սաղէմ գայցած և Հայոց Ս. Յակովիրայ վանքին այ-  
ցելութիւն ընելով Յովհաննէս Պատրիարքէն շատ  
սիրով և մեծ պատուով ընդունուած էր : Վեհա-  
փառ Հայրապետան ընկերակցութեամբ Գէորգ Պատ-  
րիարքի և Պօղոս պէյ Տատեանի այցելութեան  
կերթայ և մեծ սիրով կընդունուի . և կը խնդրէ  
նաև մեծ Դուքսը , որ եթէ կաթուղիկոսը հաճե-  
լու ըլլայ՝ միատեղ ճամրորդեն ՚ի Ս. Էջմիածին .  
և կաթուղիկոսը մեծաւ չնորհակալութեամբ կըն-  
դունի այս հրաւերը : Նոյնպէս Օդոստափառ Սուլ-  
թանը վեհ , կաթուղիկոսին երթալն իմանալով կը  
հրաւիրէ իր պալատը , և կաթուղիկոսը մեծ ըն-  
դունելութիւն գտնելով կը վերադառնայ յՈրթա-  
գիւղ ձանիկ ամիրայի տունը : Եւ հետեւեալ օրու  
1859 Յունիս 2 ճամբայ կելլան , ուղեկցութեամբ  
Սարդիս եպիսկոպոս Անդրիանուորուեցի և Սար-  
դիս վարդապետ Թէոդորեանի , մասնաւոր շոդե-  
նաւով , որ Նիքոլայէֆէն Կոստանդիանոս մեծ  
Դուքսը բերել տուած էր վեհ . կաթուղիկոսին  
համար : Նոյն օրերը Հ. Գարբիէլ Այլաղեան , Փա-  
րիզէն Ռուսաստան կերթայ և կայսեր հրամանա-  
նաւառաջնորդ կը կարգուի Նախջեւանայ , Պե-  
տարապիոյ և Ղրիմու , Հայաստանեայց Ա. Եկե-  
ղեցւոյ գրութեանը հակառակ : Հ. Գարբիէլ Թէո-  
դոսիայի մէջ զիշերօթիկ վարժարան մը կը բա-

ՀՅ Ազգային գրադարան



NL0000940

ՀՅ Ազգային գրադարան



NL0000939

ՀՅ Ազգային գրադարան



NL0000862

0000862

4783  
4784  
4785

2213

